ՀԱՅԿԱԿՆ



1906 ՓԵՏՐՈՒԱՐ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓԵՏՐՈՒԱՐ 1906 Թ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

1. Պաշտօնական հեռագիրները 99
2. Քաղուածք ի կոնդակաց Վ.Ե.Տ. Հայրապետի. . . 100
3. Քաղուածք Սինոդի օրագրութիւններից. . . 105

ԿՐՕՆԱԿԱՆ

4. Հին, բայց միշտ նոր և չը յուծուած խնդրի առթիւ Ե. Ծ. վ. Մ. 107
5. Մարդը Ե. Ծ. վ. Մ. 114

ՄԱՏՐ ԱԹՈՌ 115

ՏԱՃԿԱՀԱՅՑ 118

ԱՑԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

6. Ռուսական եկեղեցի. 120
7. Վրաց եկեղեցի. 125
8. Կաթոլիկ եկեղեցի. 125
9. Բողոքական եկեղեցի. 126

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

10. Սուկաւ կամ Սուկաւէտ. Բարդ. եպս. Գէորգեան . 127
11. Ուզղելի մի կէտ Փաւստոս Բիւզանդի պատմութեան մէջ. Զ. 129
12. Մատենախօսութիւն. Էմմ. քահ. Նազարեանց . 132

ԳԻՏԱԿԱՆ

13. Հոգեբանութեան տեղը գիտութիւնների շարքում. Պրօֆ. Ի. Գ. Օրշանսկի Ե. Ծ. վ. Մ. . 147
14. Անապատականներ և վանականութիւն. Ճուսիկ եպս. 161
15. Կոմմունիզմ. թարգմ. Ի. Ս. 169
16. Խօսքի և մտմտալի ազատութիւն . . . 176
17. Տրապիզոնի հայ գիւղացու կեանքը. Ս. Հայկունի 180

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ 190

Ա Ր Ա Ր Ա Տ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1906—ՌՅԾԵ

Տարի Լ՚.	ՓԵՏՐՈՒԱՐ	Համար Բ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

Հրամանաւ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԹԱԳՈՒՀԻ ԿԱՅՍՐՈՒՀԻ ՄԱՐԻԱ ՅԵՕԴՈՐՈՎՆԱՅԻՆ.

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ (ԴԱՆԻԱ)

Ստանալով Ձեր պատկառելի ծնող՝ Նորին Մեծուծութեան թագաւոր Խրիստիանի մահուան տխուր լուրը, խորին ցաւակցութիւն եմ յայտնում Ձեզ, ամենաբարեպաշտ թագուհի։ Կ'աղաչեմ Ամենաբարձրեալին ընդունել նորոգ հանդուցեալի հոգին երկնից օթևաններում և Ձեզ այժ պարգևել համբերութեամբ կրելու Ձեր ծանր կորուստը։

22 Ն-յունվարի.

ՄԿՐՏԻՉ Ա.. Կաթուղիկոս ամենայն Հայոց.

ԹԻՖԼԻՉ

ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Անկեղծ չնորհակալ եմ Ձերդ Սրբութեան հովուապետական աղօթից և ցաւակցական ղզացմանց համար ինձ հասած մեծ վշտի առթիւ, որ արտայայտած էիք Ձեր հեռագրում, որից ես մեծապէս ղզացուած եմ։

ՄԱՐԻԱ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Հոգևոր կառավարութեան Աղէքսանդրապօլու, որով պատուիրեցաւ յարուցանել զողջոյն արդիւնս մոմավաճառութեան վիճակին՝ եկեղ. Ծխական Սահականուշեան օրիորդաց դպրոցի Ս. Նշան եկեղեցւոյ տեղւոյն։ Թ. 964. Հոկտ. 16.

— Յանուն Մանջուրիա կայարանի, որով կարգեցաւ տ. Ընձակ վարդապետեան ժամանակաւոր քարոզիչ հայ ժողովրդեան տեղւոյն և պատուիրեցաւ հոգալ ղճանապարհածախս և զապրուստ վարդապետին։ Թ. 966.

— Յանուն վիճ. կոնս. հայոց Շամախու, որով պատուիրեցաւ ազատ համարել զտ. Ընձակ վարդապետեան ի պաշտամանց անդամոյ Ատենին և վանահօր ս. Ստեփաննոսի վանուց Սաղիանու և յանձնել զհաշիւս վանուցն տ. Մարտիրոս քահանայի, տալով փոխարինաբար 200 րուբլի ճանապարհածախս վարդապետին ի գնալ ի Մանջուրիա։ Թ. 967.

— Յանուն Տ. Յուսիկ եպիսկոպոսի, որով կարգեցաւ փոխանորդ Թեմականին Երևանայ ի տեղի տ. Կարապետ վարդապետի և պատուիրեցաւ ստանալ ի նախորդէն զամենայն գործս և զհաշիւս։ Թ. 968.

— Յանուն տ. Կարապետ վարդապետի, որով ըստ խնդրանաց իւրոց ազատ կացուցաւ ի պաշտամանէ փոխ Թեմականին հայոց Երևանայ և կարգեցաւ ուսուցիչ Ատա-

ուածաբանական դիտութեան ի հոգևոր ճեմարանի Մայր Աթոռոյս։ Թ. 975.

— Ընդունի Սինոդի ս. Էջմիածնի, ընդ որում յղեցաւ հաստատեալ նախահաշիւն Մայր Աթոռոյ վասն 1906 ամի, պատուիրելով նմին ի կիր արկանել զայն։ Թ. 978.

—Շրջաբերական կոնդակ յանուն Թեմ. առաջնորդաց, որով պատուիրեցաւ զղասս կրօնի հայոց ի պետական զպրանոցս ի 1906 ամէ յանձնել այնց հոգևորականաց, որք ունին զվկայական ի Թեմ. հոգևոր դպրանոցաց և թիւ դասուց պարտի լինել առաւելն ի չաբաթու 20։ Թ. 1015

— Ընդունի տ. Մխիթար վարդապետի, որով կարգեցաւ տեսուչ տպարանի Մայր Աթոռոյս։

— Ընդունի պ. Ռուբանայ Ռուբանեանց բնակելոյն ի Ռոստով, որով հաստատեցաւ կանոնադրութիւն կրթասիրաց ընկերութեան Սալմաստի։ Թ. 1075.

— Ընդունի տ. Գարեգին արքեպիսկոպոսի Նախագահի հոգաբարձութեան Մարիամեան Յովհաննեան դպրոցի հայոց Տփխեաց, որով հաստատեցան ընտրել անդամք հոգաբարձութեան եռամեայ ժամանակաւ։ Թ. 1077.

— Ընդունի նորին, որով պատուիրեցաւ կարդադրել զարդիւնս Մողնուոյ ս. Գէորգ եկեղեցւոյ քաղաքին բաշխել մի միայն միաբան քահանայից՝ առանց Գրիգոր ա. քահանայի Տ. Բարսեղեան, որ չէ միաբան եկեղեցւոյն. Թ. 1078.

— Ընդունի նորին, որով պատուիրեցաւ յաւելուլ զոռճիկ ծառայողաց Կոնսիստորիայի վիճակին, տալ միանուագ իւրաքանչիւրում նպաստ տուրլիս յիսունական (50) և սահմանել միջոց զբաշման յաւուրն վեց ժամ։ Թ. 1079.

— Ընդունի տ. Նահապետ եպիսկոպոսի, որով կարգեցաւ լիազօր ի կողմանէ Նորին Սրբութեան վասն ստացման գործակցութեամբ տ. Եփրեմ վարդապետի կալուածոց

և դրամադլխոց վանուցն ս. Էջմիածնի, որ ի Տփխիս՝ թ. 1081.

— Երջաբերական կոնդակ թեմակալ առաջնորդաց, որով պատուիրեցաւ յայտնել զամենատեսակ աթոռային և ղվիճակային արդիւնս մատուցանել Սինոդի սրբոյ Էջմիածնի ըստ առաջնոյն։ թ. 1096—1100.

— Ցանուն Ղևոնդ Եպիսկոպոսի՝ լուսարարապետի Մայր տաճարի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ նմա տալ Թորչն աբեղայի Լազարեան զմանաւոր կոչումն վարդապետութեան և զվկայականն առաջի առնել ի հատատուքիւն Սինոդի ս. Էջմիածնի։ թ. 1104.

— Ցանուն հոգևոր կառավարութեան հայոց Աղէքսանդրապոլի, որով պատուիրեցաւ յատկացուցանել զերկու երրորդ մասն արդեանց Եօթն վիրաց պատկերին ի պահպանութիւն եկեղ. Ծխական դպրոցին յանուն ս. Լուսաւորչի։ թ. 1107.

— Ցանուն ամենապատիւ Պատրիարքի հայոց Թուրքիոյ վասն լուծման պակաց Սարգսի Ծէրտէրեան ընդ կնոջն Եղնիկի, որով տուան իրաւունք առն մտանել ի նոր ամուսնութիւն. Մուշեղայ Իսկէնտէրեան ընդ կնոջն Իսկուհւոյ, արտօնելով երկուսից եւս մտանել ի նոր ամուսնութիւն. Հայրապետի Թոնիրշինողեանց Վանեցւոյ ընդ կնոջն՝ տալով իրաւունս ամուսնութեան միայն կնոջն. Մանուելի Շնորհքեան ընդ կնոջն Մաննիկի, տալով իրաւունս ամուսնութեան միայն կնոջն. Աստղոյ Դուլումճեան ընդ կնոջն Անթառամայ, արտօնելով իրաւունս ամուսնութեան միայն կնոջն։ թթ. 1122—1127.

— Ցանուն փոխանորդին Աղէքսանդրապոլոյ տ. Կիւրեղ վարդապետի, որով ազատ համարեցաւ ի պաշտամանէն։ թ. 1133.

— Ցանուն տ. Արսէն վարդապետի Ղլտճեան, որով կարգեցաւ Փոխանորդ վիճակին հայոց Աղէքսանդրապօլսւ։ թ. 17.

— Ճանուն տ. Եփրեմ վարդապետի Սուքիասեանց, որով կարգեցաւ կառավարիչ Էջմիածնական կալուածոց Տփխեաց։ Թ. 31.

— Ճանուն տ. Բենիկ վարդապետի, որով կարգեցաւ ղեկավար դպրոցաց Քիշինեւի ըստ առաջարկութեան Տ. Ներսէս արքեպիսկոպոսի։ Թ. 52. յունվ. 22.

Բ.

Հայրապետական օրհնութիւնք եւ գոհունակութիւնք.

Կոնդակ յանուն տ. Ընձակ վարդապետի, որով շնորհեցաւ իրաւունք կրելոյ վարդապետական լանջախաչ։ Թ. 968.

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Գրիգորի Ամիրեան երևանցւոյ վասն կառուցման ծախիւք իւրովք նոր եկեղեցւոյ ի նոր գերեզմանատան քաղաքին և կարգեցաւ ցմահ երեսփոխ և տեսուչ նոյն եկեղեցւոյ։ Թ. 1021.

— Լանջախաչի յանուն Ռափայէլ քահանայի Տ. Գէորգեան Ներքին Ախտա գեղջ։ Թ. 1022.

— Լանջախաչի, յանուն Ղուկաս վարդապետի Էվջիլարու։ Թ. 1023.

— Լանջախաչի յանուն Արտակ վարդապետի։ Թ. 1025.

— Նոյն յանուն Լևոն վարդապետի։ Թ. 1026.

— Լանջախաչի յանուն Յակոբ քահանայի Տ. Մկրտչեան Նորքայ։ Թ. 1024.

— Կամիլաւկայի յանուն Վահան քահանայի Տ. Յովհաննիսեան Ն. Բայազիդի։ Թ. 1027.

— Կամիլաւկայի յանուն Ներսէս քահանայի Բալագեօզեան Ն. Բայազիդի։ Թ. 1028.

— Կամիլաւկայի յանուն Յովհաննէս քահանայի Վիրապեան Աւդիքէկ գեղջ. Թ. 1029.

— Օրհնութեան յանուն բժշկապետ պ. Բագրատայ Նաւասարդեան՝ առթիւ քսանևհինգամեկի հիմնեալ առաջին մանաւոր հիւանդանոցի նորին. Թ. 1072.

— Օրհնութեան յանուն եղբարց Դրիգորի և Կարապետի Բայբուրդեանց Ախալցխացւոց, վասն նուիրելոյ յօժարութեամբ սրտի իւրեանց զմի հազար րուբլիս ի յիշատակ հանգուցեալ հօրն իւրեանց Մանուկայ. Թ. 1089.

— Օրհնութեան յանուն Ստեփաննոսի Մամիկոնեան վասն օգտակար ծառայութեան նորա առ Վեհ. Հայրապետեան և առ Մայր Աթոռն ս. Էջմիածնի.

— Ցանուն Գէորգ Ծ. վարդապետի Իբրանոսեան՝ առաջ. տեղապահին Բաբերդի, որով շնորհեցան նմա իրաւունք կրելոյ զվարդապետական լանջախաչն. Թ. 1128.

— Օրհնութեան յանուն բարեպաշտօն անդամոց յանճնախմբի հայ գաղութի Պրաքթընի, վասն ստացման վաթսուն դոլարի յօգուտ հայ արկածելոց Կովկասու. Թ. 12. Յունվ. 7.

— Ցանուն ժողովրդեան Վունսօքթ քաղաքին Ամերիկայի, վասն ստացման 75 դօլլարի և 35 սէնթի ի նպաստ կարօտելոց Կարնոյ. Թ. 13.

— Ցանուն որբախնամ յանճնախմբի Տովըրի, վասն ստացման հինգ անգլիական ոսկւոյ ի նպաստ հայ որբոց. Թ. 14.

— Ցանուն հայ գաղութի Պոսթոնի և շրջակայից նորին վասն ստացման 137 դոլլարի և 65 սէնթի ի նպաստ հայ արկածելոց Կովկասու. Թ. 65.

— Օրհնութեան յանուն Խաչատրոյ Թայմիզեան Ախալցխացւոյ վասն նուիրաբերելոյ նորա մի հարիւր ռուբլի Վեհ. Հայրապետի ի յիշատակ հանգուցեալ հօր իւրոյ մահտեսի Յովակիմայ. Թ. 39. Յունվ. 18.

ԿԱԼՈՒՍՏՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Դեկտեմբերի 30-ին Սինօդը որոշեց հոգևորականութեան մէջ ընդունել Կարսի շրջանի Մեծ Փարկիթ գիւղի բնակիչ Աղեքսանդր Մելիք Սարգսեանին և ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի վրայ, որի մասին և հրամանագրեց Երևանի Փոխ Թեմակալին։

Նոյն թուին հոգևորականութեան մէջ ընդունեց Կարսի շրջանի Ուզունքիլիսա գիւղի բնակիչ Սարիբեգ Տէր Յովհաննիսեան Մահտեսի Դէորգեանին նոյն գիւղի ժողովրդի վրայ քահանայ ձեռնադրելու, որի մասին հրաման տուաւ Երևանի Կոնսիստորիային, պատուիրելով ձեռնադրութիւնից յետոյ տեղեկացնել Թիֆլիզի տեղական բրիգադի գլխաւորին, նրա անունը պահեստի զօրաց ցուցակից հանելու։

Յունվարի 3-ին Սինօդը որոշեց մերժել Երևանի Կոնսիստորիայի խնդիրը եկեղեցական հաշուառես վարձելու մասին։

Նոյն թուին Սինօդը որոշեց ժամանակաւոր գանձապահ կարգել տ. Համազասպ վարդապետին՝ մինչև վերադարձը Հայրապետի գալուստը և հրաման տալ Մատթէոս վարդապետին յանձնելու նրան բոլոր հաշիւները և հետևանքի մասին յայտնել Սինօդին։

Յունվարի 11-ին Սինօդը ստանալով Նորին Պայծառափայլութեան Կոմս Փոխարքայի հաճութիւնը, հրամայեց կարգել Երևանի Կոնսիստորիայի նախանդամ Լևոն վարդապետ Փերեանին Հին Նախիջևանի, իսկ Թովմա վարդապետին Ղզլարի փոխանորդ։

Յունվարի 16-ին Սինօդը ստանալով Տփխիսի պ. Նահանգապետի հաճութիւնը, հրամայեց կարգել տ. Ովսաննէս վարդապետին դործակալ Ախալքալաքի և նշանակել

նրան տարեկան 600 րուբլի, բնակարան յատկացնել եկեղեցիների հաշուով և կահկարասիքը յանձնել ցուցակի համաձայն։

Յունվարի 18-ին Սինոդը մերժեց Դեօզալդարա գիւղի բնակիչների խնդիրը Աբաէն Տէր Մխիթարեանին հոգևոր կոչման մէջ ընդունելու և վկայականները վերադարձրեց Երևանի Կոնսիստորիան։

Նոյն թուին Սինօդը որոշեց հոգևորականութեան մէջ ընդունել Սիմէօն Մատթէոսեանցին Կարմիր-Խարաբա գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու և այս մասին հրամանագրեց Երևանի Կոնսիստորին։

Նոյն թուին Սինօդը որոշեց հոգևորականութեան մէջ ընդունել Ղուլիդիդան գիւղի բնակիչ Ղևոնդ Տէր Եփրեմեան Մելիք Սարգսեանին և ձեռնադրել օգնական Ծիրանի Վրթանէս քահանայի, Աղբաշ գիւղի բնակիչ Արտաշէս Տէր Դաւթեանցին և ձեռնադրել նրան քահանայ նոյն գիւղի վրայ, Քալարա գիւղի բնակիչ Յովհաննէս Տէր Յովհաննիսեանցին և ձեռնադրել քահանայ յիշեալ գիւղի վրայ. Ղզլքիլիսա գիւղի բնակիչ Յարութիւն Տէր Մկրտչեանին նոյն գիւղի վրայ, որոնց մասին և հրամանագրեց Երևանի Կոնսիստորիային։

Յունվարի 26-ին Սինօդը ստանալով Բաքուի Նահանգապետի հաճութիւնը նշանակեց տ. Հմայեակ վարդապետին նախանդամ Շամախու Կոնսիստորիայի և վանահայր Սաղիանի վանուց։

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԻՆ, ԲԱՑՑ ՄԻՑՏ ՆՈՐ ԵՒ ՉՔ ԼՈՒԾՈՒՒԱԾ ԽՆԴՐԻ ՈՒՐՈՒԱ

Աբրահամի յունվարի համարում ս. Սինոդի հրամանով մենք տպագրեցինք քահանայացուների ընտրութեան և պատրաստութեան կանոնների ծրագիրը, որի օրինակները ուղարկուած են ամենայն տեղ և առաջնորդները ժողովները կազմեն հոգևորական և աշխարհական ձեռնհաս անձերից, քննեն այդ ծրագիրը,—գրաւոր կարծիք յայտնեն նրա մասին և երեք ամսուայ ընթացքում իրենց վերջնական եղրակացութիւնն ուղարկեն Սինոդ։ Նոր ծրագիրը նախ որոշում է, որ իւրաքանչիւր համայնք կարող է սեպհական քահանայ ունենալ. (յօդ. 1), ապա ցոյց է տալիս, թէ ինչ դէպքերում կարող է յարուցուիլ երկրորդ քահանայի խնդիրը. (յօդ. 2)։ Այնուհետև ծրագիրը սահմանում է ընտրութիւնների ձևական մասը, գործառնութեանց ժամանակամիջոցը, հասոյթների որոշումը, հարկաւոր վկայականները, ատորագրութիւնը և այլն. (յօդ. 3—15)։ Ապա որոշում է, որ 300 հոգից պակաս ծուխ ունեցող համայնքի քահանայացուն գոնէ երկդասեան ծխական դպրոցը պէտք է աւարտած լինի կամ միջնակարգ դպրոցի երկրորդ դասարանի աւարտման վկայականը պէտք է ունենայ եւ պէտք է լրացուցիչ քննութիւն տայ. ա) կրօնագիտութիւնից,—եկեղեցւոյ խորհուրդները, աստուածպաշտութեան կարգը. բ) տօնացոյցի գործածութիւնը. գ) Հայոց եկեղեցական պատմութիւնից մանրամասն մինչև Ե. դարը. դ) երգեցողութիւնից, շարականների և տաղերի անսխալ երգելը համաձայն հնի կամ ձայնագրեալ շարականի։ Ծանօթութեան մէջ ասուած է,

որ երրորդ դասարանի վկայական ունեցողներից նոյնպէս պահանջւում է լրացուցիչ քննութիւն։

Աւաններում և փոքր քաղաքներում, որոնք ունեն 300 հոգից աւելի, քահանայացուն պէտք է ունենայ առնուազն թեմական դպրոցի չորրորդ դասարանի աւարտական վկայական, առանց լրացուցիչ քննութեան։ Նահանգական և գաւառական մեծ քաղաքներում քահանայացուները պարտաւոր են ունենալ առնուազն թեմական դպրոցի աւարտման վկայական և նմանապէս չեն ենթարկւում լրացուցիչ քննութեան (յօդ. 17 և 18)։ Մնացած ութը յօդուածները որոշում են ընծայացուների հասակը և քննութեան տեղն ու քննողների կազմը։

Ահա այս է քահանայական բարդ, հին, բայց միշտ նոր և չլուծուած խնդիրը լուծելու ծրագրած միջոցը։ Ով որ յիշում է մեր լրագրական թեր և դէմ բանակռիւը այս խնդրի մասին դեռ հանգուցեալ Գէորգ կաթողիկոսի օրերից և ապա 1893 թուից սկսած, որ յիշում է մեր մամուլի մէջ երևան եկած յօդուածների շարքը, նա մոռացած չի լինիլ, որ առաջ եկաւ երկու խումբ. մինը պնդում էր, որ կրթուած քահանան գիւղացուն չի կպչիր, միւս կողմը պահանջում էր որոշ ցենզ, բայց կար մի երրորդ խումբն էս, որը յայտնի միտումներով և նպատակներով պնդում էր, որ ձեռնադրութեամբ բաշխած և ընծայացուի վրայ իջած շնորհը կը լրացնի պակասը և ուրեմն ցենզի եռւից չատ ընկնելու կարիք չկայ։ Դրանից յետոյ նորից ծագեց այդ հարցը լրագրութեան մէջ և պատասխան տրուեց, որ կրթուած մարդն աւելի լաւ է քահանայ չը դառնայ։ Այդ բանակռուից յետոյ անցաւ տասը—տասներկու տարի, ունեցանք և ցենզաւորներ և ոգէտ քահանաներ, երկու խումբն էլ շնորհաբաշխեալ, բայց այսօր էլ նոյնն ենք լսում—քահանայ չկայ, քահանայ չունենք և չունենք ոչ միայն գիւղերում, այլ և Թիֆլիզում. (տես Հ. Առաքելեանի նամակը «Մշակ»ում Հայաստանեայց գաղթականների մասին յունվ. 27-ից)։

Շարժուում է ամբողջ Ռուսաստանը, արդէն մամուլի մէջ քննուում են եկեղեցու և ժողովրդի կարիքները, քահանաների խմբերը հանդէս են գալիս որոշ պահանջներով, դրուում են բազմաթիւ նախագիծներ, օրեցօր աճում է ժողովրդի հետաքրքրութիւնը դէպի եկեղեցու լուռ և պակասաւոր կողմերը, ասում ենք այո, թէև դեռ բիւրոկրատիայի ճիրանների մէջ, բայց մարդիկ խօսում ու գրում են, ապրում և այդ նոյն ժամանակամիջոցում, մեր սև բազմատանջ օրերին, բիւրատոր կարիքների ու ցաւերի ժամանակ հոգևորականութեան կողմից մամուլի մէջ հարց է տրուում թատրոն յաճախելու մասին միայն և մի քանի յօդուածներ էլ լոյս են տեսնում Թիֆլիզի Կոնսիստորի ծառայողների և այդ Կոնսիստորիայի արժանապատիւ անդամի բանակռուի մասին։ Ձիշտ այնպիսի տպաւորութիւն է ստացւում, որ կարծես թէ իրօք քահանաները, հոգևորականները չունենք։ Բայց չէ որ վերջին քսան, երեսուն տարիների ընթացքում մենք ունեցանք և դիպլոմատաւոր և ցենզաւոր և անցենզ հնարհաքաշխեալ հոգևորականներ։ Որտե՞ղ են նորա, ո՞ւր է նրանց գործի ու քրտի չերմացնող հաւրը, ինչո՞ւ կատարուած փոփոխութիւնն աչքի չընկաւ ոչ մի տեղ և մենք տեսանք, որ ոչ թէ միայն գիւղացուն չի կպչիր գիտուն քահանան և այն մարդով, որ նա միշտ վախուստ է տալիս գիւղից, այլ և քաղաքի ժողովրդին ու եկեղեցուն չի կպչիր նա, այո, չի կպչիր բացի իւր անձից և անձնական հաշիւներից։ Ինչո՞ւ վարժունական և եօթանասնական թուականների դպրանոցաւարտներ կպչում էին գիւղացիներին և քաղաքացիներին, ինչո՞ւ նրանք անուանի էին և ճրագ եկեղեցու, իսկ ութսունական և իննսունական թուականների ցենզաւորներն ու դիպլոմաւորները մի միայն դէպի անձնականն են տանում չատ հազուագիւտ բացառութեամբ և աչքի են ընկնում մի միայն մեծամեծ պահանջներով, քան մեծամեծ— ոչ, դէթ փոքրիկ նկատելի գործերով։ Կարծում եմ, որ այստեղ տգիտութիւնը կամ ցենզը չէ պատճառը։ Ո՛չ. ընդհակառակն ես կըպնդեմ, որ ցենզն է պատճառը աւելի մեծ

ազահութեան, պահանջներու, շատ անգամ նոյն իսկ յանցանքներու մեծութեան։ Եւ մէթէ տպէտ բանուորը, քաղցած մշակը կարող է այնքան և այնպէս գողնալ, ինչքան և ինչպէս որ գողանում է ցէնզաւոր բիւրօկրատը, պաշտօնեան, ճարտարապետը, դրամատէրը։ Մէթէ տպէտն այնպէս ճարպիկ կարող է վարագուրել իւր յանցանքը, ինչպէս այդ անում է կրթուածը, դիպլօմաւորը և տպէտներին ոչ կը տայ այնպիսի պաշտօններ, որ նրանք դանակով միշտ դժակի մօտ կանգնած լինեին։

Ընթերցող, չը կարծէք թէ վերև առաջ բերած տողերով ես կամենում եմ խոսնկ ծխել տպիտութեան, պնդել, որ աչ մի ցէնզ պէտք չէ։ Բաւ լիցի։ Այդ, ես բարձր եմ դատում դիւղական աշխատանքով պարապող,— երկրագործութեամբ ապրող և մի միայն ժամ ասող ու ծէսեր կատարող քահանային քաղաքի ցէնզաւոր, եսական, դարձեալ սոսկ ծիսակատար և անկրօն կրօնուսոյց քահանաներից։ Բայց այդ չէ եկեղեցու կարիքը, այդ չէ Աւետարանի պահանջը և մեռած ժամակարգութիւն ու ծիսակատարութիւն չէ քրիստոնէական վարդապետութիւնը։

Բայց մենք եթէ վերցնելու լինենք որոշ ժամանակաշրջաններ, եթէ վերցնելու լինենք որոշ շրջանում ապրող մարդկանց, մեզ համար նոր կը պարզուի խնդրի գաղտնի կողմը։

Ռուսաստանում, օրինակ, մինչև յիսունական թուականները նոյնպէս կային միջնակարգ և բարձրագոյն դպրոցներ. կային ուսուցիչներ, ծրագիր, ցէնզ և այլն, բայց այդ դպրոցներն արտադրում էին մի միայն պաշտօնեաներ, Նիկողայոսեան բէժիմի մարդիկ, որոնց փոքր ինչ սթափեցնելու համար հարկաւոր եղաւ Սեւաստօպոլի ուժգին հարուածը և քանի մըլիօն սարուկ ժողովրդի շարժուձը, որպէս զի զգային և հասկանային իրենց անցած ճանապարհների սխալները և հէնց իրենց չահերի տեսակէտից դուրս գային մեռելային դրութիւնից։ Դրանից յետոյ փոխուեցին հանդամանքները, փոխուեց դպրոցը և դպրոցական կեանքը և Ռուսաստանը այնպիսի սերունդ

ունեցաւ, որ պարծանք բերեց նրան և վերակազմեց ամբողջ երկրի կեանքն ու գործունէութիւնը։ Այդ սերունդն էլ էր ցնծագաւար, նա էլ էր միջնակարգ և բարձրագոյն դպրոցներից, բայց իւր գրչով ու գործով, իւր կեանքով և կենցաղավարութեամբ բոլորովին յատկերը նախկին չինովնիկներից և եւսական բիւրօկրատներից։ Այո, այդ սերունդը հերոսաբար արհամարհում էր մեծամեծ տիտղոսներ և պաշտօններ, արհամարհում էր ամսի քանի չաղ ռոճիկը, արհամարհում էր փափկակենցաղ կօմֆորտով՝ յարմարութիւններով լի կեանքը, հանդէս էր գալիս իւր ճշմարտութեան և արդարութեան քարոզով, մերկացնում եւսական մեծամեծների արարքները և թէև դիտէը թշնամու ոյժի մեծութիւնը, բայց չէր սարսափում, որովհետև միշտ անբաժան էր ճշմարտութեան խաչից։ Այո, նա առաւել բարւոք էր համարում մեռնել բանտերում և Սիբիրիոյ խորքերում, քան խղճի հետ (կօմպրոմեսի) պայմանագրութեան մտնել։ Այո, նրանցից շատերը մեռան աքսորավայրերում, շատերը վաղաժամ գերեզման մտան, սակայն նրանց անուններով և գործունէութեան նկարագրով կլցուեն դպրոցական դասագրքերը և նրանց օրինակներով կըկրթուի Ռուսաստանի ապագայ սերունդը։

Այդ գործիչների շրջանից յետոյ եկան ուսումնական թուականները իրենց սերնդով, որին պատկանում են Ռուսիան յետ մղող բոլոր հերոսները։ Այդ սերնդին էին պատկանում այն թէ աշխարհական և թէ հոգևորական անձինք, որոնք պատրաստեցին Ռուսաստանի մեծ տրագէդիան Մանջուրիայի դաշտերում և տանը և որոնց մէջ չը գտնուեց մինը, որ ներմացնէր սրտերը, հիպնօզացնէր, մագնիսացնէր մարդկանց և քարշ տար նրանց դէպի գործ, դէպի հերոսութիւն։ Դեռ աւելին կասենք. նրանցից շատ շատերը ուղղակի բացասական դիրք ունեցան և այդպէս երևան եկան կեանքի ասպարիզում։ Այո, Պլեվէն, Բօգոլեպովը, Բօբրիկովը, Սիպիագինը, Աբազան, Բեղօբրազովը, Գալիցինը, ս. Գերմոգէնը և ս. Վլադիմիրը ուրիշ շատ շատերի հետ, այդ բոլոր ցնծագաւար և դիպլօ-

մաւոր մարդիկ հանդէս եկան որպէս քաղաքական այժեր, որպէս Ռուսաստանի տրագէդիան պատրաստողներ և ցայսօր էլ չի վերջացել Հեռաւոր Արևելքում սկսած և մինչև Բալտեան և Սև ծովի ափերին հրհրող կարմիր քրքիջը, արիւնն ու քոցերը։

Ինչումն է այս երևոյթների պատճառը, որտեղից են ծագումն առնում նրանք։

Մեր կարծիքով այդ երևոյթների աղբիւրն է դպրոցն ու կեանքը։ Դպրոցը մարդկութեան անցած կեանքի և քնութեան ու նրա երևոյթների ուսումնասիրութեան վայրն է և այդ պէտք է տայ նա ուսանողներին՝ որքան ընդարձակութեամբ միայն կարող է, առանց կեղծիքի և առանց կողմնակի հաշիւների։ Որքան ազատ է քնութիւնը, նոյնքան ազատ պէտք է լինի դպրոցը և քնական—կենսական նրա ծրագիրը։ Դպրոցի դասընթացը, նրա ծրագիրը ոչ թէ մեծագոչ և աննպատակ առարկաներով պէտք է խճողած լինին, առարկաներով, որոնք մարդուս կեանքի ու հոգևկան ծարաւի հետ ոչ մի առնչութիւն չունին, այլ պէտք է զբաղուի քնութեան, մարդուս կեանքի և նրա հոգու պահանջների ուսումնասիրութեամբ. իսկ այդ հոգևկան պահանջներին իրական հողի վրայ բաւարարութիւն տուող դիրքն է Աւետարանը։

Այդ դեռ բաւական չէ։ Դպրոցական դասընթացն աւարտելուց յետոյ աւարտողի առաջ ոչ թէ հոգին ու եռանդ միացնող ծիսի պահանջը պէտք է դնել միայն՝— բիւրօկրատական չաբլօնի ու դիւանատան նման և բաւականանալ այդ երկրի ու երկնքի հետ առնչութիւն չունեցող ձևականութեամբ, այլ մարդկանց պէտք է մկրտել Աւետարանի սիրոյ և հաւասարութեան հրով պէտք է գործ պահանջել նրանցից հաւատոյ ծիսականի հետ միասին և հասկացնել, որ առանց ընդհանուր մարդկութեան համար երկրային դրախտը մարմնացնելուն ձգտելու, փակ է երկնային ճանապարհը և երբէք չի կարելի հասնել նրան։ Փրկիչը իւր կարճատև քարոզութեան մէջոցին կոպիտ ու տգէտ ձկնորսներին ցոյց էր տալիս կեանքի

անարդար կազմակերպութիւնը, դատապարտում էր ձևը, արտաքինը, ուսուցանում էր արդարութիւնը և վարժեցնում հաւատարութեան, և նրա աշակերտները մկրտուեցան հրով և բացի մկկից, չը գտնուեց նրանց մէջ դատաճան ոչ մկը, նրանք մեռան իրենց ուսած կեանքի և դաղափարի համար։

Որպես զի դիտուն քահանան դիւղին կպչի, որպես զի գիւղացիներին երկդասեան, աւաններին բնակիչներին չորս դասարաւեան և քաղաքացիներին վերց դասարանեան դասընթացն աւարտած չըկպչող ծիսակատարներ չ'ուղարկենք, որոնք բացի անձնական հաշիւներից ու կօմֆորտի ծարաւից ոչինչ չը տուին ցայսօր ու չ'արտայայտեցին, պէտք է դպրոցն ու կեանքը ազատել ձևականից, կեղծիքից, փշրել նրանց բիւրօկրատական կաշկանդող շղթաները և մարդկանց պատրաստել ճշմարտին և արդարութեան ծառայելու սխրագործութեան և ոչ թէ միայն ծիսակատար արհեստաւորութեան և եսի համար։

Մենք մեր դպրոցների ծրագիրը գիտենք. մեր առաջն է նրանց պատուէրը և Մինօգի ներկայ պահանջը՝—աստուածպաշտութեան կարգը, եկեղեցու խորհուրդները, տօնացոյցի գործածութիւն, շարականներ եւ տաղեր անսխալ երգելը. մի խօսքով մի միայն ծէս և արհեստ, որը ոչ կատարելու ուղղին։ Ներքևից, դպրոցի նստարանների վրայ շարուած փոքրիկների խորհող դլխներից ծնած և մշակած պահանջների շարքը մեր առաջն է, իսկ կեանքը մեր թշուառ կեանքը, պահանջների ծով է և այդ թշուառութեան ծովում մարդկանց, Աւետարանի աշակերտների սուր հայմարձակ ձեռք զարկենք և աներկիւղ ջրենք ու մաքրենք այն հնոցը, որը պէտք է ջերմացնի և զոի Աւետարանի արդարութեան և հաւատարութեան սպասաւորներին, սխրագործութեան պատրաստի նրանց և ոչ թէ բիւրօկրատ արհեստաւորութեան ու պաշտօնէութեան,

Դէպի գործ ուրեմն։

Ե. Ծ. Վ. Ե.

ՄԱՐԴԸ

(Մաիիա Գուրիելուց)։

Ով էլ որ լինիս դու, իմ ընթերցող,
Կին, թէ մարդ և թէ անփորձ օրիորդ,
Մի խնդիր ունեմ, աղաչում եմ քեզ,
Կատարող լինիս նրա անյողդողդ։

Առաջին անգամ երբ ապրել սկսես
Եւ բաղդը ժպտայ անբաժան միշտ քեզ,
Աղաչում եմ ես, չը մոռնաս երբէք,
Որ դու այդպէս էլ դարձեալ սոսկ մարդ ես։

Հարուստ, իմաստուն, աշխատող, խելօք,
Թէկուզ դիղեցիկ, անբիծ էլ լինես,
Երբէք չըմոռնաս, միշտ յիշիր մտօք,
Որ այդպիսով էլ դու էլի մարդ ես։

Ցանկարծ տէր եղար անթիւ դանձերի
Եւ դու զօրաւոր մի թագաւոր ես.
Էլ աւելի ևս չըպէտք է մոռնաս,
Որ այդ փառքովդ էլի սոսկ մարդ ես։

Գուցէ խորթ եղար դու բաղդիդ համար,
Խոցոտեց սիրտդ, վիշտն ընկճում է քեզ.
Ո՛, չընկնես երբէք, կանգնիր, քաջացիր.
Ցիշիր անդադար, որ դու էլ մարդ ես։

Թող փոխուեն չուրջդ հանգամանքները,
Ամբոխի ձայնը խայթի, ջնասի քեզ.
Դարձեալ չըփոխուես, կըդայ ժամանակ
Եւ կըճանաչեն, որ դու էլ մարդ ես։

Ճշմարտութիւնը կեանքիդ նպատակ,
Սիրել եղբօրդ պարտք համարիր քեզ.
Չըմոռանաս երբէք քո հայրենիքդ,
Որ ասեն, այո, դու իսկ որ մարդ ես։

Ե. ծ. վ. Մ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Փետրվարի երկուսին Էջմիածին վերադարձաւ Նորին Սրբութիւն ազգիս Վեհափառ Հայրապետը իւր դիւանապետի հետ։ Նորին Սրբութեան մինչև կայարան ընդառաջ էին գնացել լուսարարապետ Ղևոնդ եպիսկոպոս, Ճեմարանի տեսուչ Գարեգին վարդապետ, Սինոդի անդամ Բաբգէն վարդապետ, Կոմիտաս և Տաճատ վարդապետները։ Երկրորդ օրը Մայր Աթոռի ամբողջ միաբանութիւնը ներկայացաւ Նորին Սրբութեան։

Մայր Աթոռ եկաւ նաև Երևանի թեմակալի փոխանորդ Տ. Յուսիկ եպիսկոպոսը և ներկայանալով Նորին Վեհափառութեան վերադարձաւ իւր պաշտօնատեղին։

Տ. Բենիկ վարդապետը նշանակուեց կարգադիր Բեսարաբիոյ թեմի եկեղ.–ծխական դպրոցների։

Ս. Էջմիածին վերադարձաւ Աղեքսանդրապոլի նախկին յաջորդ Կիւրեղ վարդապետը։

Ուխտանէս վարդապետ Տէր Գասպարեանը նշանակուեց գործակալ Ախալքալակի գաւառի և մեկնեց իւր պաշտօնատեղին։

Փետրվարի 1-ին Երևան մեկնեց Սինոդի անդամ Տ. Մատթէոս վարդապետը, որը լիազօր է նշանակուած կալուածներն ընդունելու համար և այնտեղ կատարելով ընդունելութեան գործի մի մասը, վերադարձաւ Էջմիածին։

Փետրվարի 10-ին Թիֆլիզ մեկնեց Արարատի խմբագիր Տ. Եղիշէ Ծ. վարդապետ Մուրադեանը մասնակցելու Կովկասեան Փոխարքայի հրաւէրով գումարուելիք Թուրք-հայկական ներկայացուցիչների համաժողովի նիստերին որպէս Կարսի ներկայացուցիչ, խորհելու հայ-թուրքական կռիւներին վերջ տալու միջոցների մասին։

Երկարատև հիւանդութիւնից յետոյ փետրվարի 6-ին ի Տէր հանգեաւ և ամսի 8-ին թաղուեց ս. էջմիածնայ մյաբանից դերեզմանատանը

ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԸ,

որ վերջերս նշանակուած էր վանահայր Ագուլիսի ս. Թովմա Առաքելոյ վանքի, բայց հիւանդութեան պատճառաւ գնալ չը կարողացաւ։

Հանգուցեալը ծնուել էր 1832 թուին Շուշու գաւառի Խանաձախ գիւղում, որտեղից մօտ երեսուն տարեկան հասակում գնացել էր Երուսաղէմ և 1862 թուից մինչև 1868 թիւը ուսել այնտեղի ժառանգաւորաց դպրոցում, 1868 թուին ընդունել էր հոգևոր կոչումն, իսկ հետևեալ տարուայ յունիսի 22-ին ձեռնադրուել սարկաւագ։ Հետևեալ 1870 թուին Եսայի Պատրիարքի ձեռքով ձեռնադրուել է վարդապետ 1880 թուին ընդունուել ս. էջմիածնայ մյաբան հանգուցեալ Գէորգ կաթողիկոսի հրամանով։

1881 թուին հրաւիրուել է կրօնուսոյց Շուշու Բէալական դպրոցի, իսկ հետևեալ 1882 թուից կրօնուսուցչի պաշտօն է վարել նաև այնտեղի հոգևոր դպրոցում։ 1888 թուի սեպտ. 1-ին նշանակուել է Սաղիանի վանքի վանահայր և տեսուչ վանական—դպրոցի և ապա հետևեալ

1889 թուին—քարոզիչ Եամախու մայր եկեղեցու։ 1892 թուին կարգուել է վոխանորդ Աղէքսանդրապոլի, որտեղ մնալով մի քանի ամիս, վերադարձել է ս. Էջմիածին և նշանակուել կրկին Սաղիանի վանահայր. 1894 թուի փետրվարի 17-ին Եպիսկոպոս ձեռնադրուելով նոյն թուի սեպտեմբերի 28-ին, 1895 թուին Բարձրագոյն հրամանով հաստատուել է առաջնորդ Եամախու թեմի, բայց հետեւեալ տարուայ դեկտեմբերի 20-ին արձակուել է այդ պաշտօնից և վերադարձել կրկին ս. Էջմիածին։ Այստեղ Նորին Վեհափառութեան կոնդակով նշանակուել է լուսաբարեպատ Մայր Տաճարի և անդամ Վանական կառավարութեան. ապա եղել է Սինոդի անդամ, սակայն ժամանակակից ձախորդ հանգամանքների և հիւանդութեան չնորհիւ հրաժարուել այդ պաշտօնից 1904 թուին։ Մակար սրբազանը վերջերս ամեն պաշտօններից քաշուած, ուղում էր իւր կեանքի վերջին տարիները անցնել վանական առանձնութեան մէջ Ագուլիսի վանքում, սակայն յաւիտենական խաղաղութիւնն աւելի շուտ գտաւ։ Հանգուցեալն իւր կենդանութեան ժամանակ բացի բազմատեսակ պաշտօններ վարելուց՝ կարողութեան չափ պարապում էր և գրական աշխատանքով։ Անձամբ ջրջել է շատ գաւառներ, ժողովել հայկական կեանքի հնութեան յիշատակարաններ, որոնցից մի մասը հրատարակել է իւր «Աղուանից երկրի պատմութիւն» և «Արցախ» գրքերի մէջ, իսկ միւս մասը մնում է անտիպ։ Հանգիստ ոսկերաց բազմաչխատ մշակին, որ լրացրեց իւր պանդխտութեան ժամանակը։

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Փոստ հեռագրական դործադուլի պատճառով Պոլսից հակաեմքերի վերջերին ուղարկած, բայց յունվարին ստացած նամակներից և պաշտօնական գրութիւններից իմանում ենք, որ Երուսաղէմի Պատրիարքական Փոխանորդ Գ. եպիսկոպոս Երիցեանը պաշտօնից արձակուած է աւելի անձնական նկատումներով և Պօլսոյ դաւադրութեան և հետևանքի մասին իսկոյն հեռագրով Երուսաղէմ տեղեկութիւն չը տալու, քան այլ յարդելի հանգամանքների պատճառով: Ցաւում ենք, որ խմբագրութիւնս երբեմն զոհ է գնում տեղական թերթերից մի քանի հաղորդած անճիշտ տեղեկութիւններին, որոնց վերաստուգութեան ոչ մի հնարաւորութիւն չունենք տարաբաղդաբար:

Ինքբօլուի հայերը տեղեկագրել են պատրիարքարան, որ վարժարան, ուսուցիչ և քահանայ չունին, երեխաները թափառում են փողոցներում, իսկ ոմանք էլ յաճախում են յունաց դպրոցները:

Կոստանցայի (Ռումանիա) հայերը մանկապարտէզի շինութեան ձեռնարկած՝ կոնդակ են խնդրել Պատրիարքարանից հանգանակութիւն կատարելու համար Ռումանահայոց մէջ:

«Փունջ»:

Պօլսում մի գաւառացի հայ երիտասարդ դիմելով յունաց Պատրիարքարանին՝ փափաք է յայտնել օրթոդոքսութիւն ընդունելու: Յունաց Պատրիարքարանն, ըստ տեղական սովորութեան, տեղեկութիւն է խնդրել հայոց Պատրիարքարանից՝ իմանալու թէ արդեօք որ և է արդելիչ պատճառ կայ: Ազգ. Պատրիարքարանն հաղորդել է, որ չիշեալ երիտասարդն ամուսնացել է մի անգամ և կնոջը թողել: Յունաց Պատրիարքարանը մերժել է երիտասարդի խնդիրը և նա կրկին դիմել է Ազգ. Դատաստանական խորհրդին իբր ամուսնական խնդրի կարգադրութեան համար: Մի ուրիշ գաւառացի, որ տասնևչորս տարի շարունակ կենակցել է մի յոյն կնոջ հետ և ունեցել նրանից

զաւակները, սա ևս դիմելով յունաց Պատրիարքարանն՝ ընդունել է օրթոդոքսութիւն: Միևնոյն նպատակով յիշեալ Պատրիարքարանին դիմել է և մի երրորդը՝ մի Սեբաստացի երիտասարդ:

Ս. Պատրիարքի հրամանով նպաստի մի գումար է ուղարկուած Մուշի քահանաներին, որոնք իրանց նիւթական կարօտութիւնն յայտնելով՝ նպաստ են խնդրել:

Զարմանալի են Երուսաղէմի տնտեսական գործերը. մի հետաքրքիր տեղեկութիւն էլ ս. Յակովբեանց վանքի տպարանի մասին ենք գտնում «Բիւզանդիոնի»ի էջերում: Տասնեակ տարիների կեանք ունի այդ հաստատութիւնը, հայթայթում է գրեթէ ամբողջ Տաճկաստանի եկեղեցական բոլոր գրքերը, տպում է օրացոյց և տարիշ կրօնական գրքեր ու դարձեալ քեռ է նկատւում վանքի համար: Վերջերս տպարանի տեսուչ է կարգուած Տ. Գէորգ վարդապետ Յովհաննիսեան, որ «մանրամասն տեղեկագիր կը պատրաստէ տպարանի վիճակին, եղած ծախքին և կրօնական գրքերէ ու օրացոյցերէ գոյացած հասոյթին վրայ»:

Արդի՞նքը . . .

Եդեսիոյ Ազգային Որբանոցից արձակուել են քսանի չափ տներ հասոյթի անբաւականութեան պատճառով: Միևնոյն պատճառով արձակուել են հարիւրաւոր երկտեղ տներ նաև նոյնտեղի Գերմանական Որբանոցից, որի վարչութիւնը մտադիր է վաճել Որբանոցը և աւելի մղում տալ գործաշինութեան արհեստանոցին, ուր աշխատում են աղքատ դործաւորուհիները:

Կայսերական Իրադէով արժանացած է Եօղղատի եկեղեցու քակում կառուցանել մի ազգային դպրոց: Պատրիարքարանն արդէն բէրատն ստացել և հարկ եղածն հաղորդել է Կիլիկիոյ սրբազան Կաթուղիկոսին:

Անցեալ Գիւտ Խաչի տօնին Գում-գափուի Ազգ. Պատրիարքարանում Տ. Մաղաքիա սրբազան Պատրիարքին է ներկայացել Հաբէշ պատուիրակութիւնն իր ամբողջ կազմով — Ջօրաւոր

Մաշաշա, Աթօ Հալէֆ Մխրէմ վաշա, Երուսաղէմի եպիսկոպոս-կան վանքի պետ Ֆաքրէթա վարդապետ, Զօրավարի թարգմանը՝ Մ. Հաննա Ֆառէս, երկու քարտուղարները՝ Մ. Էլիաս, Մ. Գաբրիէլ, և Մկրտիչ էֆ. Պօղոսեան։ Զօրավարը Նորին Սրբազնութեան յանձնել է Մենելիք Կայսեր ինքնագիր մի նամակը, որի մասին «Ռուզանդիան»ում գտնում ենք հետևեալ նկարագրութիւնը. «Նամակը գրուած է սպիտակ մագաղաթ թուղթի վրայ, թուղթին ճակատը զետեղուած է կայսերական զինանշանը, որուն շուրջ գրուած է կայսեր անունը մակդիրներով, և այսպէս կ'սկսի.

«Առիւծն Յուդայի Մենելիք Ա., արքայն արքայից եթովպիոյ, առ Տ. Մաղաքիա Ս. Պատրիարք Սրբոյ Աթոռոյն Կ. Պօլսոյ, ողջոյն»։

«Այս մագաղաթ թուղթը գրուած է սպիտակ պահարանի մը մէջ, որուն վրայ գրուած է հասցէն, կայսեր գրով, իսկ ետևը կը գտնուի կայսերական թագը, և անոր ներքև գրուած է Մ. գիրը սովեդրօշմ»։

Պատուիրակութիւնն այցելել է և նոյն օրը դրանից առաջ Մայր եկեղեցին և ներկայ գտնուել հանդիսաւոր ժամերգութեան և յոյժ գոհ մնացել։

Մի քանի օր յետոյ էլ Ս. Պատրիարքը փոխայցելութեան է գնացել յիշեալ պատուիրակութեան։

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Խարկովից «Русскія Вѣдомости» ին հեռագրում են. «Սինոդը քահանայագործութիւնից դադարեցրեց այն քահանաներին, որոնք կալծիք էին յայտնել մահուան պատժի դէմ»?!

—Եւ դատապարտողներն անշուշտ երկնց կը համարուն քրիստոնէական քարոզիչ, եկեղեցու պետ և Աւետարանի մեկնաբան։ Մերթ մէջին դարերում ենք ապրում։

Пет. Листокъ-ի №№ 284, 297 և 305-ում լոյս տեսաւ Մ. Ֆեօդորովի յօդուածը եկեղեցական բարեփոխութեանց խնդրի առթիւ, որտեղ և մէջն այլոց ասում է.

«Համառուսական եկեղեցական խորհրդի առաջին գործը պէտք է լինի վերակազմել եկեղեցական կառավարութիւնը վերևից: Սինոդի օբերը պրօկուրօրի անքննական միահեծան իշխանութիւնը պէտք է վերացուի: Բայց միւս կողմից էլ չը պէտք է ստեղծուի Պատրիարքի միանձնական իշխանութիւնը: Եկեղեցուց պէտք է հեռացնել այն բոլորը, ինչը որ առաջ է բերում երկպառնութիւն և կամայականութիւն և ոչ թէ նորանոր առիթներ ստեղծել նրանց համար: Եկեղեցին կառավարելու միակ և քրիստոնէական վարդապետութեան ոգուն համապատասխան մարմինն է ժողովը:

Սինոդն ու պատրիարքները չը պէտք է կառավարեն եկեղեցին, այլ մշտական ժողովը, որը պատասխան պէտք է ընտրուած լինի (և ոչ թէ նշանակուի, ինչպէս այժմ) ամեն աստիճանի հոգևորականներից—եպիսկոպոսներից, քահանաներից, սարկաւագներից և դպիրներից, և աշխարհական ընտրեալներից, որոնց հաստատութիւնը ոչ ոքից կախուած չը պէտք է լինի: Ժողովը պէտք է դումարուի առնուազն տարեկան մի անգամ երկու կամ երեք ամիս ժամանակով՝ նայած գործերի քանակութեան:

Սինոդը ընդհանուր եկեղեցական ժողովի մի միայն գործադիր մարմինը կլինէր: Թեմի հոգևորականութեան և աշխարհականների կողմից ընտրուած եպիսկոպոսները իրարից որպէս փառասէր ու անափառ Բիւզանդացիների հնարած, պէտք է ոչընչացուին: Մանաւանդ որ այդ տիտղոսների ետևից ընկած կատարում են բազմաթիւ անօրէնութիւնները, որոնք նուաստացուցիչ են ոչ միայն քրիստոնէական եկեղեցու բարձր պաշտօնեաների, այլ և սովորական մահկանացուների համար: Թեմական կառավարութիւնն էլ պէտք է կազմակերպուի ներկայացուցչական նման սկզբունքներով. «եպիսկոպոսը պէտք է լինի թեմի գլխաւորը, բայց միանձնաբար ոչինչ անելու իրաւունք չունենայ:»

Վերջում Ֆեօդորովն ասում է.

«Եթէ որբազանները կը համարձակուեն միանձնաբար լուծելու հասունացած խնդիրները առանց աշխարհականների մասնակցութեան, ինչպէս այդ մասին արդէն լուրեր են պատում, նրանց բարենորոգութիւնների հետևանքն այն կլինի, ինչ որ նիկօն պատրիարքի ժամանակին էր, որից յետոյ, ինչպէս յայտնի է, եկեղեցուց բաժանուեցին հնաձէների մի քանի միլիօն: Անհամեստութիւն արած չեմ լինիլ, եթէ ասեմ, որ աշխարհականների առաջ միակ եկեղեցական ժողովի գէմ արդէն եռանդուն հակառակութիւն է պատահում ժողովրդի մէջ:»

Նոյն խնդրի մասին ոմն Պ. Կ. յօդուած է հրատարակել

«Слово»-ի 313-ում «ինչպիսի ժողով է մեղ հարկաւոր» վերնագրով որտեղ ասում է. «Մենք երկիւղով ենք խօսում ապագայի մասին. եթէ առաջնիայ ժողովը կապմուած լինի միայն եպիսկոպոսներից, մեր եկեղեցում կարող է առաջ գալ առաւել մեծ հերձուած քան նախկին՝ ծիսականը: Այդ ժողովը եկեղեցում կը մտցնի ոչ թէ խաղաղութիւն, այլ նոր խռովութիւն, նոր թշնամութիւն: Թող սրբազան Անտոնիոսը չը կարծի, որ ամուսնացած հոգևորականութիւնն ու ժողովուրդը անմիտ երեխաներ են և եկեղեցականներին անտեղեակ: Եթէ միայն եպիսկոպոսներն ժողովը տեղի ունենայ, քարերը կաղաղակեն:

Ռուսաստանի յետադէմ կուսակցութիւնը շարունակում է որոնել եկեղեցական դրօշակը խռովարարներն դէմ խաչակիրների արշաւանք սկսելու: Համեմատական անյաջողութեան հանդիպելով պրաւօսլաւ եկեղեցու կողմից, նա այժմ դիմում է հնաոճներին: Моск. Вѣдомости-ի մէջ կարդում են հնաոճների միութեան կոչը, որն իւր բովանդակութեամբ նման է «Ռուս մարդկանց միութեան» և «ժողովրդական ինքնապաշտպանութեան սրբազան միութեան կոչերին:

«Զգաստացիը, ռուս ազատ ժողովուրդ: Մի՛ քաջալերիը դաւաճաններին, որոնք ամեն կերպ ծաղրում էին ռուսական անունդ, շատ աղնիւ մարդկանց սպանում և այլանդակում: Նրանք ծաղրում են քրիստոնէական կրօնդ և անկարգութիւն անում սրբազան տեղերում: Նրանք քաջալերում են ուրիշն բարիքը յափշտակելու, թագաւոր-արքային չեն ընդունում: Երբ կը կործանեն թագաւորին, աղնուականներին և վաճառականներին, ո՞մ ձեռին կլինիք դուք այնուհետև: Չեր հայրով անուած՝ կը շղթայեն ձեզ անհաւատների (բասուրմանների) ծանր շղթանեռով, բոլորովին կը կեղեքեն և կաղքատացնեն սրբազան Ռուսաստանը: Ժողովո՛ւրդ, ո՞րտեղ է քո ռուսական քաջութիւնը: Որտեղ է քո ազգային հպարտութիւնը:»

Церк. Вѣст. նկատում է, որ ինչքան էլ հնաոճները երկրպագու են հին կարգերին նրանց հետ ուրտ կապուած, այնուամենայնիւ յետադէմներն այստեղ էլ հազիւ թէ յաջողութիւն գտնեն, որովհետև նրանք շատ լաւ են հասկանում և գնահատում օգոստոսի 6-ի և հոկտ. 17-ի հրովարտակները:

Հնարաւորութիւն չունենալով պատասխանել յիշեալ կոչի բոլոր կէտերին, մի քանի միայն կը հարցնենք պահպանողական գլխաւոր օրգանին: Այդ ո՞ր օրէնքից է ձեր բարեկամութիւնը

հնաճէնների հետ։ Ո՞ր օրուանից էք նրանց էլ Ռուսաստանի զաւակ համարում և մէթէք թողել էք նրանց մէջ «ռուսական քաջուԹիւնն ու աղգային հպարտուԹիւնը։ Իսկ աղնուականների և վաճառականների խնամատար ձեռքերի հետքերը շատ Թարմ են և կարծում ենք, որ դեռ չեն ջնջուել նրա յիշողուԹիւնից։

Церк. Вѣстникъ-ում կարդում ենք. Դժուար է հաղորդել այն վրդովման չափը, որ արտայայտուեց պահպանողական մի քանի ներկայացուցիչների կողմից հոկտեմբերի 17-ի հրովարտակի առԹիւ Սինօդի ուղարկած շրջաբերականի դէմ։ եԹէ հին կարգերն իսկապէս պրաւօսլաւ կրօնի հիմքերից մէկն ընդունենք, ապա հետևողական կլինի այդ երևոյթը հերձուած անուանելը։ Ահա այդպէս է մտածում պ. Շարապով, որը «Русское дѣло» ԹերԹում սինօդի կողմից նոր կարգերի օրինաւորութիւնը համարում է ծաղրի դերագոյն աստիճանը պրաւօսլաւ սրբազան հայրերի կողմից»։ «Իսկ ռուս» և «ճշմարիտ պրաւօսլաւ» մարդու անպատկառուԹեամբ նա մեղադրում է եպիսկոպոսներին նոր կառավարուԹեան առաջ քննելու մէջ և ոպառնում է եկեղեցական ժողովի դատաստանով։

«Հայրե՛ր, խնայե՛ք սրբազանները»։ ասում է նա։ «Արդեօք շատ հեռու չի՞ գնում ձեր խնայարհուԹիւնը քաղաքացիական իշխանուԹեան ներկայ կառավարիչների առաջ։ Աւելի լաւ կլինի, եԹէ դարձադուլ անէք։ Մէթէք կըգտնուի ԹէկուզՄի մարդ, ինչ բանակի էլ նա պատկանելու լինի, որ հաւատայ ձեր անկեղծութեանը։ Մէթէք գէթ սէ մլինը չի հասկանալ, որ դուք ռուսական եկեղեցու հովիւներդ, արտասանեցիք ձեր մեղաւոր և անհամոզիչ խօսքը առանձին պատուէրով, իշխանուԹեանը հաճոյանալու, երկիւղ կրելով կորցնելու ձեր Թաղերն ու ամբիոնները։ Ի հարկէ, ձեզանից, ամեն տեսակ արդար և անարդար միջոցներով» եկեղեցու իշխաններ դարձածներից ռուս ժողովուրդը չէր կարող սպասել արժանաւոր և խիստ բողոքի իր դարաւոր և Թանկագին կարգերը խախտելիս։ Դուք ընդունակ չէիք լինի յետ կանգնելու արքայի ձեռքը անտեղի ստորագրուԹիւնից։ Բայց գոնէ հասարակ լուսԹիւնը պահպանէիք։ Դուք այդ էլ չը կարողացաք անել։ ԱմօԹ ձեզ համար։ Եւ Թող կրկնի մեր այդ դառն և դայրայրկոտ խօսքը ռուսական եկեղեցական ժողովը, որի արդար և անկեղծ դատաստանին կը յանձնուի արդարուԹեան պաշտպան կանգնելու ձեր քաջուԹիւնը և ձեր առաքելական անկեղծուԹիւնը»։

Ցիշեալ՝ իսկապէս անպատկառ տողերից պարզ երևում է, թէ ինչպիսի եկեղեցի էին սերում ռուս պահպանողականները ու ժողովրդի լրատուից յափշտակողները այդ ժողովրդի դարաւոր սրբութիւնների անունից։ Քրիստոսի եկեղեցին հաւատարմութեան և սիրոյ հիմնարկութիւն է և ոչ թէ լուութեան և անարդարութեան, ինչպէս որ բարեհաճել էիք դարձնել նրան և հեռու չէ այն ժամանակը, երբ ժողովուրդը կը խմի քուն աղբիւրից՝ Աւետարանից՝ իւր կրօնական ծարաւն յագեցնելու և կը հասկանայ ներկայ ընկերվարական կեանքի և ձեր բոլոր քացադանչութիւնների հակաաւետարանական լինելը։ Այո՛, նա այն ժամանակ շատ շուտ կը գտնի, թէ որոնց պէտք է դատել և ինչու համար։

Կաթոլիկ պրօպագանդան աւելի և աւելի է զօրանում արևելքում և մանաւանդ պրաւօսլաւ երկրներում՝ Սիբիրում, Պաղեստինում, Արաբիայում, Ալէքսանդրիայում, Հռոդոսում, Սամոսում, Զմիւռնիայում, Բօլգարիայում և այլն։ Թէ որպիսի վճռականութեամբ և ոգով են գործում կաթոլիկ քարոզիչները, երևում է «Պրաւօսլաւ միսիօները» թերթից, որտեղ կարդում ենք հետևեալը։

— Սօլիայի կաթոլիկ եկեղեցիներից մինում Պատերը քարոզ խօսեց, որի ժամանակ պրաւօսլաւ հաւատը կոչեց կեղտոտ ու խայտառակ, իսկ պրաւօսլաւներին—անբարոյական ժողովուրդ։ Դառնալով ունկնդիրներին, լատին քարոզիչն ասաց։ «Դուք կաթոլիկներ էք, որոնց նախանձամութիւնն ուղարկելէ անբարոյականութեան, շարլատանութեան և կեղծիքի վրայ հիմնուած պրաւօսլաւ հաւատը ոչնչացնելու։ Դուք անթառամ պսակների կարժանանաք ձեր այն ջանքերի և ծառայութեանց համար, որը գործ կը դնէք աղնիւ և սրբազան նպատակի կատարման համար»։

Եթէ երբեք տեղի է ունեցել այդ խայտառակ քարոզն ու հիւանդ բարբանջանքը, պէտք է որտանց ցաւել, որ դեռ յանուն Աւետարանի այդպիսի վանդալական քարոզներ են արտասանւում։ Մի՞թէ երբեք վերադարձել են խաւարը միջին դարերը։

ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Պետերբուրգից հեռագրով հաղորդեցին Կովկասեան թերթերին հետեւեալը.—

Յունվարի 27-ին սրբազան Սինոդին կից մասնաժողովը որոշեց, որ Վրաստանի բոլոր հոգեւոր դպրոցներում կատարեալ ազատութիւն տրուի վրացերէնի դասաւանդութեան: Էկզարքոսն ու եպիսկոպոսները Վրաստանում (ի մէջն այլոց և Սուխումում) պէտք է նշանակուեն վրացիներից: Էկզարխն անկախօրէն կը տնօրինի ներքին գործերը, Թիֆլիզի Սինոդական գրասենեակը (Синодальная контора) կը վերացուի: Ինչ կը վերաբերի վրաց եկեղեցու ինքնուրոյնութեան և անկախութեան, այդ կը որոշի համառուսական եկեղեցական, ժողովը որը հաւիս թէ դրական լուծումն տայ խնդրին: Իրենց խօսքի վերջում Կիրիոն և Լէոնիդ եպիսկոպոսները յայտնել են, որ վրաց հոգեւորականութիւնն ու ժողովուրդը կը պահանջեն մի միայն եկեղեցու անկախութիւն և հաւիս թէ բաւականանան մտցրած բարեփոխութիւններով:

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Դեկտեմբերի 6-ին Ֆրանսիական Սենատը 181 ձայնով 102-ի դէմ ընդունեց եկեղեցին բաժանելու օրինագիծը այն ձեւով, ինչպէս որ նա ընդունուել էր պատգամաւորական ժողովում: Ցիշեալ օրէնքի գործադրութեան համար նշանակուած է պարլամէնտից դուրս առանձին մասնաժողով: Երբ վերջնիս կազմած ծրագիրը կքննուի պետական խորհրդում, օրէնքը կը հրատարակուի պաշտօնական թերթում և կը գործադրուի յունվարից: —Մենք կարող ենք աւելացնել, որ օրէնքի վերաբերեալ բոլոր ձեւականութիւնները վաղուց վերջացած են, օրէնքի գործադրութիւնը սկսուած և արդէն ցուցակագրում են Ֆրանսիայի կաթոլիկ եկեղեցիների գոյքերը, որ առանց արիւնհեղութեան չի անցնում: Այդպիսի արիւնհեղութիւն տեղի ունեցաւ ս. Կլօտիլդի, ս. Պետրոսի և այլ եկեղեցիների գոյքերը ցուցակագրելիս: Թերթերից մի քանիսը երկիւղ են կրում Ֆրանսիայում-ներքին պատերազմից:

Յունվարի 19-ից սկսած հեռագիրները բազմաթիւ լուրեր բերին Փարիզում և առհասարակ Ֆրանսիայում կատարուած արիւնահեղ դէպքերի մասին եկեղեցական գոյքերը ցուցակագրե-լիս: Այդ առթիւ աղմկալից նիստեր են տեղի ունեցել պատգամաւորական ժողովում, որի նկարագրից առաջ ենք բերում հետևեալ հատուածը.—Պատգամաւորական ժողովում խօսեց Գրուսսօն. մատնանիշ եղաւ, որ կաթոլիկները բողոքում են իրենց եկեղեցիներում կատարուած կողոպուտի համար: Նրանից յետոյ խօսող Բրիանը պաշտպանում էր եկեղեցին պետութիւ-նից բաժանելու օրէնքը և վստահութիւն յայտնեց, որ վերջին խօսքը հասարակապետութեանն է պատկանում: Այդ միջոցին աջակողմի անդամ Կենելն աղաղակեց. «Ս. Կլօտիլդի եկեղեցում այժմ արիւն է հոսում»: Այդ միջոցին տեղից վերկացան աջա-կողմի մի քանի պատգամաւորներ և թողին խորհրդարանը: Պալատի նախագահ Դուպրերը յայտարարեց. «ինչ էլ լինեն դրսից եկած լուրերը, դուք պէտք է կատարեալ խաղաղութիւն պահպանէք»: Բրիանէն առաջարկեց հաւատարմութեան դործել տաքտով, բայց եռանդով, երբէք չը թուլանալով յիշեալ օրէնքն իրագործելիս: Այնուհետև խօսեց Ռիբօն, յայտնելով որ ինքը երկիւղ է կրում կրօնական պատերազմից և ցաւում է այն վրդովմունքի համար, որով կատարում է եկեղեցական գոյից ցուցակագրութիւնը: Կոշէնը քննադատում է եկեղեցական գոյքի ցուցակագրութիւնը: Բամէլը յանդիմանում է հաւա-տարմութեան, որ խախտում է օրէնքը և սպանութիւններ է կա-տարում ու. Կլօտիլդի եկեղեցում: Նախարարապետը բողոքում է այդ խօսքերի դէմ և սպառնում թողնել դահլիճը, եթէ չեն վերցնել այդ խօսքերը: Բամէլին կարդի են հրաւիրում: Ձախակողմը միաբան ծափահարում է նախարարապետ Րուվի-էին: Բամէլը նորից կրկնում է. «մահ», «սպանութիւնները» բա-ռերը և նորից կարգի է հրաւիրւում:

Այնուհետև, չը նայած աջակողմի խիստ բողոքներին, վի-ճաբանութիւնը վերջացած է յայտարարւում: Րուվիէն ընդու-նում է հերթական գործերին անցնելու ըանաձևը, որն արտա-յայտում է ժողովի վստահութիւնը, որ կառավարութիւնը կ'ապահովէ եկեղեցին պետութիւնից բաժանելու օրէնքի գործա-դրութիւնը: Այդ վճիռն ընդունւում է 384 ձայնով 166-ի դէմ:

ԲԱՆԱՍԻՐԱՆ

ՍՈՒԿԱՒ կամ ՍՈՒԿԱՒԷՏ

Գերապատիւ Յուսիկ եպիսկոպոսը, «Անապատական-ներ և վանականութիւն» յօդուածի մէջ (Արարատ, Յունվ. եր. 65—68) ընդդիմախօսելով Սուկաւէտ, Ջրաբաշխ և Քօսա-դաղ անուններուն՝ Աւդերեանի, Ալիշանի և իմ տուած նոր բացատրութեանց մասին, համարում է այդ բացատրութիւնները սխալ։

Վնաս չունէր ի հարկէ եթէ իրօք սխալ լինէինք, կամ թէ առաջարկուած լինէր աւելի հաւանական բացատրութիւն։ Յուսիկ սրբազանը դուրս հապճեպով է կարդացել Ալիշանի և իմ բացատրութիւնները. ապա թէ ոչ՝ ինչպէս Քօսա=Քօշի դաղը (լեռ) կը հասկանար Քօշի լեռ, և յետոյ էլ երբ թէ Ալիշանի սխալ՝ կը հերքէր։ Կամ ինչպէս կ'անտեսէր Ջրաբաշխի և Ջրառատ Ջրաշատ բառերի աղերսը։ Անուշադիր է եղել այն բանին՝ որ հրաբխային խանձոտ, լերկ, խիճ ու աւազուտ լեռները, ինչպէս Քօշի լեռը, ամբողջովին ծծելով անձրևի և ձիւնի ջրերը՝ արտահոսում են առատաջուր աղբիւրներ, մինչ բուսաւէտ լեռները՝ անձրևաջրերը վազեցնելով վերայից կամ բուծանելով բոյսերը՝ պակաս ընդունակ են մեծամեծ աղբիւրներ արտադրելու։ Խանձոտ, լերկ Քօշի դաղը՝ դեռ տակներ է հոսեցնում ալ ու ձախ, որպիսի պատճառաւ էլ Սուկաւէտ կամ Ջրաբաշխ է կոչուել, իսկ Սրբազանը ասում է թէ՝ «Ջրաբաշխը ոչ մի առնչութիւն չունի Ջրառատ-Ջրաշատի (=Սուկաւէտի) հետ», այլ թէ՝ «Սուկաւը . . . հանօրէն նշանակում է անջրդի, առատպար». և այդ նորա համար՝ որ Սուկաւէտի արտաքինը այդպէս չոր ու ցամաք է . . .

Սուկաւէտ անունի բացատրութեան դէմ Յուսիկ սրբազանի միւս առարկութիւնը,—թէ՝ Արաբները է. դա-

րում են արշաւել Հայաստան, իսկ Սուքիասեանց վկայաբանութիւնը արդէն կազմուած էր Ի. դարում. «ուրեմն Ի. դարից առաջ Սուքիասեանց վկայաբանութիւնը կրում էր «Նահատակութիւն ճգնաւորացն Սուկաւէտայ»,—միանգամայն թոյլ է։ Սուկաւէտայ բառը կարող էր մտնել Ձեռագրերի մէջ և փոխանակել Սուքիասեանց բառին՝ թէ շատ վաղ և՛ թէ հէնց վերջին արտագրութեանց ժամանակ. բաւական էր որ մի օր Սուկաւէտ անունը—իբրև նոյնանիշ Զրաբաշխի — կապուած լինէր Սուքիասեանցների հետ։ Բացի այս, Արաբների արշաւանքներից առաջ էլ հնարաւոր էր այդպիսի օտար անունների հանդիպել մեր երկրում, օրին. Կոտայք, Բարկուշատ, Եաշտիշատ, Շահապիվան, ևն։ Եաշտիշատ և Շահապիվանը ևս նոյն կերպով եմ բացատրել, միայն իմ բացատրութեամբ հասկանալի է դառնում «Շահապն Շահապիվանից». իսկ Եաշտիշատը և Շահապիվանը՝ յիշում են մեր Դ. և Ե. դարերի հեղինակները—Ագաթանգեղոս, Բիւզանդ, Խորենացի, այն ժամանակ՝ երբ Արաբները չէին արշաւել մեր երկիրը . . .

Սուկաւէտը՝ Զրաբաշխի թարգմանութիւնն է, կամ ընդհակառակն. տես իմ բացատրութիւնը (Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ, Բ. հատ. եր. 86—89)։ Ա՛լ բան է՝ եթէ ուրիշ աւելի յայտ բացատրութիւն լոյս տեսնէր մի օր։

Բարդ. եպս. Գէորգեան.

6 փետրվարի 1906 թ.
ի Ս. Էջմիածին։

ՈՒՂՂԵԼԻ ՄԻ ԿԵՏ ՓԱՒՍՏՈՍ ԲԻԶԱՆԴԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Որչափ էլ մեր հին մատենագիրների գործերը քրքրուած լինեն, բայց և այնպէս դեռ շատ ուղղելի կէտեր կան, որոնք կարող են շատ բան պարզել, և այս կամ այն եղրակացութիւնը գրել կամ հաստատել։ Ա.յսպիսի մի սխալ կէտ Փաւստոսի պատմութեան մէջ կամենում ենք ուղղել, և կարծում ենք, թէ այդ սրբագրութիւնը շատ կարևոր է։

Փաւստոսը իւր պատմութիւնը սկսում է մի ընդհանուր խոստաբանութեամբ (=յառաջաբան), ուր ասում է. «Ա.յս ինչ է ի դպրութիւնս երրորդ՝ պատմութեանցս. ժամանակագիր կանոնք մատենից (=պատմութեանց ժամանակագրական ցանկի), և առ նմին դպրութիւնք երեք, այսինքն են սոքա չորք մատեանք և չորեքին միոյ իրաց յիշատակարանք են, յիշեցուցիչք պատմութեանց աղգացն Հայոցն աչխարհին»։ Կարծում ենք, թէ այս հատուածի իմաստը հասկանալու և մտքով յաջորդ մասերի հետ կապակցելու համար այնտեղ պէտք է մի փոփոխութիւն մտցնել, այն է՝ վերցնել բուքը երրորդ բառի մօտից, ինչպէս որ գլուած է բոլոր տպագրութիւնների մէջ, և դնել «ի դպրութիւնս» բառից յետոյ, այսպէս «Ա.յս ինչ է ի դպրութիւնս՝ երրորդ պատմութեանցս»։ Մի այսպիսի՝ ինքնըստինքեան աննշան բայց կարևոր, փոփոխութիւն անել ստիպում է Յառաջաբանի ամբողջ միտքը, ուր հեղինակը իւր գրելիք պատմութեան ամբողջ բովանդակութիւնն է ներկայացնում և ոչ թէ միմիայն երրորդ դպրութեան պարունակութիւնը։

Ա.յսպիսի փոփոխութեամբ այն էլ կը պարզուի, որ Փաւստոսը իւր գլուածքը կոչել է «երրորդ պատմութիւնք»։ Ո՞վ է գրել Ա.ռաջին և երկրորդ պատմութիւնը։

Այս հարցման կրկին Փաւստոսն է պատասխանում իւր երկրորդ Ցառաջաբանի մէջ (գլ. Ա.) ասելով. «Է ինչ մեր պատմութիւն, որ առաջին է, և է ինչ, որ վերջին է. իսկ որ միջին ինչ եղև, այն ի ձեռն այլոց գրել գրեցաւ»։ Ի նկատի առնելով վերոյիշեալ սրբագրութիւնը՝ այստեղից պարզ կը տեսնենք, որ Փաւստոսը գրել է Հայոց Առաջին կամ Նախնական և երրորդ կամ վերջին պատմութիւնը. իսկ միջին կամ երկրորդ պատմութիւնը ուրիշներն են գրել։ Եւ որովհետև Առաջին պատմութիւնը երկու դէպքութիւններից է կազմուած եղել, այս պատճառով էլ երրորդ պատմութիւնը երրորդ դպրութեամբ է սկսում։ Այսպէս միայն կապակցւում են Փաւստոսի կրկին յառաջաբանները։ (Փաւստոսի նմանութեամբ Ղ. Փարպեցին ևս կրկին յառաջաբաններ ունի, և կարծում ենք, որ երկրորդ յառաջաբանը—ընդ բազում ճառս մատենից—պէտք էր բուն դրքի մասը համարել և Դրօտագ Ա.-ի տակ դնել Փաւստոսի նման, և ոչ թէ միայն տպագրել)։

Բայց «Նահապետների խոստաբանութեան» մէջ մի ուրիշ ուղղելի կէտ ևս կայ, այն է՝ «ժամանակագիր կանոնք մատենից» բառերից յետոյ՝ անշուշտ պէտք է աւելացնել «երրորդ դպրութիւն» բառերը, ինչպէս որ յաջորդող «առնմին» խօսքն էլ պահանջում է, այսպէս. «Այս ինչ է ի դպրութիւնս՝ երրորդ պատմութեանցս. ժամանակագիր կանոնք մատենից. երրորդ դպրութիւն և առ նմին դպրութիւնք երեք... ոչքա չորք մատեանք»։ Փաւստոսը կանխահոգ մտածութեամբ ունեցել է այստեղ մեր աւելացրած «երրորդ դպրութիւն» բառը թերութեան որ և է կասկած փարատելու համար։

Բայց Փաւստոսի գրած Հայոց Նախնական կամ Առաջին պատմութիւնը՝ որ առանձին գործ է եղել երկու դպրութեամբ, ծանօթ չէ եղել նաև Ղ. Փարպեցուն, որ ոչ միայն այդ մասին յիշատակութիւն չի անում, այլ և սխալուելով Ագաթանգեղոսի պատմութիւնը համարում է Առաջին պատմութիւն, Փաւստոսինը՝ երկրորդ, իսկ իւր գրածը՝ երրորդ։

Մնայէլ է արդեօք Փաւստոսի Առաջին պատմութիւնը. այդ մասին մի այլ անգամ։

Հանդամանքից օգտուելով բանասէրների ուշադրութիւնը հրաւիրում ենք մի կէտի վրայ ևս։ Մեծ Հաւանականութեամբ եղծ Աղանդոյ գրքի հեղինակ եղնիկը նոյնացուում է Սահակ Պարթևի աշակերտ եղնիկի հետ, որ ս. Գրքի երկրորդ թարգմանութեան կամ սրբագրութեան մասնակցել է։ Բայց ինչպէս կարելի է հետևեալը բացատրել։ Եղծ Աղանդոյի մէջ (եր. 98) հեղինակը խօսելով յուշկապարիկների մասին՝ մէջ է բերում ս. Գրքի մէկ խօսքը—«Ծուշկապարկաց ասեն բնակել յաւերականս», և առաջ աւելացնում է. «զոր յոյն լեզու իշացուլս ասէ», այսինքն թէ հայերէն Աստուածաշնչի մէջ յուշկապարիկ է, իսկ յունարէնի մէջ իշացուլ։ Արդ կարո՞ղ էր Աստուածաշնչի թարգմանութեան մասնակցող եղնիկը մի այսպիսի համեմատութիւն անել. յետնութեան նշան չէ՞ արդեօք։

Զ.

14 հոկտ. 1905 թ.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Ձեռնարկ»ներ Կրօնական գիտելիքների». Ա. տարի, 253 եր., գինը՝ 60 կոպ., Բ. տարի, 115 եր., գինը՝ 40 կոպ., Գ. տարի, 103 եր., գինը՝ 40 կոպ., Թիֆլիս:

Երեքն էլ կազմուած են նախապատրաստականի համար: Կազմել է Առաքել ատագ.—ֆան. Բագրատունի:

---

1) *Ա. տարի.*

Ինչպէս դրքի առաջաբանից երևում է, առաջին տարուայ ձեռնարկը պատրաստուած է կարդալ-գրել չգիտեցող մանուկների համար, հետևապէս նրանց ձեռքը տալու չէ: Հ. Հեղինակը այս ձեռնարկը յատկապէս Թիֆլիսի Մարիամեան-Ցուլիանեան օր. դպրոցի աշակերտուհիներին է յարմարեցրել, այն դպրոցի, որտեղ լինքը դասատու է, և ուր խրատքանչիւր դասարանում շաբաթը երեք դաս է որոշուած: Իմաստներն ու ազօթքները, թէպէտ բերուած են դրաբար ու աշխարհաբար, սակայն մանուկները սովորելու են միայն աշխարհաբար: Տարուայ ընթացքում աւանդուելիք դասերի թիւը 41 է:

Դասերը աւանդւում են հարց ու պատասխանով, ծանօթից անծանօթը դնալով, և վերջը, ուսուցչի կողմից ամփոփուելով: Վերջինը, իսկապէս, զեկավարում է սանիկներին: Ինձ խորթ է թւում, սակայն, այն հանգամանքը, որ նոր դասն էլ ուսուցիչը աւանդում է մանուկներից մէկի միջոցով, այն հիման վրայ, որ նրան առաջուց ծանօթ է դասի բովանդակութիւնը: Այդպիսի մէկը, իր կարծիքով, միայն խանգարել կարող է, ոչ թէ պիտանի լինել: Ուրիշ բան է, եթէ մանուկների մեծ մասը որ և է դաղափար ունենար աւանդուելիք նիւթի վերաբերմամբ:

Տանուհինգերորդ դասից սկսած՝ լոյս է ընկնում և՛ թրքահայ կամ արևմտեան բարբառը, որ, կարծիր

թեզի պէս, անցնում է ամբողջ դրքովը։ Խօսք չկայ շատ լաւ միտք է, որ ուսուհայը սովորի թրքահայի բարբառը, և՛, դրան հակառակը։ Բայց, այդ նպատակին դիմել այս ատիճան արհեստականն եղանակով,—անհամեմատելի է։ Ոչինչ չեի ունենայ ասելու, եթէ մանուկների կէսը, կամ գոնէ քառորդը, թրքահայեր լինէին։ Բայց ինչ միտք ունի՝ դասարանում ալատահմամի գտնուած մի-երկու երեխայի պատճառով. դիրքը,—հետևապէս և ողջ դասարանը,—խօսեցնել երկու բարբառով։ Բնականը, այս դէպքում, իսկապէս, այն է, որ երկու-երեք թրքահայ մանուկները, ամենայն հեշտութեամբ, կսովորեն մեր բարբառը, որը նոյնքան է կարևոր նրանց, ինչքան նրանցը՝ մեզ։ Կամ ինչպէս պէտք է օգնեն երեխաներին տանը, նրանց ծնողները,—ինչպէս ցանկանում է հեղինակը,—քանի որ նրանք, շատ շուտով, կանգ են առնելու բոլորովին մի օտար բարբառի առջև։

Ցաւալին այն դէպքս, հ. Բագրատունու յօրինած այս «Ձեռնարկը» բոլորովին ռէլիեֆ կերպով դուրս է գալիս Կրօնքի՝ մեր բոլոր միանման ձեռնարկների շարքից։ Հեղինակը միակն է, որ ինքնուրոյնութեան ցանկալի ճանապարհն է բռնել։ Շնորհաւորել միայն կարելի է այսպիսի մի սիրուն քայլ, մանաւանդ որ նա սրանով շատ է թեթևացնում այն կրօնուսոյցների բեռը, որոնց վիճակւում է դուրծ ունենալ անգրագէտ մանկութեան հետ։

Գրքի սկզբում դրուած է ա. տարուայ ուսման ծրագիրը, այն է՝ տանը, ծնողները, եղբայրներն ու քոյրերը, եկեղեցին, եկեղեցական պաշտօնեաները, ժողովուրդը, ուսումնարանը, ուսուցիչները, աշակերտները, արհեստներ, պաշտօններ, ուտելիք-խմելիք, հագնելիք, բնութիւնը, աղօթքներ և դլխաւոր տօները։

Նայելով իր կազմուածքին, այս «Ձեռնարկը», իսկապէս, օրինակելի դասերի մի հաւաքածոյ է, բայց ձգձգուած է, շատ ձգձգուած, որով և գրքի ծաւալը շատ մեծացած։ Մինչդեռ, «ղրոյցներից» միատեսակ ու անվերջ կրկնութիւններից խուսափելու համար,—կարելի էր կորչեկա,

ամիսի մի քան տալ կրօնուսոյցների ձեռքը։ Այդ դէպքում, կարելի էր, 40 դասի փոխանակ, տալ չատ-չատ առաջին դասերը, իսկ միւսների՝ լոկ ծրագիրը, որպէս զի ուսուցիչն էլ, ծանօթ-պատրաստած նիւթերի փոխանակ, ունենար սեփական աշխատանքով ձեռք բերելու և ինքնուրոյն կերպով մշակելու գործ։ Իսկ, ինչպէս որ կայ, այդ ճապաղ ղրոյցների միջից մարդ կարող է գլուխը կորցնել։

Հ. Բագրատունին միաժամանակ ուշք է դարձնում և՛ լեզուի մաքրութեան վրա, որ շատ կարևոր հանգամանք է։ Նա աշխատում է մանուկների՝ ուսումնարան տարած ժողովրդական բառերը չարունակ դրականներով փոխարինել։ Բայց, ինչ հարկաւոր է ամէն տեղ շտկումներով ղբաղուելով, դիրքը ծանրաբեռնել, երբ կարելի էր, պատահած առաջին դէպքում ծանօթութեան մէջ յիշել, և ճնացածը ուսուցչին թողնել. չէ որ ուսուցիչ աստուածն էլ ամոտամատ չէ։

Արհեստների ու պարապմունքների մասին հասկացողութիւն տալիս, հեղինակը շատ է հեռու գնում, նա ամէն բան ուզում է դասարանում ասած լինել. ոչինչ չէ թողնում կեանքի մէջ անձամբ տեսնելու. օրինակ, դրաքննիչ, ճարտարապետ, դատաւոր և այլն. մանաւանդ որ արհեստի կամ պաշտօնի լոկ անունն ու կարճ բացատրութիւնը լսելով, նրանց մօտիկից ծանօթանալու հնարաւորութիւնը չունենալով, ոչ միայն շատ բան չէ ձեռք բերուում, այլ և անմարսելի գաղափարներ են կուտակւում մանկական ուղեղում՝ ի վնաս պարզ ըմբռնելի օգտակար հասկացողութիւնների։ 99 երեսում տպագրական արհեստն է բացատրվում, բայց մի րոպէ մտածող չկայ, որ, աչքով չտեսած, ոչինչ չի հասկացուի։

—«Գրաշարութիւնն ու Տպագրութիւնը, երկուսն էլ արհեստներ են. գրաշարը գործ ունի տառերի հետ և ծառայում է տպարանուժը. նա արույրի կտորների վերայ փորուած տառերը ջոկում է, կապում իրար հետ և բառ կազմում. այդպիսով ամբողջ երես է կազմում. յետոյ գնում են մամուլի տակ, թանձր թանաք են քսում վրան.

տպագրութեան թերթը ամրացնում են վրան և ծածկում. յետոյ մեքենան չարժում են, մամուլը ճնշում է և տպուած թերթերը մեկը մեւսի ետևից դուրս են գալիս»։

Էլի մի-երկու օրինակ։—

«Դատաւորն ունի դատաւորական աթոռ. նա է լսում բողոքաւորների բողոքները. քարտուղարն արձանագրում է դատարանում խօսուածքները։ Դատաւորը վկաներին է հարցնում, թէ ով կան. նրանց յուշմունքներն էլ գրի է անցնում քարտուղարը. այս ամենից յետոյ դատարանի անդամներն առանձնանում են իրենց խորհրդարանը, այնտեղ վերջնական որոշումն են կայացնում և դարձեալ գալիս են դատարանական դահլիճը, ուր կայացւում է վերջնական դատավճիռը» (118)։

—«Հեղինակներուն աշխատանքը շատ է. ինչպէս ըսինք—անոնք կ'հեղինակեն կամ կթարգմանեն դասագրքեր և կարդալու գրքեր—վէպիկներ, վէպեր, ժողովրդական հեքեաթներ, խաղեր, երգեր, բանաստեղծութիւններ, հանելուկներ, առակներ։ Հեղինակներուն նպատակն է, որ ժողովուրդն ու մանուկները կարդան, կրթուին, դաստիարակուին ու զարգանան» (121)։

Ու այս բոլորը,—թէև ոչ այսպէս մշակուած ձևով,—ասում են 8—9 տարեկան երեխաները. ու այս բոլորը ուսուցիչն ասում է անդրադէտ մանուկներին . . .

Գրքի մէջ խիստ աչքի է ընկնում դաստիարակական մի կեղծ ուղղութիւն, որով մանուկներին առաջնորդելը՝ ուղղակի յանցանք է։ Ես միաստակար եմ համարում այդ մեթոդի կողմից՝ հանրապէս և բարոյախօսի ու կրօնուսոյցի կողմից՝ մասնապէս, մանուկներին տուած այսպիսի մի խրատ։—

«Որդիքը պէտք է աղօթեն ծնողների համար . . . , որ նրանք արդար և սուրբ լինին, առողջ լինին, փորձանքից ու չարից աղատուեն, վատութիւն չանեն ուրիշներին . . . աղքատներին ողորմեն, աղօթասէր լինեն . . . » (28)։

Սրա առիթով շատ բան կարելի է ասել, բայց բաւականանում եմ նկատել, որ երեխայի աշխոյժ, վառվռուն

բնութիւնը այդպիսի լուրջ ու անմարսելի մտքերով չպէտք է թառամեցնել։ Թողէք, մեծանայ, և, երբ պէտքն դգայ, արդէն ինքը կաղօթի, մանաւանդ թէ ինքը կյօրինի իր աղօթքը։

Կամ այսպիսի բան. «Ի՞նչ էք կարծում, երեխայք, ձեր հայրիկն ու մայրիկն էլ ունէին պարտականութիւն դէպի ձեզ. այո, ունէին. նրանք պիտի ձեզ սիրեն, խնամեն, . . ուսումի տան, երբ մեծանաք՝ պաշտօն պիտի ճարեն ձեզ համար . . հայրիկն ու մայրիկը պիտի հսկեն ձեր դրսի քայլերի վերայ . . . » (29)։

Սխալ հասցէի չէ՞ ուղղուած արդեօք այս խրատը . . .

Այսպիսի անյարմարութիւններ շատ ունի այս «Ձեռնարկը», բայց ես դառնում եմ մանկական նկատումներիս։

Աղօթքների մասին շատ բան է ասուած, բայց,—որ գլխաւորն է,—ոչ մի տեղ չէ բացատրուած, թէ աղօթքն ինչ է ու ինչից է առաջ գալիս։

Կամենալով բացատրել սէրը, հեղինակը գրում է «Սէրն է՝ որ . . քաղցրացնում է ծնողներին իրենց կրած նեղութիւնները . . . ինչո՞ւ, նրա համար՝ որ սիրում են ձեզ» (19)։

Լոգիկա չկայ։

Հեղինակի կարծիքով, Մեծ Հայրը՝ Աստուած, մեզ աւելի է սիրում, քան մեր փոքր հայրը, որովհետև Աստուած ամէն բան կարող է անել, իսկ մեր հայրը չի կարող։ Յետոյ էլ աւելացնում է՝ «մեր հայրն էլ քիչ չէ սիրում, բայց էլի Մեծ Հայրը աւելի է սիրում» (22)։— Ո՞ւր է լոգիկան։

Փոքր հայրն ինչո՞վ է յանցաւոր, որ շատ բան չի կարողանում անել։ Ուղիղն այն է, որ սխալ եզրակացութիւններ չանելու և հակառակութիւնների մէջ չընկնելու հեշտ միջոցը՝ այդպիսի հարցեր չշօշափելն է։

Հ. Բագրատունին ջանքեր է գործ դնում մանուկներին ապացուցելու, որ Աստուած երկնքում է. դրա համար նա դիմում է հակառակ բանաձևի,—Աստուած ամէն տեղ է։ Իսկ դրանում նրանց համոզում է հետևո-

եալ հարց ու պատասխանով։

—«Աստուած մեր գաստարանումը կայ.—կայ. միւս գաստարանումն էլ կայ—կայ. հէնց այժմս, ես բոպէիս—Ա.յին։ Իսկ ճանապարհին, ծովի վրա, եկեղեցում, բանտում, . . —կայ» (23)։

Ա.յսպիսի վերացական նիւթերի մասին խօսելիս՝ շատ լաւ կլինի, որ ուսուցիչը սովորական հարց-պատասխանով չզեկավարուի, քանի որ, այնպէս տրամադրելով երեխային, որ անպատճառ ուղած պատասխանը ստացուի,—ոչ միայն մեր նպատակին հասած չենք լինի, այլ և սուտ կլինենք վշած, ճնշում գործ դնելով տղոյ գաստղութեան վրա։

Ա.յդպիսի վերացական մտքերը,—եթէ ուսուցիչը օրինակներով ու մօտաւոր նմանութիւններով չէ կարող բացատրել,—աւելի լաւ կանի, որ առաջարկի ուղղակի իրերև աքսիոմա։

Հ. Բագրատունին մանուկների վրայ վեց պարտք է դնում.—ծնողասիրութիւն, արածների հաշուետուութիւն, օգնութիւն, հատատ դէպ ծնողները, հնազանդութիւն և աղօթք՝ ծնողների համար (որ մեկը յիշեն խեղճերը)։ Իր կարծիքով, բաւական է, որ որդիքը հատատ ունենան դէպի ծնողների արարքները, հնազանդեն նրանց, ու արածների հաշիւը տան։

Հեղինակը, խրատելով հարցերի մէջ, հակասութիւնների մէջ է ընկնում։ Պահանջելով, որ մանուկները հատատ ունենան դէպի ծնողները, յանկարծ այսպիսի բան է ասում. «Շատ երեխաների հայրիկն ու մայրիկը . . կոշտ ու կոպիտ են մնայել . . , այդ դէպքում որդիքը,—եթէ հասկանում են,—չպիտի նմանուին նրանց, այլ՝ լաւերից օրինակ վերցնեն» (30)։

Յետոյ էլ,—կամենալով իր սխալն ուղղել,—նոյն երեսում աւելացնում է. «ոչ, երեխայք, նոքա սիրելի են, նոքա պաշտելի են»։

Ինչով բացատրենք։

Հեղինակը սրտի մասին այսպիսի բաներ է ասում երեխաներին, որոնք մեծերին անգամ դժուար հասկա-

նալի են։ «Սիրտը մեր կեանքն է, մեր արևն է, մեր գանձն ու հանգստութիւնն է, մեր երջանկութիւնն է» (49)։

Դրանք ուղղակի սխալ կարծիքներ են։

1) Սիրտը մեր գանձը չէ (որովհետև գանձը մեզնից դուրս է), իսկ հանգստութիւնն ու երջանկութիւնը՝ մեր գործերն են։

2) Ասելով՝ «Սիրտը մեր արևն է, մեր գանձն է» և այլն,—երեխաները նիւթապէս կընդունեն։

Բայց, միայն սիրտը չէ, որ այդպէս է. «Ուսումն էլ կեանք է, գանձ է» (60)։

Ցետոյ աւելացնում է. «Մեծ Հօր ուղած սիրտը պայծառ ու փայլուն է, ինչպէս երկնքի վերայ շողացող ու ցոլացող պայծառ աստղը և ինչպէս ադբիւրի պարզ, վճիտ, ականակիտ ջուրը . . » (49)։

Ու դեռ նա համոզուած է, որ մանուկների հետ է խօսում։

Պաշտօնների մասին խօսելիս էլ մանուկը բացատրում է.

—«Ուսուցչի պաշտօնը շատ պատասխանատու պաշտօն մըն է. և ուրքան պատասխանատու, նոյնքան և քնքոյշ, ազնիւ և մեծ պաշտօն մըն է. ուսուցչի ձեռքին է մանուկին սիրտն ու հոգին, միտքն ու կամքը . . » (114)։ «Մեր սիրտը մաքուր պահելու համար՝ (ի միջի այլոց) պէտք է . . . քահանաներին փողոցում պատահելիս, ողջունենք, ձեռքը համբուրենք և ասենք «Օրհնեա տէր» (50)։

Փոխանակ պարզ կերպով ասելու, թէ «մարդը բարի է, բայց Աստուած ամենաբարի է», հեղինակը մարդու բարութիւնը պայմանական է համարում, ասելով «Մարդը ոչ միշտ է բարի, ոչ ամենի համար է բարի»,—որ սխալ է։ Եթէ մէկը բարի է, տարակոյս չի կարող լինել, որ նա հմար միշտ է բարի, համ էլ՝ ամենքի համար։ Դրական ու դերադրական աստիճանները քերականութեան մէջ անգամ պայմաններ չեն ընդունում։

Կամ՝ մի այսպիսի բան։—

—«Դուք հայելի ունէ՞ք տանը։

—Ունինք։

—Դուք նայո՞ւմ էք նրա մէջ։

—Նայում ենք։

Ինչո՞ւ էք նայում։

—Որ ուղղենք մեզ։

Ա.յգպիսի մի հայելի են և վէպերը, առակները, բանաստեղծութիւնները, լրագիրները և թատրոնական բեմը. դրանց մէջ ահա ժողովուրդը նայում է և ուղղում է իւր սխալները» (152)։

Մինչդեռ լոյսն ու օդը ամենակարևոր բաներն են, նրանց մասին՝ մանկական աշխարհին հաղար ու մի բան կարելի է ասել, որոնք հազար անգամ աւելի չահագրգիռ ու օգտակար կարող են լինել նրանց, քան սրտի մասին ասված վերացական մտքերը,—հեղինակը կարճ է կապում իր խօսքը, աւելացնելով «Ա.յգքանը բաւական է լոյսի և օդի մասին»։ Ի զուր։

Տէրունական աղօթքի մէջ «Որ յերկինս ես» այսպէս է բացատրում. «Ինչպէս երկնքին հասնել չենք կարող, այնպէս էլ Մեծ Հօրը հասկանալ չենք կարող» (151)։

Բայց ի՜նչ մի անհրաժեշտ բան է, որ մեր աղօթքի մէջ յիշվի, թէ մենք չենք կարող հասկանալ մեր Մեծ Հօրը։ Ու, եթէ մի րոպէ ընդունենք, որ այդ այդպէս է, արդեօք դրանով մեր ու մեր Մեծ Հօր միջև մի սառնութիւն չի՞ մտնի, մի վիհ չի՞ բացվի։ Եւ միթէ այդ է Յիսուսի սովորեցրած աղօթքի նպատակը։

«Եկեսցէ արքայութիւն քո». Սրա մասին ասված է «Մենք մեր Մեծ Հօրը պիտի սիրենք իբրև հայր և նրանցից պիտի վախենանք, իբրև թագաւորից» (153)։

Կասկածելի է։ Սէրն ու վախը (երկիւղը) մի տեղ չեն կարող լինել. «Երկիւղ չ՚կայ ի սէրն», ասում է առաքեալը։

«Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»—է. Բագրատունին այս կտորը բացատրում է, ինչպէս մեզնից ամէն մէկը հասկանում է։ Սակայն, ինչո՞ւ նա հեռու է գնում իր բացատրութեան մէջ, աւելացնելով «Դու մեզ ներիր այն ժամանակ միայն, երբ որ մենք ներում ենք մեր ընկերներին . . . իսկ եթէ

մենք նրանց չներենք, դու էլ մեզ մի ներիր» (161—162)։

Իմ կարծիքով՝ այստեղ ժամանակի հարց չկայ, այլ՝ նմանություն։ Ուղղակի՝ ինչպէս մենք ենք մեր ընկերներին ներում, այնպէս էլ դու մեզ ներիր։—Տէրունական աղօթքի այս մասը ամենագեղարուեստն է ու չատ խրատական. բայց, ափսոս, որ յօրինողը չէ կարողացել օգտվել դռանից, ինչպէս պէտք է։

---

2) *Բ. տարի.*

Նիւթը սովորականն է,—Յիսուսի Յունդից մինչև անօրինական վերջին օրերի շրջանը՝ մոցած առաջին մարդկանց համառօտ կենսագրութիւնը։

Ինչքան ինձ յայտնի է, այդ վերջինը նոր բան է, կրօնի այս կամ հետևեալ տարուայ ծրագրի մէջ չկայ,—մի հանգամանք, որ բաւական դժուարացնում է ձեռնարկ պատրաստողի գործը։ Հեղինակին,—իսկը չկայ,—չի կարելի մեղադրել, քանի որ նա ստիպված է նախընթացի ու նորի միջև որոշ կապ պահպանել կամ հիմք ստեղծել։ Բայց, ինչ էլ լինի, երեխան չատ պէտք է լարի իր թոյլ երևակայութիւնը, որ կարողանայ ըմբռնել երկրորդ ու երրորդ օրերի արարչագործութիւնը։ «Վերը աստղալից երկինք, նորա տակը՝ ջրային երկինք կամ ամպեր. նրա տակը օդային երկինք կամ հաստատութիւն, իսկ բոլորովին ցած՝ երկիր—հող ու ջուր» (22)։ *Մի խօսքով՝ երեք երկինք։—Ասելը հեշտ է . . .*

Ինձ թվում է, որ լաւ կաներ նա, եթէ աշխարհի ստեղծագործութիւնը, որ—յամենայն դէպս Բ. տարուայ ծրագրի մէջ չէ մտնում,—երկու հանուր խօսքով ասէր, ու անցնէր մարդու ստեղծագործութեանը։

Մի քանի ուրիշ նկատումներ։

Աւետման նկարագրի մէջ ս. կոյս Մարիամի մասին ասուած է. «Նա յայտնեց—թէ ինքը կոյս պիտի մնայ. որովհետև ծնողները այնպէս են ուխտել»։—Սակայն, այդ-

պիսի բան չկայ. ծնողները ուխտել էին ոչ թէ, որ նա կոյս մնայ (մարդու կամքի դէմ աշխարհս բռնաբարում չէր լինի այդ), այլ՝ որ ընծայուի տաճարին։ Կոյս մնալը Մարիամի իր անձնական որոշումն էր։ Այդպէս որ չլինէր, նրա կուսութիւնը ոչինչ առաքինութիւն էլ չէր լինի։

Առհասարակ հեղինակը խիստ է հետևում Ս. Գրքի լեզուի ձևերին, որոնք, սակայն, մանուկների համար կազմուլ ձեռնարկներում պարտաւորական չեն, քանի որ այստեղ աւելի մեք է հարկաւոր, քան՝ ձևականութիւն ու շաբլոնականութիւն։

Երեխան ինչ պէտք է հասկանայ Մարիամի այս խօսքից «Ես մարդ չգիտեմ»։

Գրաբարում «զայր ոչ գիտեմ»ը բոլորովին ուրիշ նշանակութիւն ունի։ Իսկ այստեղ կարելի էր պարզապէս ասել՝ «Ես մարդ չունեմ»։

«Փառք ի բարձունս» «ի մարդիկ հաճութիւն»ը թարգմանուած է՝ «մարդկանց մէջ հաճելի յարաբերութիւն լինել», մինչդեռ նշանակում է՝ «երկնքի ու երկրի (մարդկանց) միջև հաշտութիւն եղաւ»։

Հեղինակը պատեղից է վեր առել այն միտքը, իբր թէ Յովհաննէս Մկրտիչն ուսում էր «մեծ մեծ մարեխներ»,—այն էլ՝ «փայտի կամ բարակ պարանի վերայ անց կացրած»։—Աւելի լաւ չէր լինի, եթէ բացատրէր, թէ ինչպէս էր պատրաստվում նրա կերակուրը մարեխներից ու մեղրից։

Մկրտութեան նկարագրի մէջ (51) Յիսուս Յովհաննէսին ասում է՝ «թոյլ տուր, օրէնքը արդարութեամբ պէտք է կատարել»։—Դրանից ինչ պէտք է հասկանայ մանուկը։

Պարզ ու ճիշտ չեն բացատրուած նաև ինն երանութիւններից առաջինը, երրորդն ու եօթներորդը.—դժուար են հոգով աղքատները, ինչ է նշանակում երկիր ժառանգելը, Աստծու որդի կոչուելը։

«Անառակ որդու» առակի մէջ յօրինողն ասում է «Այդ քո որդին իւր ամբողջ կեանքը պոռնիկների հետ է մաշել»—ինչքան ինձ է յայտնի, «զկեանս» ղրամական կա-

թողութիւնը պէտք է հասկանալ, ոչ թէ «կեանքը»։ Հետեւապէս, կատարվի «իր ամբողջ կարողութիւնը, ունեցածը, պոռնիկների հետ է փչացրել»։

Հոգեբալսամի նկարագրի մէջ ասված է. «Մոքա արբած չէն, որովհետև դեռ երեք ժամն է». մինչդեռ երեք ժամը, իսկապէս, հարբելու լաւ ժամանակն է։ Բայց, երբ բացատրվի, թէ այդ երեք ժամը մեր հաշուով հր ժամն է,—այն ժամանակ ուրիշ պատկեր կատարվի։

«Հարսի ու Ղազարոսի առակի մէջ կարդում ենք. «Թող սա այստեղ ուրախանայ, իսկ դու այդտեղ պապակուիր»։ Բայց խօսքը ոչ թէ այս կամ այն տեղի մասին է, այլ՝ ուրախանալու և տանջուելու։ Հետևապէս, պէտք է այսպէս շեշտուեն. «Թող սա այստեղ ուրախանայ, իսկ դու այդտեղ պապակուիր»։

Հեղինակը շատ տեղ առակների իրական, անմիջական բացատրութիւնները տալուց յետոյ, նոյնը աստուածաբանօրէն էլ է մեկնում, որ աւելորդ աշխատանք է, աչքի առջև ունենալով մանուկների, առանց այն էլ, նեղ աշխարհայեացքները,—մինչդեռ աւելի կարևոր և ուղղակի նրանից բղխող կէտերը մնում են՝ առանց բացատրութեան՝ յաճախ թողնելով, որ ուսուցիչները բացատրեն։

Օրինակներ։—«Ողորմած սամարացին» առակի մէջ հեղինակն առաջարկում է ուսուցչին «բացատրել կրօնական տեսակէտով, որ—Երուսաղէմը՝ երկինքն է, Երիքովը՝ երկիրը, վիրաւորը՝ մեղաւորը...», «Անառակ որդու» մէջ՝ «պատմուճանը՝ նախկին անմեղութիւնը» և այլն,—մինչդեռ առանց բացատրութեան է թողնում, օրինակ, այս պիսի կարևոր կէտեր.—ինչքան արժէ մեր փողով՝ դահեկանը, ինչ է նշանակում, իսկապէս, փարիսեցի, ինչ է նշանակում՝ «Ծիրոջ փառքը ծագեցաւ», ինչու Զաքարիան տախտակ պահանջեց, և ոչ՝ թուղթ, ինչու աշակերտները երկու դրաստ են բերում Յիսուսի համար, էշ եւ աւանակ, և ոչ թէ՝ մեկը, էշն ինչ է, աւանակն ինչ, ինչու խաչուածների բարձերը խորտակում էին, և այլն։

3) Գ. *տարի.*

Նիւթերն են տէրունական, ազգային ու եկեղեցական տօները, ընդ ամենը 18, որոնց մէջ մեծ տեղ է բռնում Լուսաւորչի անցքերի շրջանը։ Յարմարասոր տեղերին կցուած են Նարեկանից առնուած համապատասխան քաղուածքները, սակայն, մանուկների ուժերից վեր չափերով, թէպէտ յօրինողը պարտաւորական չէ համարում նրանց բոլորի անցնելը։

Ինչ վերաբերում է ս. Եղիշէի, Մովսէս Խորենացու, Գրիգոր Նարեկացու և Ն. Շնորհալու համառօտ վարքագրութիւններին,—որոնք ոչնչով չեն կապւում գրքոյկի բուն նիւթերի հետ,—անտեղի են։ Դրանք, այդ սրբազան գրողները կարող են շատ սիրելի լինել մեզ, բայց, մանկավարժական տեսակէտից, դրանց վարքագրութիւնները մանկական գրքոյկներում՝ աչքի ընկնող անյարմարութիւն են համարւում։

Գալով ս. Նուշանիկին, նրա վարքագրութիւնը շատ տեղին է, թէ այն պատճառով, որ նա մեծ ժողովրդականութիւն է վայելում մեզնում, և թէ այն, որ նրա հայր, Մամիկոնեան Վարդանը արդէն պատկառելի տեղ է բռնում այս «Ձեռնարկի» մէջ։

Սակայն իր նկարագրութիւնների մէջ հեղինակը շուտ-շուտ է մէջ բերում երկրորդական անուններ, որոնց գոյութիւնը ոչ միայն ոչինչ օգուտ չէ տալու, այլ և նորնոր անկիւններ է պահանջելու մանկական,—առանց այն էլ փոքրիկ,—ուղեղներում։ Բաւական է միայն յիշել, թէ ինչ դժուարութիւններ են պատճառում նոյն իսկ միջին դասարանների աշակերտների աշխարհագրական ու պատմական անունների, թուերի ու թուականների անգիր անելը։

Մեծ սխալ եմ համարում ես նաև այն կարծիքը, թէ «գրաբարաձև բառերն» ու ոճերը լեզուին գեղեցկութիւն են տալիս, քանի որ լեզուի գեղեցկութիւնը ոչ թէ խրթին ու ճռճռան բառերի, այլ պարզութեան ու հասկանալի լինելու մէջ պէտք է փնտռել։ Իսկ Հ. Բագրա-

տունին դրանով ուղում է «սաներին մաքուր խօսելու մէջ վարժեցնել» (42)։

Աւելի անտրամաբան ինչ կարող է լինել, երբ մի կողմից աշխատում ենք մեր մաքերը, մանաւանդ կրօնական հասներին, ինչքան կարելի է, պարզ ու հեշտ ըմբռնելի անել մանուկներին, միւս կողմից զօրով ենք խաչընդոտներ ստեղծում, որպէս զի նրանք այդ մաքերը չհասկանան։

Աւելի լաւ չէր լինի, եթէ նա, օրինակ, կարդացողի ականջը ազատէր անտեղի իսկերից։ «Իսկ շաբաթական պահքը ասւում է վանցոց պահք։ Իսկ տաճարիս լուսաղէն սիւների տեղերում չինեցին տաճարիս մատուռ. իսկ այն եկեղեցին, ուր բազմեցրին . . » (16)։

Ս. Գրիգորի ընդարձակ վարքագրութեան մէջ ոչ մի տեղ չէ բացատրուած, թէ ինչու նա Լուսաւորիչ կոչվեց։— Կամ ինչ հայերէն են հետևեալները։

«Որով մենք ճանաչուել ենք գիտնական աշխարհին» (102)։—Խորենացին չաղացական է եղել . . և պարեգօտներից արհամարհուած» (103)։—«Լսեցի քժշկութիւններիդ մասին, որ լինում է Ձեռքով» (26)։—«մտաւ մեհեանը իւր շնորհակալութեան մաղթանքները տալու . . . դիցուհուն» (43)։

Հ. Բագրատունին շատ տեղ, պարզ հասկանալի մաքերի համար էլ ծանօթութիւններ է դնում. աւելի կարևոր չէր, որ բացատրէր, թէ ինչու «պահքը առաջաւորաց է կոչւում, և ինչու ժողովուրդը ս. Սարգսի պաս է անուանում»)48)։

Նա յաճախ հակառակ է գնում տրամաբանութեանն ու հետևողականութեանը։

«Երեք տարեկան Գրիգորին նորա . . դայեակը մկրտել տուաւ . . և անունը դրին Գրիգոր» (40)։—Դեռ ասում է՝ «23 տարեկան Տրդատը . . սիրելի էր դարձել . . Լիկիանոս իշխանին», յետոյ «այդ կոտորածից ազատուեցան . . Խոսրովիդուխտ . . և Տրդատ, որին նախարարը փախցրեց . . Հռոմ» (41—42)։—Դեռ՝ «Հռոմից փախաւ Հայաստան ս. Հռիփսիմեան . . կոյսերը», յետոյ՝ «Հռոմ-

մում կար մի կուսանոց . . այդ կուսանոցումն էր և Հռիփսիմէ անունով մի աղջիկ» (44)։

Նա ստոյգաբար քրիստոնէութիւն տալիս նախադասութեան գլխաւոր անդամին, և տանեակ տողեր թողնում է առանց ենթակայի, մի հանգամանք որ թէ քերականական սարիկաստրի կողմից մի անյարմարութիւն է, և թէ մանաւանդ մանուկներին զրկում է պատմուածքի գլխաւոր առարկայի վրա յենուելու յարմարութիւնից, եթէ չասեմ—անհրաժեշտութիւնից։ Օրինակներ.

«Բայց սուրբ Գրիգորը հրաժարւում է այդ կոչումից (47). միւս անգամ այդ անուանը (իբրև ենթակայի) հանդիպում էք միմիայն քսան եւ ութ տող անցնելուց յետոյ։—«սուրբ Գրիգոր Լուսաւորիչը եղաւ . . առաջին կաթողիկոսը» (51). անցնում էք 24 տող,—ու էլ չէք հանդիպում այդ անուանը։

Ձէ հ. Բագրատունին մանուկների համար ո՛չ կարգին մշակուած պատմուածքներ է կարողանում տալ, ոչ էլ՝ հնչուն ըմբռնելի դասեր կազմել։

Զպէտք է մոռանալ, որ նրա երեք դրքոյկներն էլ կրտսեր նախապատրաստականի տաներին են յատկացուած։

Բայց նրա «Ձեռնարկը» սխալ մտքեր էլ է պարունակում։

Նա ասում է «Հանգանակ հաւատոյ՝ հաւատի բաժինն է, մասնակցութիւնն է, դաշն է, դրաւն է. նա ուղիղ պիտի արտայայտուի հաւատոյ վարդապետութեան մասին» (62)։

Սխալուում է։—Հաւատի հանգանակը ո՛չ թէ հաւատի բաժինն է, և այլն, այլ՝ ինքը՝ հաւատի վարդապետութիւնն է։ Նա ամբողջն է, ո՛չ թէ՝ նրա մի մասը։

Ասում է՝ «Քիստոս ինքը՝ Հօր հետ մի բնութիւն, մի գոյացութիւն է կազմում» (63)։—Պարզ չէ։ Անշուշտ, նա դրանով չէ ուզում ասել, իբր թէ նրանք երկուսով են մի բնութիւն կազմում։ Ու, եթէ այդպէս է, այդ դեպքում պէտք է ասէր՝ «Քիստոս իր Հօր բնութիւնից է,

նրա էութիւնից է. այսինքը ինչ որ Հայրն է, այն էլ Որդին է»։

Գրում է. «Ս. Մեսրովբ վարդապետը եկեղեցական սովրք գրքերից Մաշտոց ասուած գիրքը կանոնաւորելու համար՝ կոչում է Մեսրովբ Մաշտոց»։

Սխալվում է—«Մաշտոց» բառը Մեսրոպի իսկական անունն է, որից և մեր ծիսարանը առել է իր անունը։ Հեղինակութիւնը, գրուածքն է իր անունը առնում հեղինակի անունից, ոչ թէ՝ հեղինակը՝ հեղինակութիւնից։

Նա գրում է «Ս. Գրիգոր Նարեկացին . . ուսաւ Նարեկայ վանքումը . . . և նոյն վանքին վանահայր կարգուելով, կոչուեցաւ Նարեկացի»։

Է՛լի սխալուում է։ Նարեկը գիւղի անունն է. այդ գիւղից էր ս. Գրիգորը, այդ պատճառով էլ կոչում է Նարեկացի։

Երկու խօսք էլ՝ թարգմանած կտորների մասին։

Հռիփսիմեանց շարականի մէջ «վաճառականք առատք անյայտ մարգարտին» (58) թարգմանած է՝ «Իբրև առատ վաճառականներ՝ անյայտ մարգարիտն էին որոնում—Քրիստոսի վեհայութիւնը և նորա աստքայութիւնը»։

Իմ կարծիքով՝ պէտք է թարգմանուէր. «Իբրև վաճառականներ, գնալով հեռաւոր երկրներ առատ-առատ, նոյն իսկ ձրի տուին հաւատի մարգարիտը, որ անյայտ էր այն կողմերի ժողովուրդներին»։

Առաքեալների շարականում «Հայրատունկ այգւոյն հրեղէն պարիսպք և բարձր աշտարակը, ոսկեղէն բաժակը և ժիր մատուռակ» (34) հ. Բագրատունին, «այգի» ասելով, Հայաստանն է հասկանում, և Թադէոսին ու Բարթողիմէոսին՝ Հայաստանի հրեղէն պարիսպները։

Ինչքան ես եմ հասկանում, այդին՝ եկեղեցին է, և առաքեալները այդ եկեղեցու պարիսպներն են՝ եկեղեցու հիմնադիրների դէմ։—Իսկ բաժակների ոսկեղէն լինելը ոչ թէ նրանց՝ ժանգ չվերցնելու յատկութիւնն է ակնարկում, այլ՝ իմաստութեան և սիրու դիմով լցված լինելը։

Վարդանանց շարականի մէջ «Նորահրաշ ալասկաւորը

թարգմանել է «Թելքից վեր հրաշալի պսակը գլխիդ դրած» . . զօրագլուխ դարձար։

Այն ինչ ես կթարգմանէի՝ «Նորահրաշ է քո պսակը, որովհետև ոչ թէ, ուրիշ պսակաւորների պէս, ապանելով պսակեցիր, այլ՝ մնռնելով»։

Յամենայն դէպս, չնայելով այսքան ու այսպիսի թե՛ րուէիւններին, Հ. Բագրատունու «Ձեռնարկները մեր կրօնուսոյցներից չատերին կարող են գոյալի ծառայութիւն անել։

Էմմ. Եաե. Նազարեանց.

10 Նոյեմբեր 1905 թ.
Մոսկվա.

ԳԻՏԱԿԱՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Պրոֆ. Ի. Գ. Օրբելիակի

(Շարունակութիւն եւ վերջ).

Այդ հանգամանքը անյաղթելի արգելք կը լինէր հոգեբական ինքնադիտողութեան, բայց բարեբաղդաբար մեր գիտակցութեան ծաւալը թոյլ է տալիս որոշ ընդարձակութիւն՝ մանաւանդ տպաւորութիւնների մի քանի խմբերի՝—օրինակ տարածութեան և ձայնի վերաբերութեամբ։ Այդ խմբի տպաւորութիւնները առաւել զգալի դարձնելու համար կարելի է նրանց աւելի տեսողականացնել, որից բարօրութիւն են ինքնադիտողութեան պայմանները։ Իսկ տպաւորութիւնների այլ խմբերի մէջ, ինչպէս և վերացական մտածողութեան, զգացմունքների, ցանկութիւնների միջոցին թէև սևեռած ուշադրութիւնը առաջ է բերում

չատ ուժգին կեդրոնացումն, բայց ինքնագիտողութեանը օժանդակ է հանդիսանում այդտեղ այդ գործողութեանց աւելի տեղական պայծառ վերարտադրութիւնը, որը գլխաւորապէս վերաբերում է լոգիքական գործողութեանց։ Հաւանական է, որ դրանով պէտք է բացատրել ինքնագիտողութեան և ինքնաքննութեան ամենամեծ յաջողութիւնը հոգեկան կեանքի սֆերայում։

Ջուտ հոգեկան գործողութեանց ժամանակ պայծառ վերարտադրութեանը օժանդակում է նաև իւրաքանչիւր լոգիքական գործողութեան տրամադրութիւնը՝ նման գաղափարներ վերարտադրելու մեր ունեցածին, կամ մեր գաղափարի հետ սերտ կապուած որոշ մտապատկեր ու գաղափարներ։ Այդ բանի շնորհիւ առաջ է գալիս մի պայման այդ հոգեբանական երևոյթների և առաւել յաջող ինքնագննութեան։

Ինքնագիտողութեան ժամանակ հանդիպած արգելքների շարքում պէտք է յիշենք և այն ոչ պակաս նշանաւոր հանգամանքը, որ մեր սեփական հոգեկան երևոյթների վրայ մեր ունեցած իշխանութիւնը անհամեմատ աւելի թոյլ է, քան մեզ շրջապատող ֆիզիքական աշխարհի վրայ։

Մեզ շրջապատող երևոյթների և առարկաների մեծագոյն մասը միշտ մեր տրամադրութեան ներքոյ է և կարող է ծառայել մեզ որպէս դիտողութեան նիւթ իւրաքանչիւր անգամ՝ երբ մենք միայն կը ցանկանք։ Մի՛ւսները մեր տրամադրութեան ներքոյ են որոշ ժամանակ, որը մենք կարող ենք նախատեսնել առաջուց։ Երրորդ խմբին, որը մեզանից հեռու է գտնւում, կարող ենք մօտենալ ինքներս, կամ նրանց մօտեցնել մեզ։

Հէնց միայն այն հանգամանքը, որ արտաքին աշխարհի առարկաները ու երևոյթները մեզ հնարաւորութիւն են տալիս առաւել երկար ժամանակ տպաւորելու ըստ ժամանակի և տարածութեան, ահագին իրաւունք է տալիս մարդուն այդ երևոյթների վրայ այն տեսակէտից, որ նա կարող է մեծ յարմարութեամբ և աղատապէս ընտրելով դիտել և ուսումնասիրել նրանց։ Այդ հնարաւորութիւնը

զգալապես զօրանում է և նրանով, որ մարդուս կամքից է կախուած այս կամ այն առարկան դիտելու բոպէն, տեղն ու պայմանները։

Որպէս դիտող՝ բոլորովին այլ պայմաններուն է գտնուում մարդս իւր հոգեկան աշխարհի և իւր գիտակցութեան ներքին երեւոյթների վերաբերութեամբ։

Ճիշտ է, առարկաների վրայ ունեցած իշխանութիւնը միևնոյն ժամանակ որոշ չափով մեզ իշխանութիւն է տալիս և որոշ զգացողութիւնների և մտապատկերների վրայ, որովհետև մեր քմայից համաձայն հնարաւորութիւն ունենալով կատարելու այս կամ այն առարկաների և երեւոյթների դիտողութիւնը, հնարաւորութիւն ենք ձեռք բերում մեր ցանկութեան համաձայն առաջ բերելու այս կամ այն զգացողութիւնները և մտապատկերները։ Բայց վերև առաջ բերած պատճառների չնորհիւ այդ ընդունակութիւնն առաւել մեծ արդիւնք է տալիս բնութիւնը դիտելիս, քան ինքնադիտողութեան ժամանակ։ Բացի դրանից, չպէտք է աչքաթող անել, որ կամայական ինքնատիրութեան այդպիսի հնարաւորութիւնը, ինքնադիտողութեան այդպիսի կողմնակի ստորադրութիւնը մեր կամքին՝ տեղի ունի մի միայն մի քանի տպաւորութիւնների ժամանակ։ Դրա փոխարէն առաւել բարդ մտապատկերների մեր մտաւոր աշխարհում, զգացմունքների և կամքի գործողութեանց արտայայտութեան և տրամադրութեան միջոցին և այլն, մի խօսքով մեր գիտակցութեան ամենագաղտնի (ինտիմ) և արժէքաւոր շրջանում ինքնադիտողութեան ժամանակ կամքի ազդեցութիւնը հաւասար է զրոյի։

Այս հակադրութիւնը՝ բնութիւնը դիտելու գործողութեան համեմատական կախուածն մարդու կամքից, և այդ կամքի կատարեալ բացակայութիւնը զուտ ինքնադիտողութեան ժամանակ առանձին նշանակութիւն է ստանում այն պատճառով, որ մարդս տրամադիր է միանգամայն հակառակն երեւակայելու, այսինքն նա տրամադիր է հաւատալու իւր կամքի կարողութեանը իւր իսկ հոգեկան

աշխարհի վրայ։

Կարևոր է յիշել, որ դիտողութեան մեր կամքից կախուած լինելը փորձի ամենաէական պայմանն է, փորձի, որ ճշմարիտ դիտութեան իսկական աղբիւրն է. և ինքնագիտակցութեան և ինքնադիտողութեան մեր կամքից կախուած չը լինելը ամենամեծ արդելք է հանդիսանում հոգեբանութեան մէջ փորձն ընդունելու։

Ինքնադիտողութեան և աշխարհի ուսումնասիրութեան աննպաստ պայմանների ցանկը լրիւ չի լինիլ, եթէ մենք չը յիշենք դիտակցութեան և մի առանձնայատկութիւնը— այն է դիտակցութեան բոլոր տարրերի չափազանց խառն և խճճուած դրութիւնը։

Դիտելով մեզ շրջապատող ֆիզիքական աշխարհը, մենք նրա բարդ երևոյթներից միշտ կարող ենք ընտրել այն երևոյթը, նրա ցանկացած մասը, կամ նոյն իսկ այն ցանկացած վայրկեանը, որը դիտելու կարևոր ենք դանում։ Այս վերլուծութիւնը, որին ֆիզիքան և քնագիտութիւնը պարտաւոր են իրենց փայլուն յաջողութիւններով, ձեռք է բերում հաղարաւոր դարձիքներով և յարմարութիւններով, որպիսիք իւր տրամադրութեան նեյքոյ ոնէ տեխնիկան։

Մտաւոր աշխարհում՝ բոլոր տարրերի փոխադարձ խճճուած լինելու պատճառով որ և է տարրի այդպիսի առանձնացումը և վերլուծութիւնը չափազանց դժուարին է, իսկ երբեմն դառնում է բոլորովին անկարելի։

Ենթադրենք, որ մենք պէտք է վերլուծենք մեր կամք՝ որ և է գործողութիւնը, մենք իսկոյն համոզւում ենք, որ այն յատուկ կողմը, որը մենք ենթադրում ենք այդ գործողութեան մէջ, այն է՝ ընտրութեան վայրկեանը, կամ վճիռը և կամ ճիգը՝ չի առանձնանում դիտակցութեան մէջ։ Կամքի գործողութեան մէջ՝ վերլուծելիս մենք դանում ենք շատ հարուստ և բարդ բովանդակութիւն՝— նպատակ, ծածկած մտքներ, և նախընթաց դժուարութեանց դիտակցութիւն, և զգացմունք շատ տարբեր բնաւորութեամբ տուած վճռին թեր և դէմ։

Մի խօսքով վոխանակ մեր սպասած հասարակ և տարրական գործողութեան, մենք հանդիպում ենք հոգեբանական երևոյթների բարդ խմբակցութեան և կազմի։

Նոյնն է լինում զգացմունքների և մտքերի ժամանակ. վերջիններիս մէջ վերլուծութիւնը երբեմն երևան է հանում բազմաթիւ ծածուկ խմբակցութիւններ, որոնց ուղղութիւնն իւր կարգին իւրաքանչիւր վայրկեանին կախուած է ոչ թէ միայն տրամաբանական մեխանիզմից, այլ նաև տրամադրութիւնից, ինքնազգացողութիւնից և այլն։

Թւում է, թէ տարրական գիտելիների գործողութեանց չրջանում՝ տպաւորութիւններ ստանալիս ինքնագիտողութեան պայմաններն առաւել նպաստաւոր են. այս դէպքում կարծէք արտաքսուած է զգայողութեան և մեր անձի ազդեցութեան տարրը, չի նկատւում խմբակցութեան մասնակցութիւնը և մտապատկերների և զգացողութիւնների կազմակերպութեան գործողութիւնը կարծէք հասցրած է ամենամեծ պարզութեան և տարրականութեան։ Սակայն չը նայեած, որ մեխանիզմն այստեղ իսկապէս զգալի պարզութեան է հասցրած, բայց և այնպէս նա այնքան պարզ չէ, որքան մեզ թւում է այդ սեփական ինքնադիտողութեան միջոցին։

Մտապատկերների կազմութեան գործողութեան վերլուծութիւնը այստեղ էլ երևան է հանում մի գործօն՝ (ֆակտօրի՝) ուշադրութեան մասնակցութիւն, որը երբեմն ծածկուած է, երբեմն էլ յայտնի երևան է գալիս։ Նրա դերը մտապատկերների ծագման և կազմակերպութեան ժամանակ, նրան կատարելութեան, պայծառութեան և տևականութեան համար՝ շատ մեծ է։

Այդ գործօնը, որ միևնոյն ժամանակ և հոգեբանական է և ֆիզիօլօգիական, այնքան պարզ և տարրական չէ, որքան առաջներն էին կարծում։ Նա իւր մէջ բովանդակում է և չարժող տարր—կամքի արտայայտութեան և զգայական գոյնի—գոհունակութեան և դժգոհութեան հետքեր և ցանկութեան սաղմն. ուշադրութիւնն ինքը մեր անձի հոգեկան բարձր մեխանիզմի, մեր «ես»-ի հետ շատ

սերտ կապ ունի։

Վերջապես ինքը՝ հասարակ տպաւորութիւնների կազմակերպութեան մեխանիզմը հանդիսանում է հոգեբանական մի բարդ գործողութիւն։ Հելմհոլցի տաղանդաւոր հետախուզութեանց շնորհիւ յայտնուեց, որ դիտակցութեան ամենահասարակ և անվերլուծելի տարրի կազմակերպութիւնը որոշ՝ դիցուք կարմիր գոյնից ստացած տպաւորութիւնը հետևանք մտքի անդիտակցական եղրակացութեան, այսինքն մի այնպիսի գործողութեան, որը իւր կողմից կազմուած է մի քանի բաղադրական մոմէնտներից։

Վերոյիշեալ օրինակից կարելի է եզրակացնել, թէ որքան բարդ են հոգեբանական գործողութիւնները և որպիսի դժուարութեանց է հանդիպում անմիջական ինքնադիտողութիւնը։

Հոգեկան աշխարհում, մանաւանդ դիտակցութեան մէջ, բոլոր թելերը փոխադարձ խճճուում են, շարժման բոլոր գծերը փոխադարձ և բազմից ընդհատում են իրար, բոլոր հիմնական տարրերը, եթէ միայն նրանք իրականապէս գոյութիւն ունին, կուտակուած են իրար վրայ և կարծէք թափանցում են իրար մէջ՝ հակառակ բնական երևոյթների անթափանցելիութեան։ Վերջապես դիտակցութեան ամբողջ աշխարհը հանդիսանում է որպէս մի չը քանդուող կծիկ, որը ոչ սկիզբ ունի և ոչ վերջ, և որտեղ չի կարելի զննել որ և է թելի առանձին ընթացքը, առանձնացնել գործօններից որ և է մէկը։

Հոգեբանական տարրերի այդ փոխադարձ խճճումն մեր դիտակցութեան մէջ հետևանք է դիտակցական երևոյթների անբաժանելիութեան, առարկայականութեան վերածելու անհնարաւորութեան, հետևանք է նրանց անկայունութեան, և դիտակցութեան ծաւալի սահմանափակութեան, որը վերջի վերջոյ յանգում է դիտակցութեան անձնականութեան։

Հոգեկան աշխարհիս ուրեկտիւ դրութիւնը (անձնականութիւնը), իւր ուղղակի և կողմնակի հետևանքներով,

լուրջ արդելք է հանդիսանում ինքնագիտողութեան և հոգեկան աշխարհի ուսումնասիրութեան։ Դրանով էլ բացատրւում է հոգեբանութեան՝ որպէս գիտութեան՝ յետամնաց դրութիւնը ֆիզիքայի և բնագիտութեան արագ յաջողութիւնների համեմատութեամբ։

Եւ հոգեբանութեան այդ յետամնաց դրութեան ամենաչնչափելի արտայայտութիւնը նկատւում է նրանում, որ գիտակցութիւն ուսումնասիրող գիտութեան մէջ չափ չկայ հոգեբանական երևոյթները չափելու, իսկ առանց չափելու՝ գիտութիւն էլ չկայ։

Չափելը յատուկ և ամենահասուն ձևն է, ինչպէս մի քանի երևոյթներն իրար հետ՝ այնպէս էլ մի երրորդ անփոփոխ մեծութեան հետ համեմատելու։

Ֆիզիքական աշխարհում կան և չափելու մշտական մեծութիւններ, որոնք կարող են որպէս համեմատութեան միութիւններ՝ համարուել և չափեր, հետևապէս կան համեմատելու և չափելու միջոցներ։

Գիտակցութեան թագաւորութեան մէջ մշտական մեծութիւններ չկան, այսինքն չկան միութիւններ, և թէկուզ էլ լինէին, ինքնագիտողութիւնը հնարաւորութիւն չունի այն ըմբռնելու և հաստատուն դարձնելու։ Գիտակցութեան մէջ չկան նաև ճշգրիտ, առարկայական կօնտրօլի ենթարկուող, համեմատութեան և չափելու պայմաններ։ Այդ կէտում միանում են բոլոր թէլերը, բոլոր անհպատ պայմանները՝ ճշգրիտ ինքնագիտողութեան և հոգեբանութեան զարգացման դէմ։

Բայց մի՛թէ պէտք է կարծել որ այդ բոլորը կլինայ իւր ներկայ դրութեամբ։

Ընդունենք այն հիմնական դրութիւնը, որ ինքնագիտողութեան անհպատ պայմաններն այն ձևով, ինչպէս որ նրանց ներկայումս գտնում ենք, հետևանք են ուղեղի և նեարդային համակարգութեան որոշ բնական յատկութեան հոգեկան գործողութիւնների։ Հէնց այդ բանով մենք իրաւունք կստանանք ընդունելու, որ ինչպէս գիտակցութեան յատկութիւններն, այնպէս էլ ինքնագիտո-

ղուԹեան պայմաններն են՝ ԹեթԹակայ են աստիճանական զարգացման և յառաջադիմուԹեան որոշ օրէնքներին։

Ձափահաս մարդու գիտակցուԹիւնն անհամեմատ բարձր է մանկան գիտակցուԹիւնից. եւրոպացու հոգեկան կեանքը շատ աւելի հարուստ է, քան վայրենու հոգեկան նեղ աշխարհիկը, խոշոր իմաստասիրի, բանաստեղծի կամ նկարչի գիտակցուԹիւնը իր հարստուԹեամբ, ուժով և պայծառուԹեամբ մի քանի անգամ գերազանց է միջակ մարդու գիտակցուԹիւնից։

Այդ բոլորը մեզ իրաւունք է տալիս յուսալու, որ գիտակցուԹեան մեխանիզմը (կազմը) և գործողուԹիւնը, ինչպէս իր ամբողջական, այնպէս էլ իր մասնակի ձեւերով կարող է և նոյն իսկ պարտաւոր է ապագայում աստիճանական զարգացման ընԹացքով ղգալի չափով առաջ գնալ իր ներկայ դրուԹիւնից։ Այս բոլորն այնքան ակներև է, որ ապացոյցների կարիք չունի։

Սակայն մի կէտ կայ, որի վրայ այստեղ պէտք է մատնանիշ լինել, որպէս ապագայ հոգեբանուԹեան պատուանդան, հաւատալու հիմունք։ Ամենքն էլ յօժարուԹեամբ ընդունում են, որ հոգեկան աշխարհում, մարդկային գիտակցուԹեան մէջ գոյուԹիւն ունի յառաջադիմուԹիւն, բայց հարցրէք որ հոգեբանին էլ կուզէք. ԹէՀ ինչումն է կայանում այդ յառաջադիմուԹիւնը, և նրանք ձեզ մատնանիշ կանեն մեր հոգեկան հարստուԹեան դուռը, մեր գիտակցուԹեան բարդուԹեան, կազակցուԹեան չափի աճեցողուԹեան, մեր ուշադրուԹեան և գիտակցուԹեան այլ ընդհանուր յատկուԹիւնների զարգացման վրայ։ Բայց այդ անելիս դանդ են առնում նոյնքան՝ եԹէ ոչ աւելի նշանաւոր մի հանգամանք՝—հոգևոր զուտ ֆիզիօլօգիական, գիտակցուԹեան մէջի կազմի զարգացումը, ըստ ժամանակի աւելի հաստատուն վերարտադրելու ընդունակուԹեան աճումը, գիտակցուԹեան ծանրալի ընդլայնումը, կամքի ազդեցուԹեան և հոգեկան առանձին երևոյԹների վրայ ուշադրուԹիւն դարձնելու ընդունակուԹեան աճումը։

Մեր կարծիքով հոգեկան կեանքի այդ ֆիզիօլօգիական հիմունքները, մեր գիտակցութեան ծագման այդ ծածկուած անգիտակից մեխանիզմը կազմում են մեր ամբողջ հոգեկան աշխարհի հիմքը։

Շատ հասկանական է, որ այն, ինչ որ մենք կոչում ենք հոգեբանական տագանդ, խորունկ վերլուծութեան շնորհք, մերձաւորի հոգեկան աշխարհը թափանցելու ընդունակութիւն, այդ բոլորը, շատ կարելի է, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հաստատուն տպաւորելու և սեփական գիտակցութեան շրջանակն ընդարձակելու մեծ ընդունակութեան հետևանք ցանկացած ժամանակ յիշելու և պայծառ դարձնելու յիշած դրութիւնները։

Կարող է պատահել, որ բաւական է հոգեկան այդ տարրական կամ, աւելի ուղիղն ասած պսիխօ-ֆիզիօլօգիական ընդունակութիւնների ամենաանշան բարձրացումը, որպէս զի կարելի լինի ինքնագիտողութեան սահմանում միանգամային նոր հորիզոններ տալ։

Ջաղաքակրթուած մարդու այդ ընդունակութիւնների աստիճանական զարգացումը ոչ թէ միայն զգալի չափով բարձրացնում է ինքնագիտողութեան և ինքնաճանաչութեան մեխանիզմը (մեքենան), այլ և միևնոյն ժամանակ հոգեբանական երևոյթների ուսումնասիրութիւնը մօտեցնում է իւրաքանչիւր ճշմարիտ գիտութեան իդեալական պայմաններին—առարկայականութեան և չափելուն։

Այդ հեռաւոր ապագային հասնելու համար, երբ մարդս ընկերվարական և հոգեկան աստիճանական զարգացման բնական ընթացքով առաւել ուժեղ կը հանդիսանայ իւր սեփական հոգու գաղտնիքների դէմ մղած կռւում, ժամանակակից մարդկութիւնը դժուարին, բայց շատ արդիւնաբեր աշխատանք ունի կատարելու՝ ինքնագիտողութեան եղանակները կատարելագործելու և խմբական գիտողութիւններ կատարելու։

Ահա դրանումն է կայանում ժամանակակից գիտական, կամ աւելի ուղիղն ասած բնական—գիտական հոգեբանութեան խնդիրը։

Նախ և առաջ պէտք է նկատել, որ այժմս դիտողութեան սփերան զգալի կերպով ընդարձակուել է. նա ժամանակակից հոգեբանութեան մէջ մարդկային հոգեկան աշխարհից հեռու է տարածւում և պարփակում է նաև կենդանիների հոգեկան կեանքը։ Մասրին կենդանիների հոգեկան աշխարհի ուսումնասիրութեան ամբողջ շարքը, մանաւանդ ընկերվարական և աշխատանքի ընդունակների՝ ինչպէս մրջիւնների, մեղուների, հարկադրեց շատ բանում փոփոխել նրանց խելքի և բնազդման մասին մեր կարծիքը և զգալի կերպով ընդարձակեց մեր հասկացողութիւնը առհասարակ հոգեբանական երևոյթների մասին։ Վերջին ժամանակներս նատուրալիստ (բնապաշտ) — հոգեբանները հոգեկան կեանքի ուսումնասիրութեան շրջանակն ընդարձակեցին մինչև նրա ծայրագոյն սահմանը, մինչև ամենաստոր միախորշ արարածները, որտեղ հազիւ թէ կարող է խօսք լինել մարդկայինի մտքով դիտակցութեան մասին և որտեղ ամենայն հաւանականութեամբ կայ միայն նեարդային գործունէութիւն, որն իւր մեխանիզմի մէջ երևան է հանում դիտակցական կեանքի նման բազմաթիւ գծեր։ Մարդկանց դիտելու շրջանակն էլ առաջուանից աւելի ընդարձակ և բազմակողմանի դարձաւ։ Վայրենիների, մանուկների, կոյրերի, համրների հոգեկան կեանքի ուսումնասիրութիւնը, հոգեկան հիւանդութեանց քնէաճական, սալիբիտիքան երևոյթների ուսումնասիրութիւնը, մարդկային հոգւոյ մասին եղած դիտութեան համար արժէքաւոր սակաւ նիւթ չեն մատակարարել արդէն։

Հոգեկան երևոյթների ուսումնասիրութեան գործում ամենամեծ քայլ պէտք է համարել տասնևիններորդ դարու երկրորդ կիսից՝ Վէբերի, Հելմհոլցի և Ֆէխների ժամանակներից ծնունդ առած փորձնական հոգեբանութիւնը, որը հիմնուած է գիտակցական երևոյթներ վերլուծելու բնական մէթոդներ (եղանակներ) գործադրելու մէջ։ Այդ ֆիզիոլոգիական դպրոցի բնորոշ առանձնայատկութիւններն ու հիմունքները հոգեբաններն համարում են հետևեալը.—

Նախ և առաջ ուսումնասիրում է հոգեբանական երևույթների կապը մեր կազմուածքի դրութեան հետ։ Այսպէս օրինակ. զգայմունքի և այսպէս կոչուած յուզմունքների (աֆֆեկտների), զգայմունքների մեծ տատանման ուսուցման մէջ առաջին տեղն է տուած այդ դրութիւնների և մեր մկանութիւնների աշխատանքի, արտ և մարմնի այլ զգայարանների գործունէութեան կապին։ Նոյն ձևով ուսումնասիրում է նոյն այդ ֆիզիօլօգիական մոմէնտների և հակառակ փոխազդեցութիւնը ընդհանրապէս մեր հոգու, մանաւանդ մեր զգայմունքների վրայ։

Այսպէս կոչուած՝ մոքեր կարդալու երևույթի ուսումնասիրութիւնը նոր լոյս սփռեց մոքի անդիտակցական ինքնաշարժ մեխանիզմի աշխատանքի և նրա մեր մարմնի շարժումների վրայ ունեցած ազդեցութեան վրայ։

Այդ ֆիզիօլօգիական ուղղութիւնը գործադրուեց մի ամբողջ շարք ուսումնասիրութիւնների մէջոցին՝ մեր յոգնածութեան, ուշադրութեան, ուժասպառ դրութեան և քնի մասին, ալկօհօլի, ափիոնի և այլ դրդռող և թունաւոր նիւթերի ազդեցութեանց ժամանակ։ Ֆիզիօլօգիական հոգեբանութեան մէթոդի կեդրոնական կէտն է ինքնադիտողութեան աշխատանոցային (лабораторія) միջավայրը։ Աշխատանոցային իւրաքանչիւր դիտողութեան ժամանակ մասնակցում են մի քանի հոգի, որոնց մէջ բաժանուած են դիտողութեան տարբեր մոմէնտները։ Այդպիսի դիտողութիւնից հանած եզրակացութիւնը միշտ հանդիսանում է խմբակցական աշխատանք մի քանի անձերի, գիտակցութեան մի քանի աղբիւրների, եթէ միայն կարելի է այդպէս կոչել։ Այդ դիտողութիւնները սովորաբար կատարում են փոխադարձաբար՝ փորձին մասնակցող անձերի կողմից՝ միւսի վրայ։ Միաժամանակ որպէս լուրջ ուսումնասիրութեան պայման, պահանջւում է նոյն փորձի կրկնութիւնը բազմաթիւ անձանց վրայ և այն էլ իւրաքանչիւր անձի վրայ մի քանի անգամ։ Այդ պատճառով էլ դիտողութեան արդիւնքը ոչ թէ միայն հետևանք է խմբակցական աշխատանքի, այլ միևնոյն ժամանակ համե-

մատական բնաւորութիւն ունի և հանդիսանում է միջին եղրակացութիւն առանձին առանձին կատարած մի շարք դիտողութիւնների։

Աչխատանոցային հետազօտութեան և ամբողջ ֆիզիոլոգիական հոգեբանութեան հիմնաքար պէտք է ընդունենք ամենապարզ զանազան ֆիզիքական գործիքների և մանաւանդ չափերի գործադրութիւնը հոգեկան երևոյթների հետազօտութեան միջոցին։

Այդ եղանակով հնարաւոր եղաւ չափել այն ժամանակամիջոցը, որ հարկաւոր է հոգեկան զանազան գործողութիւնների, զգացումների, դիտողութիւնների, կամքի վճիռների և այլն ծագման համար, նաև որոշել զանազան հոգեբանական գործողութիւնների տևողութիւնն ըստ ժամանակի։

Առաջին խմբի փորձերից յաջողուեց հանել այն միանդամայն նշանաւոր եղրակացութիւնը, որ գիտակցութեան մէջ որ և է հոգեկան գործողութեան ծագման համար այնքան աւելի շատ ժամանակ է պահանջւում, որքան այդ գործողութիւնը բարդ է։ Միևյն այդ փորձն արդէն շօշափելի կերպով ցոյց է տալիս, թէ ինչ աստիճանի սերտ կապ կայ մեր գիտակցութեան և ուղեղի մէջ կատարուող նիւթական գործողութիւնների մէջ։ Որոշ աստիճանի հնար եղաւ չափելու նաև գիտակցութեան զօրութիւնը և որոշելու, թէ ինչ աստիճանի է մեծանում զգայողութիւնների զօրութիւնը, երբ այդ զգայողութիւններ արծարծող գրգիռների ոյժը որոշ չափով աճում է։ Որքան առաջին փորձերը նշանաւոր են գիտակցութեան և նեարդային գործունէութեան միջի կապը ապացուցանելու համար, նոյնքան էլ վերջին հետևանքները (ժէքիների օրէնքը) համոզիչ կերպով ապացուցանում են, որ մեր գիտակցութիւնը՝ գոնէ արտաքին առարկաներ ճանաչելու գործում՝ ըստ քանակի կախուած է մեր զգայարանների վրայ ներգործող բնութեան ոյժերից։

Մեր ժամանակ ֆիզիքական գործիքների կիրառութիւնը ահագին ծառայութիւն է մատուցանում լինքնա-

գիտողութեան՝ նախ նպաստելով գիտակցութեան ուսումնասիրելի երևոյթների զօրութեան և երկրորդ նրանով, որ չնորհիւ այդ գործիքների հնարաւոր է դառնում գիտակցութեան բարդ երևոյթների վերլուծութիւնը, իրեն կազմող մասերի և բաժան տարրերի վերածելը։

Երբ մենք հատուածակողմի (պրիզմայի) օգնութեամբ վերլուծում ենք արևի լոյսը իրեն կազմող մասերի՝ սպեկտրալ գոյներին, չէ որ մենք միաժամանակ սպիտակ գոյնի բարդ տպաւորութիւնները վերլուծում ենք լուսոյ տպաւորութեան չարքերի—արտաքին նիւթական երևոյթի ֆիզիքական վերլուծութիւնը առաջ է բերում նաև մեր գիտակցութեան վերլուծութիւն։

Երբ մենք գծողական գործիքով վերլուծում ենք մեր ձեռքի շարժումները, կամ դէմքի մկանունքային շարժումները մկանունքային առանձին շարժումների, մենք դրանով կատարում ենք մեր կամքի գործողութեան վերլուծութիւնը իւր կազմող մասերին։

Երբ մենք ալեչափների և բեզօնատօրների օգնութեամբ երևան ենք հանում բարդ ձայնի մէջ որոշ բարձրութեան ալիքներ, երբ մենք այդ ձևով պարզում ենք բարդ ձայնի ներքութիւնը (տեմբրը) և այդպիսով պարզում ենք նրա կազմութեան գլխաւոր ձայները, մենք միաժամանակ կատարում ենք երկու զուգահեռական գործողութիւն—ֆիզիքական երևոյթի վերլուծութիւն և մեր զգայութեան և տպաւորութիւնների կազմալուծումն։

Հոգեբանական երևոյթների հետազոտութեան ժամանակ ֆիզիքական գործիքների գործածութեան մէջ մենք որոշ չափով միջոց ենք գտնում կռուելու ցայսօր մեր անմիջական ինքնադիտողութեան գլխաւոր արգելքներից մինի՝ մեր գիտակցութեան կապակցեալ և անվերլուծանելիութեան դէմ։

Աշխատանոցային հոգեբանութեան մէջ պակաս նշանաւոր չէ փորձնականութիւն ստեղծելը հոգեկան աշխարհն ուսումնասիրելիս։ Ինչպէս յայտնի է, ընագիտութեան մէջ փորձը՝ դնելով ուսումնասիրելի երևոյթը արհեստական

պայմանների մէջ, ոչ միայն հնարաւորութիւն է տալիս այդ երեւոյթը միւսներից բաժանելու՝ որոնց հետ նա ձուլուած է, այլ և ստեղծում է համադրութեան պայմաններ, որովհետև չնորհիւ ցանկալի և ըստ ցանկութեան ստեղծած պայմանների, հնարաւոր է դառնում պարզել այդ երեւոյթի կապը այլ զանազան մոմէնտների հետ։

Հոգեբանական փորձը՝ չափելու և վերլուծելու դրօշմների օգնութեամբ նոյն բանն է անում հոգեկան աշխարհի համար։ Այստեղ էլ գիտակցութեան զանազան դրութեան վաղօրօք կատարած վերլուծութիւնը իրենց կազմող մասերի, ճանապարհ է հարթում այդ մասերի նորանոր համադրութեանց՝ արհեստականապէս կազմակերպելու հոգեբանական աւելի բարդ դրութիւններ։ Իբրև այդպիսի փորձնական համադրութեան օրինակ հոգեբանական երեւոյթների շրջանում, կարելի է մատնանշել նորագոյն ժամանակների փորձերի վերայ՝ գործիքների միջոցաւ ստեղծելու մտապատկերների աւելի բարդ խմբակցութիւններ և ուսումնասիրելու գաղափարների կապակցութեան կազմը և ուղղութիւնը։

Վերջացնելով ոյն տեսութիւնը, աւելորդ չենք համարում մատնանշել այն բանի վրայ, որ փորձնական եղանակը խոստանում է կողմնակի կերպով մի մեծ ծառայութիւն ևս անել հոգեբանական երեւոյթների ուսումնասիրութեանը նրանով, որ դիտակցութեան աշխատանոցային հետազոտութիւնը արհեստական պայմաններում, անխուսափելի կերպով առաջ պէտք է բերի մարզումն և կատարելագործութիւն անհատական ինքնավերլուծութեան, այսինքն ինքնադիտողութեան արուեստի։ Ֆիզիքական արուեստի կատարելագործութիւնը մեզ կ՚առաջնորդի դէպի մեր ներազգացողութեան աւելի մեծ նրբութիւնն ու ճշտութիւնը և մեզ կը դարձնի իշխող մեր սեփական ներքին աշխարհի վրայ։

Ե. Ծ. վ. Մ.

ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դ.

Ս. Լուսաւորչի բերած Սեբաստացի եւ ասորի կրօնաւորները: Ս. Դանիէլ ծերունի: Հայ կրօնաւորների անյիշատակ մնալը տօնող սրբերի շարքում: Հայ կրօնաւորների համար կանոններ: Դ. դարում Հայաստանի կրօնաստանները: Ս. Լուսաւորչի եւ Տրդատ թագաւորի հզօր թեան վայրերը: Եւսաթէոս եւ իւր հետեւողները: Հայաստանի կրօնաւորների վարքը:

Ս. Ովկեաններից և Սուքիասեաններից անկախ ճգնաւորական, կրօնաւորական և վանական կեանքը Հայաստանում սկսուեց և զարգացաւ Դ. դարում: Փաւստոս Բիւզանդը, Մովսէս Խորենացին և մեր միւս պատմիչները բաւական նիւթ են մատակարարում հայ կրօնաւորութեան և վանականութեան մասին:

Հայ պատմիչների աւանդածին համեմատ ս. Լուսաւորիչը ձեռնադրելուց յետոյ Կեսարիայից վերադառնալիս՝ մի առ ժամանակ մնաց Սեբաստիայում այնտեղից էս կրօնաւորներ ժողովելու[1]) և, ըստ Զամչեանի[2]) այնտեղից էլ չատերին ընտրելով, հետն առած եկաւ Հայաստան: Այս Սեբաստացի կրօնաւորներից արժանաւորագոյնները քորեպիսկոպոս և քահանայ կարգեց Հայաստանի զանազան կողմերում, մնացածներին էլ թողեց որ կրօնաւորական և անապատական ճգնաւոր կեանք վարեն նորահաւատներին քրիստոնէական առաքինութեան և բարեպաշտութեան օրինակ հանդիսանալով: Այս Դ. դարի սկզբումն էր:

---

1) Ձննոբ Գլակ. Կ. Պօլիս. Հայոց ՌՃԿԲ. թուին, եր. 47: Ագաթանգեղոս, Օրթագիւղ 1824 թ. եր. 229:

2) Պատմ. Հայոց. Հատ. Ա. գլ. լգ եր. 391:

Ս. Լուսաւորիչը ասորի ճգնաւորներ էլ բերեց Հայաստան։ Ասորի ճգնաւորների մէջ նշանաւոր էր Դանիէլ Ձերունին, որին ս. Լուսաւորիչը քորեպիսկոպոս ձեռնադրելով Տարօնի եկեղեցիների վերայ տեսուչ կարգեց։ Ս. Դանիէլը անմարդաբնակ լեռներում անապատական կեանք վարելով հանդերձ՝ աչալրջութեամբ և եռանդով հետեւում էր իւր հօտի բարոյական և քրիստոնէական հոգւով վերածնութեան դործին։

Ս. Յուսիկի նահատակութենից յետոյ ս. Դանիէլը մինչև անգամ պէտք է բռնվէր Հայոց Հայրապետական գահը, բայց խելագամահ եղաւ՝ Տիրան թագաւորին ու նախարարներին, ս. Յուսիկի նահատակութեան պատճառով, յանդիմանելուն համար։ Ս. Դանիէլի մարմինը նրա Եաղիտա և Եպիփան աշակերտները իրանց ընկերակիցների հետ տարան Տարօն և թաղեցին նրա ճգնարանում—Հացեաց դրախտում [1])։ Հատանական է, որ ս. Դանիէլը հայրապետական գահը բռնվելու համար հրաւիրուած էր Վաղարշապատ և այդտեղ նահատակուելով՝ տարուեց թաղուեց իւր ճգնարանում։

Ս. Դանիէլի յիշատակը պէտք է տօնուէր Անտոնի և Կրօնիդէսի հետ, բայց մեզ անհասկանալի պատճառով տօնւում է ս. Լուսաւորչի որդւոց և թոռանց հետ։ Նա ոչ մի ազգակցութիւն չունէր ս. Լուսաւորչի հետ. հայրապետական օծումն էլ չստացաւ, որ գոնէ այսպէս, իբրև հայրապետ դասուէր ս. Լուսաւորչին յաջորդող նրա որդիների ու թոռների շարքում։

Եաղիտայի մէջ [2]) ի պատիւ ս. որդւոց և թոռանց մանկունքում ս. Դանիէլի համար երգւում է. «Երկնայնոցն ի յերկրի հաղորդ ճգնութեամբ. յանդիմանելով զթագաւորն կատարեցար վասն անուանն Տեառն, սուրբ Դանիէլ. անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց»։

Ասորի ճգնաւորների մէջ նշանաւոր էին Եաղիտան,

---

1) Փաւստոս Բիւզանդ. գլխ. Գ. գլ. ԺԴ։ Խորէն. գիրք Գ. գլ. ԺԴ։

2) Կանոն որդւոց և թոռանց ս. Լուսաւորչի, ՀՁ.

որին Դանիէլը կարդալ էր Կորդուայ աշխարհում, և եկրեմը.

Ցոյն հանարուած կրօնաւորների մէջ նշանաւոր էին Անտոնն ու Կրօնիդէսը, որոնց մասին յիշատակութիւն գտնում ենք մեայն Զենոբ Գլակում [1]), Վարք Սրբոցում [2]), ճառընտիրներում և եկեղեցական աւանդութեան մէջ։ Ագաթանգեղոսը, Փաւստոս ու Մովսէս Խորենացին դրանց մասին ոչինչ չեն գրում։ Անտոնի և Կրօնիդէսի յիշատակը եկեղեցին տօնում է Զ. դարի վերջերին նահատակուած եօթն խոստաճարակների հետ։ Այս տօնը և նրան յատկացած «Ցաւուրս վերջին ժամանակի» շարականը յետին ժամանակներում է սահմանուել։ Անտոնն ու Կրօնիդէսը, եկեղեցական աւանդութեան համեմատ եկեղեցական որ և է աստիճան չստացան, կրօնաւոր էին, կրօնաւոր էլ մնացին։ Ցոյն էր նաև Եպիփանը [3]), որին ս. Դանիէլը կարգել էր Ծոփայ աշխարհի Աղձնիք գաւառում վարդապետ կամ հոգևոր դաստիարակ։

Այս ճգնաւորներն ու կրօնաւորները յոյն և ասորի են կոչուած մեր պատմութիւններում ու եկեղեցական աւանդութեան մէջ. բայց կարող էին և հայ լինել, որովհետև դրանք Միջագետքից, Փոքր-Հայքից և Սեբաստիայից էին։ Մեր նախնիք դրանց ասորի, յոյն են անուանել, ըստ ի նրանց աւելի լսորհրդաւոր և պատկառելի դարձնելու համար, ինչպէս ս. Հռիփսիմեանց՝ հռոմայեցի, ս. Գրիգոր Լուսաւորչին՝ Պարթև, և բոլոր մեր պատմութեան մէջ յայտնի անձերին օտար ծագումի։—Միջագետքը Հայոց սահմանակից էր. և հիւսիսային մասը կոչւում էր Հայոց Միջագետք. Սեբաստիան հայոց քաղաք էր և նրա եպիսկոպոսը հայոց եպիսկոպոս էր կոչւում. Փոքր-Հայքը, որի սահմանի վերայ էր գտնւում Կեսարիան, հայաբնակ եր-

---

1) Զենոբ Գլակ. եր. 70։ (Տանելն Բուրգարայ զՍ. Գրիգոր ի Կեսարիա, և որ գրեալ. 12։

2) Համ. է. եր. 33—41։

3) Փաւստոս Բիւզանդ. գլուխ. Ե. գլ. իե։

կիր էր, թէև բուզանդական իշխանութեան տակ լինելով, չատ գօրեղ էր այնտեղ յոյն ազդեցութիւնը։

Յոյն և ասորի կոչուած կրօնաւորների ու ճգնաւորների շարքում գտնում ենք գուտ հայ անուններ, ինչպէս Դինդ մեծը և նրա աշակերտներից՝ Վաչակ, Արտոյտ, Մահրաիա, որոնց Տրդատն էլ էր ընկերակցում[1]։ Դինդ մեծը Դանիէլ Ծերունու աշակերտն էր և նրանից յետոյ գաղտնի աբեղաների գլուխը, միանձնների վարդապետ, միայնակեացների առաջնորդ, վանքերի վերակացու և անապատաւորների ուսուցիչ[2]։ Ներսէս մեծի օրով նշանաւոր էին առաջին Դինդի աշակերտ Դինդ Սկիւռնին[3] և իւր ձեռնասուն ժանուկ Մաշկէն[4]։ Սակայն այս կրօնաւորներից ու ճգնաւորներից ոչ մէկին էլ չէ յիշում եկեղեցին տօնելի սրբերի կարգում[5]։

Ըստ մեզ պէտք է ս. Դանիէլ Ծերունուն բաժանել ս. Լուսաւորչի սրդիներից ու թոռներից, և նրա հետ միացնելով Դ. դարի բոլոր յայտնի հայ կրօնաւորների ու ճգնաւորների անուները, մի նոր տօն սահմանել կամ կցել եօթն խոտաճարակաց տօնի հետ։ Փաւստոսի ու Խորենացու վկայութիւնները բաւական են նրանց ազնուութիւնն ու վաստակը եկեղեցու պայծառութեան համար ապացուցուած համարելու։

Ըստ Զենոբ Գլակի[5] Կեսարիայի հայրապետը յանձնարարում է ս. Լուսաւորչին, որ սա յաւիտենական օրէնք դնի, ս. որ կրօնաւորները Աղեքսանդրացոց (Եգիպտոսի ճգնաւորների) պէս գաստակերտներում ու գիւղաքաղաքներում չաշխատեն, առանձին առանձին չ'ապրեն, առանձին աղօթատեղի չունենան, այլ խմբովին — մինչև հարիւր հոգի միասին ապրեն. բ. որ վանքերին գիւղեր և մեծամեծ

1) Փաւստոս Բիւզանդ. դպր. Զ. գլ. ԺԶ։
2) Փաւստոս Բիւզանդ. դպր. Զ. գլ. ԺԶ.
3) Խոր. գիրք Գ. գլ. Ի։
4) Փաւստոս Բիւզանդ. դպր. Զ. գլ. ԺԶ։
5) Պատճէն երկրորդ և պատասխանի Թղթոյն սրբոյն Գրիգորի, զոր յղեաց Կեսարու հալրապետն ի ժամ վախճանին իւրոյ։

աւանները յատկացնի՝ պարտաւորելով՝ որ այս դիւղերն ու աւանները հոգան վանքերի պէտքերը, որպէս զի կրօնաւորներն ու վանականները աղօթքով ու ճգնութեամբ պարապին. գ. որ կրօնաւորների բնակութեան տեղերում աւանձին մատուռ չը շինուի. մատուռներում քուրեպիսկոպոսներ ու քահանաներ կարգուեն։ Մատուռների մօտ չինուեն դատաստակերտներ, աղքատանոցներ, որ բժշկուելու եկողները տրտունջի տեղի չունենան. ուխտաւորներն էլ եկեղեցու դռանը չը քնեն։

Որքան և կասկածելի լինի Կեսարիայի հայրապետի ս. Լուսաւորչին գրած այս թուղթը, այնուամենայնիւ մասամբ պատկերացնում է հայ կրօնաւորութեան և վանականութեան կենցաղը. որի մէջ տեսնում ենք եգիպտոսի աւանձնակեաց ճգնաւորների (անախորետ) և Սեբաստիայի եւստաթէոս եպիսկոպոսին հետևող թափառաշրջիկ կրօնաւորների փոխարէն Բարսեղի հաստատած կենովիտական — միաբանական ուխտի յատագոյութիւն։ — Ս.յս հանգամանքը հաստատում է, որ Ջենոբ Գլակի անուան տակ պատմիչը ապրում է Բարսեղ մեծից յետոյ, և ծանօթ էր եգիպտական ճգնաւորների կենցաղին։

Ինչպէս արդէն ասել ենք, եգիպտական ճգնաւորները միաբանական կեանք չէին վարում. առանձին առանձին սկիթներում—(մենաստաններում) էին ապրում, իրարից հեռու քարայրներում կամ խրճիթներում։ Շատ առաջ, օրինակ Պաւղոս Թեբայիդացու ժամանակ Գ. դարում ապրում էին բոլորովին մեկուսացած անապատներում ու լեռների անձաւներում անյայտութեան մէջ։

Սկիթներում ապրողները իրանց ձեռքի վաստակը քաղաքներում ու աւաններում վաճառելով՝ հայթայթում էին իրանց պէտքերը, աւելորդը՝ լատագոյն հանդամանքում, աղքատներին բաժանելով կամ նրանց կարիքների համար գործադրելով։ Յետին ժամանակներում, երբ կրօնաւորները չեզուելով իրանց սկզբնական մաքուր կենցաղից սկսեցին զեղծ կեանք վարել, իրանց վաստակը արատահանելու պատրուակով քաղաք էին գնում, անձնատուր

լինելու վայրաքաշ մեղկութեան։

Մ. Բարսեղը քաջալերելով կրօնաւորների ձեռքի աշխատանքը, արգելում էր արտահանելու պատրուակով քաղաքներում գիւղերում թափառելը։

Դ. դարում Հայաստանի կրօնաւորների բնակավայրերն էին Տարօն գաւառում՝ Իննակնեան վայրը կամ Գլակայ վանքը և Հացեաց գրախտը. Արարատեան նահանգում՝ Բագրեւանդ և Բասենի գաւառները. Բարձր-Հայքում՝ գարանաղեաց Մանեայ այրը. Ծոփաց նահանգում՝ Աղձնիք։

Հոգեկան անդորրութիւն էին գտնում այս ճգնաբաններում Տրդատ թագաւորն ու ս. Լուսաւորիչը, յաճախակի առանձնանալով Տրդատը՝ Տարօնի կրօնաստաններում, ս. Լուսաւորիչը՝ Արարատեան նահանգի Սուփաւէտ և Ծաղկեոյ ճգնարաններում, Եփրատի ակունքի մօտ, այնտեղ, «ուր, ըստ Փաւստոսի, առաջու կայեանքն էին Մեծին Գրիգորի առաջնոյ, որում տեղեաց Ոսկիք կոչեն»[1]։—Մեզ այնպէս է թւում, որ Փաւստոսի մէջ Տրդատի՝ Տարօնոյ կրօնաւորներին յարելը, և Մեծին Գրիգորի առաջնոյ յաճախելն այնտեղ, «որում տեղեաց ոսկիք կոչեն», աւելագրութիւն է յետին ժամանակի։ Բայց մենք թողնելով մեր անձնական վարկածները, եկեղեցական աւանդութեան հաւատարիմ մնալով՝ ասենք, որ ս. Լուսաւորիչը իւր «առաջու կայեանք»-ում միայնակեացների ուխտ էր հաստատել, դէպատուր կարգելով ասորի կրօնաւորներից մէկին, որի անունն էր Աբաս՝ որ կը նշանակէ հայր: Հաստատել անուն վանահայրների ու վանքերի առաջնորդների.

Եթէ Մեբռոսեայի Եւստաթէոս հայ եպիսկոպոսին և նրան հետևող կրօնաւորներին ընդունենք հայ կրօնաւորների կարգում, այն ժամանակ պէտք է ասենք, որ Եւստաթէոս լինելով խստակրօն մարդ՝ ոչ միայն իւր թեմի մէջ քաջալերել է կրօնաւորութիւնը, այլ ինքն էլ, հակառակ

1) Փաւստոս Բիւզանդ գլը. Զ. գլ. ԺԶ։

իւր եպիսկոպոսական աստիճանին, որ այն ժամանակ աշխարհիկ հոգևորականութեան կարգին էր պատկանում, կրօնաւորական կեանք էր վարում, և կրօնաւորութիւնը համարում էր քրիստոնէական առաքինութիւններից առաջինը։ Նա բազմաթիւ հետևողներ ունէր, սակայն այդ հետևողները ոչ Պաւղոս Թեբայիդացու պէս վենաւոր, աշխարհուրաց և աշխարհից հեռացած ճգնաւորներ էին, ոչ Անտոն անապատականի պէս սկիզբնակ վիճակներ և ոչ Իլարիոնի ու նրա հետևողների պէս վանական վիճակներ էին։ Նրանք կրօնաւորի սքիմով, որ այն ժամանակ փիլիսոփայական (երևի Ստոյիկեան-Խստակեաց) ձև էր կոչում թափառական կեանք էին վարում, քաղաքներում ու դիւղերում ջոկ ջոկ ապրելով։

Եթէ յիրաւի, ս. Լուսաւորիչը Սեբաստիայից կրօնաւորներ բերեց, դրանք անշուշտ, Եւստաթէոսին հետևողներից չէին, որովհետև, եթէ ոչ աւելի վաղ, ըստ աւանդութեան՝ ս. Լուսաւորիչը Դ. դարի սկզբում 301—3 գնաց կեսարիա Ճեռնադրուելու և այնտեղից վերադառնալիս՝ Սեբաստիայից կրօնաւորներ բերեց. իսկ Եւստաթէոսի գործունէութիւնը, որպէս հակուածի դէպ ի կրօնաւորութիւն, սկսւում է այդ դարի առաջին քառորդից, այսինքն ս. Լուսաւորչից յետոյ։

Կրօնաւորները, ինչպէս գիտենք եկեղեցական աստիճաններ չունէին. ս. Լուսաւորիչը իւր բերած կրօնաւորներից արժանաւորագոյններին կարգեց Հայաստանում քորեպիսկոպոսներ ու քահանաներ։ Այդ քորեպիսկոպոս և քահանայ կարգուած կրօնաւորները պէտք է որ հայագէտ, ուրեմն և հայ լինէին, որ կարողանային հաւատի բերելու և հաւատը ամրապնդելու համար ժողովրդի լեզուով խօսել։

Ի՞նչ վարք ունէին Հայաստանի կրօնաւորները։— Փաւստոս Բիւզանդը տալիս է մեզ հայ կրօնաւորների վարքի նկարագիրը։ Դանիէլ ծերունու համար ասում է նա։

«Եւ բնակութիւն իւրոց (Դանիէլի) կայենիցն յանմարդի լերինս. այլ պտեղաւորութիւն մարդկան պիտոյից ոչ

երբէք անփոյթ առնէր։ Միահանդերձ մաշկանափորն սանդաղաւոր. եւ կերակուր իւր արմատ բանջարոց, եւ գաւազան անգամ ընդ իմեան ոչ ուներ: . . . Եւ կայեաւմ տեսչութեան իւրոյ, յորժամ յանապատաց ի շէնս իջանէր վասն գործոյ Աստուծոյ, ի գլխաւոր տեղիսն յեկեղեցեացն լինէր» [1]):

Զննոբ Գլակը եպիփանիհամար կեսարու Հայրապետի կողմից գրում է ս. Լուսաւորչին.

«*Զեփիփան աշակերտ սրբոյն Անտոնի հաւանեցուցի գալ ի նոյն իննակենեան տեղին, ունելով ընդ ինքեան քահանան ընտիր արս* ճգնաւորս եւ խաւարճապգեստս, *պարկեշտս վարուք, հրաժարեալս յաշխարհէս*» [2]։

Առաջին Գինդի և նրա հետևողների համար Փաւստոսը գրում է. «*Եւ էր Գինդս այս ի Տարօն գաւառէ, և յետ նորա էր գլուխ աբեղայից և վարդապետ միանձանց, և առաջնորդ ճենակեցաց և վերակացու վաներոյից և ուսուցիչ ամենայն անապատաւորաց և տեսուչ ամենեցուն, որք միանդամ վասն սրբոյն Աստուծոյ* յաշխարհէ էին մեկնեալ, ի յանապատս բնակեալ ի տարաճգաւս ամրացեալք յայրս եւ ի ծերպս երկրի, եւ միահանդերձք, բոկագնացք, զգաստացեալք խոստաճարակք, ընդարբուսք, արմատակերք. զորէն գազանաց ի լերինս շրջէին՝ լեկամաշկօք եւ մորթօք այծենեօք. ճեղեալք, տառապեալք եւ տարակուսեալք. յանապատի մոլորեալք. ի ցուրս եւ ի սօթ, ի ձաղց եւ ի ծարաւ վասն սիրոյն Աստուծոյ . . . զորէն երամոց թռչնոց բնակեալ էին սոխա ի ծագս վիմաց, ի սուրս տարանձաւաց, անինչք, անստացուածք, դարմանոց անխնամք առանց ամենեւին չտանել մարմնոց» [3]):

Այս հատուածի մի մասը Փաւստոսը փոխ է առել ս. Գրքից, միւս մասերում պատկերացնում է, առաջին՝ Դ. դարի հայ կրօնաւորների վարքը, և երկրորդ՝ կրօնա-

---

1) Փաւստոս Բիւզանդ դպր. Դ. գլ. ԺԴ

2) Պատճէն Բ. և պատասխանի . . . եր. ԺԶ։

3) Փաւստոս Բիւզանդ դպր. Զ. գլ. ԺԶ։

ւորական հաստատութիւնների տեսակները, այն է, աբեղայ, միանձն, մենակեաց վանական և անապատաւոր։ Աբեղայ ընդհանուր առմամբ կրօնաւոր է նշանակում, այս անունը իրանց հետ Հայաստան բերին ասորի կրօնաւորները. միայնակեաց և միանձնի տարբերութիւնն այն է, որ միայնակեաց նշանակում է մարդկային ընկերութիւնից հեռացած բնաւին, որպէս Պաւղոս Թեբայիդացին. իսկ միանձն նշանակում է որոշ տեղում համքուած, բայց առանձին առանձին խցերում ապրող կրօնաւոր. այս տեսակ հաստատութիւնը եգիպտոսում կոչւում էր սկիթ կամ սկիտէ, որի հիմնադիրն էր Անտոն անապատականը. վանք և անապատ արդէն յայտնի են. առաջինում՝ կրօնաւորները միասին, մի հանրակեցարանում էին ապրում, իսկ երկրորդում անմարդաբնակ տեղերում ցրիւ և անյայտ։

(Կը շարունակուի)

Ցուսիկ եպս.

ԿՈՄՄՈՒՆԻԶՄ

(Շարունակութիւն եւ վերջ *)

Եկեղեցական գոյքերը միջին դարում.

Քրիստոնէութիւնն չկարողացաւ, և չէր էլ կարող, արդիւնաբերութեան նոր միջոց հիմնել, սոցիալական վերանորոգութիւն մտցնել։ Դրա համար էլ չկարողացաւ հռոմէական պետութիւնը կորստից փրկել։ Եւ եթէ հռոմէական պետութիւնը, չնայած իւր ամբողջ սոցիալական անկման, կարողացաւ մի քանի դար էլ քաշ տալ իւր գոյութիւնը՝ պարտական է ոչ

*) Տես Արարատ Թիւ Ա.

թէ քրիստոնէութեան, այլ բարբարոսներին—հեթանոսներին՝ դերմանացւոց. դերմանացիք, ինչպէս արդէն ասացինք, իբրև վարձկանները և դաղթականները՝ յենարան դարձան ընկնող հասարակապետութեան:

Բայց վարձկան զօրքի մէջ ծառայելը և գաղթականութիւնը յառաջացող դերմանացւոց չէին կարող բաւականութիւն տալ: Դրանք դերմանացւոց ցայց էին տալիս միայն պետութեան թուլութիւնը, և ծանօթացրին նրանց այն կարիքներին, որ կար ըզգալ էր լցուցանել միայն Հռովմէական պետութեան մէջ. նրանք մեծացրին դերմանացւոց ձգտումը դէպի հարաւ: Վերջապէս դերմանական բանակները քանդեցին պետութիւնը, և տիրեցին նրան, իրար նեղելով և առաջ քշելով, մինչև որ հետզհետէ քաոսը պարզուեց, առանձին-առանձին ցեղերը նրաստեցին իրանց գլուաւոր տեղերում, և կազմեցին նոր պետութիւններ. զարգացաւ նոր հասարակական կարգ:

Դերմանացիք ազգերի գաղթի ժամանակ դեռ հողական կոմմունիզմի սկզբնական աստիճանի վրայ էին: Առանձին ցեղերը և ազգեր կազմում էին համայնքներ, շրջանները՝ հողի ընդհանուր սեպհականութեամբ. իսկապէս նրանց աներն ու բակերը արդէն առանձին ընտանիքների մասնաւոր սեպհականութիւն էին դարձել. վարելահողը բաժանած էր նրանց մէջ առանձին կերպով օգտուելու համար, բայց հողի սեպհականութեան իրաւունքը պատկանում էր համայնքին, իսկ անտառներն ու ջրերը դեռ ընդհանուրի օգտուելու համար էին: Ազգաւորութիւնը, իբրև հասարակական երևոյթ, անյայտանում էր ազգերի գաղթի ժամանակներից սկսած: Ի հարկէ, մէջերում էլ յաճախ պատահում էին ամբողջային չքաւորութիւններ, բայց նրանք յառաջանում էին երաշտներից, պատերազմներից կամ տարաժողովրդական հիւանդութիւններից, և ոչ թէ հողի պակասութիւնից: Եւ այդ անդադար անցաւոր դժբաղդութիւններ էին՝ և ոչ ընդհանուր: Բայց եթէ կայլն չքաւորներ, նրանք ընդհանուրին անօգնական չէին. նրանց հովանաւորում և օգնում էր այն համայնքը, որին նա պատկանում էր:

Եկեղեցու բարեգործութիւնը համայնքի դոյութեան համար անհրաժեշտ ֆակտոր լինելուց դադարեց: Ինքը եկեղեցին ժամանակի ժողովրդների մէջ իւր դոյութիւնը պահպանում էր շնորհիւ միայն այն հանգամանքի, որ նա յարմարուեց ժամանակի հանգամանքներին, ընդունեց իւր քնաւորութիւնը: Նա բարեգործական հաստատութիւնից վերածուեց քաղաքական մարմնի: Նրա քաղաքական գործողութիւնները

հատատուածեան հետ մէասին դարձան քաղաքական ազդեցութեան գլխաւոր աղբիւրը: Ազգերի դաղթի խառնաշփոթութիւնների մէջ եկեղեցին իւր հարստութիւնները պահպանեց և հին համայնքից վոչնաղրեց նորին: Ինչքան որ այդ խառնակութիւնների ժամանակ նա կորցրեց, այնքան և մինչև անգամ աւելի կարողացաւ նորից ձեռք բերել: Եկեղեցին բոլոր քրիստոնեայ դերմանական տէրութիւններում ամենաառաջնոր հողատէրը դարձաւ. նրան պատկանում էր սովորաբար հողի երրորդ մասը, իսկ շատ տեղեր՝ էլ աւելի:

Եկեղեցու այդ ընդարձակ դոյքերը այնուհետև աղքատների ոգնականութիւն լինելուց դադարեցին: Մինչև անգամ Կարլոս Մեծը կամեցաւ ֆրանկների թագաւորութեան մէջ մրցունել եկեղեցական դոյքերը չորս մաս բաժանելը, ինչպէս նաև Հռոմէական պետութեան ուրիշ շատ կարգադրութիւններ:

Բայց այդ վորձը, ինչպէս և նրա «վերանորոգութիւնների» մեծ մասը, մնաց թղթի, աւելի ճիշտ մագաղաթի վրայ: Արդէն Կարլոսի մահից մի քանի տարի յետոյ երևան եկաւ կեղծ Իսիդորեան կանոնագիրքը, կեղտոտ մտքերի և կեղծուածք վկայութիւնների ժողովածուն, որ պէտք է հատատատը պապական նութեան յատկնութիւնները և նրա քաղաքականութեան իրաւաբանական հիմք դառնար: Եկեղեցական դոյքերի նկատմամբ այդ կանոնագիրքը հատատատում է, որ աղքատներ տալով պէտք է հատկանալ միայն հոգևորականներին, որոնք աղքատութեան ուխտ են կապել: Այդ տեսութիւնը ոտացաւ յետոյ ընդհանուր գործադրութիւն, և այնուհետև եկեղեցական դոյքերը համաըստում էին կղերի ոտացուածք: XII դարում այդ տեսութիւնը վերջացաւ մի վարդապետութեամբ, որ բոլոր եկեղեցական դոյքերը պատկանում են պապին, որ կարող է կառավարել իւր հայեցողութեամբ *):

---

*) Եկեղեցական դոյքերի բնաւորութեան մէջ յառաջացած այդ փոփոխութիւնը կարևոր հետեւանք ունեցաւ. Այդ յառաջ բերեց ցելիբատը, քահանաների ամուրիութիւնը. Իդէալական տեսակէտից զանազան ընկերակցութիւններ վաղուց էին ցանկանում հոգևորականների ամուրիութիւն. Թէպէտ նախապատրաստում էին, բայց չէին կարողանում իրագործել. Այդ ծգտումները միայն այն ժամանակ յաջողութիւն ունեցան, երբ որ նրանց միացաւ նիւթական շահը, եկեղեցական դոյքերի հոգսը. Քանի որ այդ դոյքերը եկեղեցիների, համայնքների սեպհականութիւն էին համարւում, հոգևորականների ընտանիքները առանձնապէս չէին սպառնում նրանց անմատչելիութեան.

Այդ հայեացքները լիովին համապատասխանում էին իրական յարաբերութիւններին, իշխանութեան, որով եկեղեցին օգտւում էր պետութեան մէջ, իսկ պապականութիւնը—եկեղեցու մէջ։

Բայց եթէ եկեղեցական գոյքերը դադարել են աղքատների սեպհականութիւն լինելուց, այդ դեռ չէ նշանակում, որ մինչեւ դարերում, յօդուտ աղքատների ոչինչ չեն արել եկեղեցական

Բայց դործը փոխուեց, հէնց որ նորա կղերի սեպհականութիւն դարձաւ։ Այժմ կղերից իւրաքանչիւր ոք, որ որդի ունէր, աշխատում էր ըստ կարելւոյն շատ պոկել նորա համար այդ ստացուածքից։ «Ամեն օր կարելի էր տեսնել, որ քահանաների որդիքը ոչ միայն ժառանգական գոյք էին ստանում իրանց հօրից, այլ եւ յաւակնութիւն էին ցոյց տալիս նաեւ եկեղեցական դոյքի վրայ, որով նրանց հայրերը օդտւում էին» (Ciesebrecht, cesch. deutsch. Kaiserzeit, II էջ 406)։ Շատ սրտառուչ է այդ առարկայի համար մի դանդատ, որին դիմեց Բոնիփացիոս VIII պապը Թեսսինեան ժողովում (1014 եւ 1024 թուականների մէջ)։ «Մեծամեծ հողաբաժիններ, մեծամեծ դաստակերտներ։ ամեն բան, ինչ որ կարող են, մեռք են բերում պոռնիկ հոգեւորականները (ամուսնացած քահանաները) եկեղեցական գոյքից իրանց անառակ որդւոց համար, քանի որ ուրիշ ոչինչ չունեն նրանք։» եւ այլն, (դիտելիր Lehrbuch der kirchenqeschichte. Bonn, 1831, I էջ 282։ Դեպելերը մեր ուշադրութիւնը դարձրել է եկեղեցական գոյքի եւ ամուրիութեան մէջ եղած կապի վրայ)։ Բայց յիրաւի, եկեղեցական գոյքերը կղերի որդւոց համար յափըշտակելուց ազատելը միայն որոշ ժամանակ հնարաւոր եղաւ, երբ որ եկեղեցում հաստատուն կերպով ամրացաւ պապի միապետութիւնը։ Պապական իշխանութեան գլխաւոր խնդիրներից մէկն էլ քահանաների ամուսնութեան վերացնելն էր։ Լեւոն IX (1048—1054) սկսեց այդ դործը, իսկ եւանդուն Գրիգոր VII (1073—1085) քահանաների ամուսնութեան արգելքը մոցրեց ամենավճռական միջոցներով։ Այնուամենայնիւ դեռ շատ ժամանակ անցաւ Ալպերի հիւսիսում, մինչեւ այդ արգելքը ընդհանուր ընդունելութիւն դտաւ։ Դեռ Լիւդխում 1220 թ., իսկ Ցիւրիխում 1250 թ. պաշտօն ունեցող ամուսնացած հոգեւորականներ ենք տեսնում (Գիզելեր I հատ. 290 երես)։

Երբ որ վերանորոգութեան ժամանակ եկեղեցական գոյքերը յարքունիս դրաւուեցան, եւ հոգեւորականութիւնը դարձաւ պետական պաշտօնեաների կամ նրա եկամուտով ապրող, հասկանալի է, որ քահանաների ամուրիութեան բոլոր հետաքրքրութիւնը վերացաւ։ Բողոքական հոգեւորականութիւնը կարող է, ինչքան կուզէ, որդի ունենալ. նրա կառավարութեան չեն ենթարկւում եկեղեցական գոյքերը, որ կարող էր նա իւրացնել։

կազմակերպութիւնները:

Եւ թէպէտ մինչնադարի առաջին շրջանում հոգևոր-իշխանական դասակարգի ձեռքում էր մեծ քանակ քաղաքների բացառութեամբ, բայց այնուամենայնիւ, ինչպէս ասացինք, կային շատ չքաւորներ, որովհետև նեղութիւններ, այրիներ և համաճարակներից մնացած որբեր,—նրանք ընտանիք չունէին պատսպարուելու համար,—իսկ պատերազմի ժամանակ մեծաքանակ կամ հեռաւոր տեղերից քշուում էին թշնամու արշաւանքից:

Այդպիսի թշուառներին օգնութեան հասնելը մինչև դարում համարուում էր եկեղեցական իւրաքանչիւր անհատի, հետևաբար և ամենախոշոր հողագործի պարտականութիւնը: Այդ պարտականութիւնը եկեղեցին կատարում էր ոչ թէ միայն մեծ բարեգործական հաստատութիւն, այլ, որովհետև նա պատկանում էր ունևորներին: Այդ պարտականութիւնը ծագում էր ոչ թէ մասնաւոր քրիստոնէական, այլ ընդհանուր մարդկային սկզբունքից, որ յատուկ էր բոլոր զարգացման ստոր աստիճանի վրայ գտնուող ազգերին:

Ուրիշների բաժին հասնելու ձգտումը յատուկ է բոլոր այն ազգերին, որոնց մէջ թագաւորում էին նախնական կոմմունիզմի հետքերը կամ գոնէ նրա աւանդութիւնները: Այլ և օտարերկրացին այդպիսի ազգերի մէջ այնքան հաղուագիւտ, ազգու երևոյթ է, որ մարդիկ չեն կարող անտարբեր վերաբերուել դէպի նա: Նայած նրա ծագման և վարմունքին՝ նրան ընդունում են կամ իբրև թշնամու կամ իբրև բարեկամի—ընտանիքի թանկագին անդամի, նրան կամ դլուխը կտրում են, կամ առաջարկում են տուն և դուռ, սեղան մթերք ևն:

Ընտանիքի կարիքներն լցուցանելուց յետոյ անտեսութիւնից աւելացածները մատակարարել ուրիշներին, պահպանուում է մինչև այն ժամանակ, մինչև որ գոյութիւն ունի այսպէս կոչուած ընական անտեսութիւնը, մինչև որ առարկաները տատանուում են ոչ թէ շուկա կամ պատուիրողների տները, ոչ թէ ծախելու, այլ սեպհական գործածութեան համար: Բարերարութեան այդ մինչոյը կշռում էր ամբողջ մինչին դարում, առ նուազն դիւղատնտեսութեան մէջ, որ այն ժամանակ վճռական նշանակութիւն ունէր համայնական կեանքի համար: Ինչքան արդիւնաբերութիւնը զարգանում էր, այնքան մեծանում էր հողատիրութիւնից ստացած աւելորդը:

Գիւղատնտեսական արդիւնքների ահագին չծախուած աւելացածները առանձնապէս ժողովուրդ էին խոշոր հողագործ-

նելն, թաղաւորներն, բարձր պաշտաւնութեան, եպիսկոպոսների և վանքերի ձեռքը։ Այդ եկամուտները կարող էին նրանց կերակրել։ Նրանք օգտուում էին այդ եկամուտներից՝ դրանցով պահելով բազմաթիւ դինուորներ, արհեստաւորներ,—այլ և անվերջ հիւրասիրութիւններ կատարելով։ Այն ժամանակ անվայել էր համարուում, եթէ մարդ մերժում էր կոմմնակի խնդրողանձնաւորութեան կերակուր և ըմպելիք։

Եթէ եպիսկոպոսներն ու վանքերը կերակրում էին քաղցածներին, հագցնում մերկերին, օթևան չունեցողներին տպաւորան տալիս, նրանք միայն այն էին անում, ինչ որ իւրաքանչիւրն էր մինչև դարում։ Տարբերութիւնն շատ մեծ էր,—որ նրանք իրրև ամենահարուստներ, ուրիշ անհատներից առաջ էին ընկնում։ Իսկ հիւրընկալութեան սովորութիւնը արագապէս ընկնում է, հէնց որ սկսւում է ապրանքների արտահանութիւն ծախելու համար,—գանազան նիւթերի շուկայ է դառնում։

Այժմ առանձին անտեսութիւններ հնարաւորութիւն են ստանում իրանց աւելորդները դարձնելու վոսկեբինելի առարկայ, այսինքն՝ ազգեցութեան և իշխանութեան այն աղբիւրը, որից չի կարելի չափազանց շատ ունենալ, որ չի քչանում, և որ կարելի է ժողովել։ Փոխանակ ձգտելու մարդ հանել ուրիշներին,—առատաձեռնութիւնը պահանջում է ապահովութեամբ։

Ինչքան շատ էր տեղի տալիս ընական անտեսութիւնը այսպէս կոչուած դրամական անտեսութեան, մի դործոցութեան, որ արագապէս տարածուեց Ծ-Դ դարուց սկսած Իտալիայից և Հարաւային Ֆրանսիայից ամբողջ Եւրոպայում,—այնքան աւելի են տահմանափակում ունեւորները իրանց հիւրընկալութիւնը և իրանց առատութիւնը։

Բայց նոյն չափով, ինչ չափով մեծացաւ աղքատների թիւը, ապրանքային արտահանութեան զարգացումը յառաջ է բերել վարձկան դասակարգը, որ արագութեամբ աճեց և շատ տեղեր նշանաւոր ծաւալ ընդունեց։

Նրա համար ամենալաւ ապաստարան էր վանքերի առատութիւնը։

Ամենամեծ ընկերութիւնները իրանց զարգացմամբ ծանրակշիռ են և վոսկեհատ հանգամանքներին այնպէս հեշտութեամբ չեն յարմարւում, ինչպէս առանձին անձերը*)։ Անտա-

*) Օրինակի համար ուշադրութիւն պէտք է դարձնել այն յատկութեան վրայ, որով մեծամեծ անդլիական ընկերութիւնները պահպա-

քակոյս այդ դրութեան մէջ էին նաև վանքերը: Նրանք ամենից երկար պահպանեցին կիւղացիներից տուրք հաւաքելը ընական քերքերով, նրանք իրանց հարևաններից աւելի դժուշացան դիւղացիների հողերը դրաւելուց և տուրքերը չավետանց չատացնելուց: Նրանք վերջապէս աւելի երկար, քան միւս ունևորները պահպանեցին իրանց հին առատութիւնը:

Բայց վանքերն էլ չէին կարող խուսափել նոր ժամանակի ազդեցութիւնից: Նրանց ընակիչներին էլ բռնեց վոգի ծարաւը. նրանց աղքատներին կերակրելը հետզհետէ վերափոխուեց աղքատներին «ապուր» բաժանելու:

Սակայն այնտեղ էլ, ուր նրանք պահպանեցին հին առատութիւնը, սա հետզհետէ անբաւական էր դառնում աճող ամբոխային աղքատութեան հետ կռուելու: Նորից աղքատութեան խնդիրը ծագեց և նորից կազմուեցան կոմմունիստական գաղափարները և ձգտումները:

Այդ գաղափարներն ու ձգտումները երկու ձև ընդունեցին: Ժողովրդի սոսին խաւերում վաղ ծագեց դգացմունքի մութ կոմմունիզմ, իսկ կրթուած և համաբձակ մարդասէրների շրջաններում վերջապէս կազմուեցաւ հմուտ կերպով մտածուած կամ վիրևիսովիայական կոմմունիզմը, որ մի ցնորք էր (утопизмъ):

Եթէ զննենք այս զուտ գրական տեսակէտից, առաջինը կիանգիսանայ frիստոճեական, իսկ երկրորդը պլատոնական կոմմունիզմի շարունակութիւն:

Բայց այդ երկու ուղղութիւնները իրանց նախորդներից որոշուում են էական կէտերում: Բանն այն է, որ նոր հասարակական այժ է ծագում և տիրապետում կոմմունիստական գաղափարներին, մի այժ, որի մասին ոչինչ չգիտէին թէ Պլատոնը և թէ հին քրիստոնեաները—վարձկան բանուորների դասակարգը՝ որևև արդիւնաբերութեան նոր միջոցի ներմ:

Թարգ. Ի. Ս.

Նում են իրանց հին քաղաքականութիւնը. միևչդեռ ամեն տեղ բանուորները շտապում են բաժանուել կուսակցութիւններից.

ԽՕՍՔԻ ԵՒ ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ *)

«Բանաւոր, գրաւոր և տպագրական խօսքն ազատ պէտք է լինի».—պահանջ՝ որ վաղուց զգացուել է և 200 ու էլ տարի առաջ արտայայտուել անգլիացի նշանաւոր հեղինակ Միլտոնի կողմից։ Ազատութիւնն ընդհանրապէս և խօսքի ու մամուլի ազատութիւնը մասնաւորապէս վաղ ժամանակներից սկսած գարձել է մտաւոր աշխատանքի նուիրած հերոսների հզէալը. մարդի անդատաստանի մշակների երազանքը։ Տանեակ տարիներ չարունակ կռիւ են մղել ազատութեան մարտիկները, արիւն քրտինք թափել, արցունքներով թրջել ազատութեան կաշկանդիչ բիւրտ չղթան և վերջ ի վերջոյ խորտակել։ Դաղափարական այդ կռիւը օր–աւուր ընդարձակուել, նորանոր վայրեր է նուաճել և վերջնական յաղթութիւն տարել ամբողջ արևմտեան Եւրոպայում, Ամերիկայում, Աւստրալիայում, Ճափոնիայում և վերջին ժամանակներս էլ Ռուսաստանում—մեզանում։

Սակայն ինչ է նշանակում խօսքի ազատութիւն.—խօսքի ազատութիւն ասելով՝ հասկանում ենք. որ ամեն մի անհատ իրաւունք ունի արտայայտելու՝ ինչ միտք որ ցանկանում, կամ հարկաւոր է համարում՝ առանց այդ մասին նախօրօք թոյլատուութիւն առանալու իշխանութիւնից։ Այս գաղափարի տակ հասկացուում է ոչ միայն բերանացի, այլ նաև գրաւոր խօսելու— ուրիշ խօսքով՝ մամուլի ազատութիւնը, որի զօրութեամբ իւրաքանչիւր մարդ ազատ է տպագրել տալու իւր ցանկացածն՝ առանց որ և է մեկից թոյլատուութիւն խնդրելու։ Այսպէս է հասկացուում ներկայումս խօսքի ու մամուլի ազատութիւնն այն բոլոր երկրներում, որտեղ վայելում են այդ արտօնութիւնը։ Մեզանում թէև հոկտեմբերի 17-ի Բարձրագոյն հրովար-

*) Աչքի առաջ եմ ունեցել Վ. Վոդովոզովի «Свобода слова и печати» յօդուածը։

տակով չնորհուել է արդէն այդ արտօնութիւնը, բայց դեռ ևս իբրև նորածին մանուկ անկերպարան դրութեան մէջ է գտնուում, այնպէս որ կարելի է միմիայն ենթադրական դատողութիւններ տալ նրա ապագայի մասին։ Ինչ վերաբերում է խօսքի և մամուլի անցեալ կեանքին՝ այդ մասին կարելի է մանրամասն և ամենատարած տեղեկութիւններ հաղորդել։ Այժմ մի յետադարձ հայեացք ձգենք մօտիկ անցեալի վերայ և աչխատենք ցոյց տալ, թէ որքան խղճալի և ցաւալի դրութեան մէջ էր գտնուում խօսքը (բանաւոր թէ գրաւոր) այդ մօտիկ անցեալում։

Շատ բնական ու միանգամայն հասկանալի է, որ այնտեղ, ուր թագաւորում է միապետի բացարձակ կամքը, ուր նրա ոչ մի քայլն ու գործը չի կարելի քննութեան ենթարկել, ուր նրա հրամաններն ու պատուէրները տառացի ճշտութեամբ կատարող բիւրօկրատիան աղատ է միանգամայն ամեն մի պատասխանատուութիւնից, այդպիսի երկրում խօսքի ու մամուլի ազատութեան մասին խօսք անգամ լինել չի կարող։ Ի հարկէ, ամենայն ազատութեամբ, առանց քաշուելու խօսել կարող եմ իմ ընտանիքում, չորս պատերի մէջ, իմ մօտիկ բարեկամների ու ծանօթների շրջանում, ինչ որ ցանկանում. խօսել կարող եմ այնքան, քանի դեռ ունկնդիր ունիմ։ Բայց ենթադրենք, թէ ես բժիշկ եմ և ցանկանում եմ պատմել-բացատրել հասարակութեան, թէ ինչ բան է խօլերան կամ ժանտախտը, թէ ինչպէս պէտք է պաշտպանուել բարակացաւից. ենթադրենք, թէ ես ճանապարհորդ եմ և ցանկանում եմ հաղորդել հասարակութեանն ստացած տպաւորութիւնների մասին. կարճ ասած՝ ուզում եմ մի հրապարակային դասախօսութիւն կազմել։ Բնական է, որ պէտք է դրա համար մի մեծ դահլիճ գտնեմ, յայտարարեմ, թէ այս ինչ օրն, այս ինչ ժամին, այս ինչ տեղում պէտք է խօսեմ այս ինչ նիւթի մասին. այնուհետև կը մնայ հասարակութեան կամքին. կ'ուզէ լսել ինձ, թէ ոչ։

Սակայն այդպէս էր, Ո՛չ.— հրապարակային դասախօսութիւն կազմելու համար պարտաւոր էի նախ և առաջ

դասախօսութեանս նիւթը դրաւոր կերպով ներկայացնել ուսումնական շրջանի հոգաբարձուին։ Վերջինս կարող էր թոյլ տալ կարդալու, կամ ոչ՝ չպատճառաբանելով նոյն իսկ մերժումը։ Կարող էր թոյլ տալ կարդալու երբեմն նաև առանց ձեռագիրը պահանջելու՝ բաւականանալով միմիայն վերնագրով կամ համառօտ ծրագրով։ Հոգաբարձուից թոյլտուութիւն առանալուց յետոյ, պէտք է դիմէի տեղի նահանգապետին, որի թոյլտուութիւնը ոչ մի կապ չունէր հոգաբարձուի թոյլտուութեան հետ. այնպէս որ նահանգապետն արգելում էր երբեմն հոգաբարձուի թոյլատրած դասախօսութիւնը։ Վերջապէս, երբ կարողացայ այդ երկու տեղից էլ թոյլտուութիւն առանալ, այնուհետև պէտք է դիմէի ոստիկանապետին, որ թոյլ տար դասախօսութեանս համար յայտարարութիւններ տպագրելու։ Այդ երեք անձնաւորութիւններից թոյլտուութիւն առանալը երբեմն 5—6 ամիս էր տևում, որի ընթացքում շատ անգամ հետաքրքրութիւնը և անպատակ էր դառնում դասախօսութեան նիւթը և խնդիր դասախօսն ստիպուած էր լինում երբեմն կամովին հրաժարուել մարտիրոսական չարչարանքներով ձեռք բերած այդ թոյլտուութիւններն արդիւնքից։ Պարզ է այստեղից, թէ որքան ամուր փականք էր դրուած մեզանում մարդկանց շրթունքների ու լեզուի վերայ և քանի՛ տակ ամուր շղթաներով կապկպուած ազատ խօսքը։

Սակայն սրանից լաւ վիճակի մէջ չէր գտնւում նաև մամուլը։ Յայտնի է, որքան մեծ դեր է կատարում ազատ մամուլն ազատ երկրներում. նա է ամբողջ հասարակութեան—որ նոյն է ասել ամբողջ պետութեան դեկավարն—առաջնորդը. նա է հասարակութեան կարծիքը. նա է ժողովրդի կեանքի հայելին։ Այդ անհրաժեշտ մեծ դերից զրկուած է մամուլն այն երկրներում, ուր պատուէրներն չէ վայելում նա. ուր դրաքննիչի գրչի երբեմն մի անվիճ շարժումը վայրկենապէս ոչնչացնել կարող է տարիներով չոր սեղանին կրծքով փարած անդուլ աշխատասիրի մտքի արդիւնքը։ Այնպէս էր ահա մեզանում։ Օրինակ՝ եթէ ցանկանայի տպագրութեան տալ որևէ գիրք, պարտաւոր

էի լոյս աշխարհ հանելուց առաջ ներկայացնել գրաքննիչ ատեանին։ Ռուսաստանի մեծ քաղաքներում — Պետերբուրգում, Մոսկուայում, Վարշաւայում և Տփղիսում կային (դուցէ դեռ էս կան) առանձին գրաքննական յանձնաժողովներ (կոմիտէտ), որոնցից իւրաքանչիւրը բաղկացած էր մի քանի ատիճանաւորներից, որոց պարտականութիւնն էր նայել բոլոր տպագրուելիք գրքերը և թոյլատրել, կամ արգելել տպագրելու։ Փոքր քաղաքներում — ինչպէս օրինակ Կիևում, Օդեսայում, Րիգայում և այլն գրաքննական յանձնաժողովների փոխարէն կային առանձին անհատներ — գրաքննիչներ, որոնք նոյն պարտականութիւնն ունէին, ինչ որ մեծ քաղաքների գրաքննական յանձնաժողովները։ Մի չարք ուրիշ քաղաքներում էլ գրաքննական պարտականութիւնը նահանգապետների վրայ էր դրած։ Այսպիսով Ռուսաստանում ոչ մի գիրք չէր կարող լոյս տեսնել, եթէ թոյլատրուած չէր այդ պաշտօնական անձանց կամ հիմնարկութիւնների մէկն ու մէկի կողմից։ Եթէ ցանկանայի որ և է օրաթերթ կամ ամսաթերթ հրատարակել, պէտք է անպատճառ թոյլտուութիւն ստանայի այդ մասին նեղքին գործերի նախարարից (այդ օրէնքը դեռ էս պահում է իւր զօրութիւնը)։ Վերջինս կարող էր կատարել խնդիրս կամ մերժել ըստ իւր հայեցողութեան՝ մերժման դէպքում չբացատրելով նոյն իսկ պատճառները։ Ենթադրենք, թէ ստացայ նախարարից հրատարակման իրաւունք. ինչ էք կարծում, կարող եմ այնուհետև հանդէսս տպագրել ինչ որ արդար և ճշմարիտ եմ համարում։ Ո՛չ, թերթի կամ հանդէսի իւրաքանչիւր համարը պէտք է ենթարկուէր գրաքննութեան և գրաքննիչի ազատ կամքից, արտադրութիւնից և բարեհայեցողութիւնից էր կախուած այդ թերթի կամ հանդէսի թոյլատրելն ու արգելելը։ Գրաքննիչն արգելել կարող էր, ինչպէս յաճախ պատահում էլ էր, կամ ամբողջ համարը կամ առանձին յօդուածները և կամ յօդուածներն այս կամ այն մասն, ինչպէս որ ցանկանար։ Այդ դեռ ոչինչ։ Գրաքննիչի թոյլ տալուց յետոյ էլ եթէ նկա-

տէլին, որ իմ հանդէսը կամ թերթը միաձակար մարքեր է բովանդակում և արձարձում, կարող էին դադարեցնել, իբրև պատիժ, մի առ ժամանակ, կամ ընդ միշտ Թերթեցէք Ռուսաստանի հայ թէ օտար մամուլի մօտիկ անցեալի պատմութիւնը և նման տուր երևոյթներ արձանագրուած կը գտնէք բազմաթիւ էջերում։

(Շարունակելի).

ՏՐԱՊԻԶՕՆԻ ՀԱՑ ԳԻՒՂԱՑՈՒ ԿԵԱՆՔԸ

(Շարունակութիւն)

Խաղողնուա հայերէն քառ. ևս չունին հայ գիւղացիք. Թուրքը իւզումլուճ կանեն, այդ տեղ յատուկ այդի չկայ և ոչ սարվինայ, այլ խաղողի մի վազ (որթ) կուղղէ տան շուրջը կամ անէն քիչ հեռուն դանուած անպտուղ բարձր մի ծառի վրայ· այդ վազը կը փաթաթուի, կը բարձրանայ նոյն ծառի վրայ, կը պատէ ծառի ճիւղերը մինչև գագաթը, շիւղեր արձակելով այս այն կողմ, կանցնի մի այլ ծառի վրայ, դայս ևս պատելով երրորդի մը վրայ, ապա չորրորդի, մի անգամ ևս տեսար որ մի վազը պատած է ամբողջ կարդ մի ծառաստան և ընձիւղները արձակած շատ հեռուն գտնուած անհպելի ճիւղերու վրայ, ուստի հնար չկայ խաղող քաղել։

Հինաւուրց խաղողի վազերը կան որ 100 տարեկան ծերուկներ անգամ չեն գիտեր թէ երբ անկուած են։ Այս տեսակ վազերը տարին մի անգամ երկնց վրայի խաւը կը թողուն, որը վերէն ի վայր թել թել կը բաժանուի, որը տեղացիք կը վերցնեն սման լուալու համար, կամ սմանի ըերանը կը դնեն, կաթը կամ այլ ծորուն նիւթեր քամելու համար։

Աղքատ գիւղացին հազիւ 1—2 վազ ունի, հարուստը 4—5 հատ։ Մի վազէն, երբ յաջող լինի, 10—15 ձիու բեռ խաղող կը քաղէ գիւղացին։

Խաղողի քաղը հետևեալ կերպով կը լինի·

Քաղողը երեք գործիքով ծառ կը բարձրանայ, մի գործիքն է տեռեսել կոչուած սակառը, որ մի մեթր երկարութիւն ունի,

ծայրը սուր — շաքարի գլխու ձևով, բերանը լայն և մի չուան հաստած, ուստի մի կոկառ (կեռ փայտ) կապուած: Երիրորդ գործիքն է ճիճկեանհն, որ երկար ձողուն է, ծայրը երկճիւղ. այս երկճիւղի ծայրերը իրար կը միանային, որ կտանայ բոլորշի ձև, այս բոլորշու տակէն կը կախէ տոպրակ մի: Երրորդ գործիքն է երկար կոկառը, որ ձողի ծայրն է, որով հեռուն գըտնուած խաղողի շիւղերը մօտ պիտի քաշէ ճիւթերը (ոդկոյզ) քաղելու համար:

Նախ քաղողը տերեւատելի կոկառը անցուց մի ճիւղի վրայ, տերէտելը կախ ընկաւ, մօտակայ խաղողները քաղեց, գետեղեց մէջը, ապա հեռուն գտնուած շարժուն ու կախուած շիւղերն երկար կոկառով իր մօտ քաշեց, նոյնպէս քաղեց, բայց այն շիւղերն որ ամրապինդ միանուածք էին ճիւղերուն, քաշելու ոևէ հնարաւորութիւն չկար. այդ տեղ ուղղեց ճինկեանէն, ողկոյզի տակէն վեր բարձրացուց ծայրի բոլորշին, այնպէս որ ողկոյզի կոթը բոլորշու ծայրի անկեան մէջ ընկաւ. ճինկեանէն քաշելուն պէս, ողկոյզը փրթաւ, ընկաւ տոպրակի մէջ, և այսպէս շարունակեց, մինչև որ տոպրակը լեցուեցաւ, յետ առաւ, գատարկեց տերէտելի մէջ, շարունակեց, մինչև որ տերէտելը լեցուեցաւ: Այս անդամ տերէտելը չուանով կախեց, իջեցուցած: Տերէտելի ներքին ծայրը սուր լինելուն մանր-մունր ճիւղերն ու շիւղերը այս այն կողմ մղելով ահեցաւ, իջաւ ծառի տակ, ուր դանուող մի ուրիշ անձ գատարկեց մեծ տակառի մէջ, թոյլ տուաւ վեր քաշելու և այսպէս շարունակեց, մինչև տակառը լցուեցաւ, ապա շալակելով տուն տարաւ. քամելու խաղողը լեցուց հայոի տաշտի մէջ, պահցուն կամ վաճառելուն տարաւ հովւատունն կորսպը որ մինչև ձմեռ պահէ:

Քաղողը մեծ նեղութեան մէջ է, նախ ծառի վրայ տանելուն տեղ պիտի անէ 30—40 կանգուն բարձրութեան վրայ. ճինկեանէն երկու ձեռքով ճիւղերուն ծայրը գտնուած ողկոյզներու կողմ պիտի ուղղէ. մեառմի պիտի քաղէ, այնպէս որ հատատարակշռութիւնը չպիտի կորսնցնէ, պիտի աշխատի ամեն տեսած խաղողը ճինկեանէի մէջ ձգէ. տակայն ի դուր, աւելի հեռուն տեսնի պէս դեղնագոյն հատերով խոշոր ողկոյզները, որ քաղուածներու 1/3 ը կը կազմեն, ազատ կը մնան, թռչնոց կեր լինելու, կամ ձմեռը ձեան տպիտակ տաւանի վրայ թափին, մանուկները հաւաքեն ուտեն մի մասն, միւս մասն ևս թռչնոց կեր լինին:

Տուն տարուած խաղողին մի մասը ձեռով քամեց. գինի, քացախ և ռուի պատրաստեց, մի մասն ևս սկսաւ հետզհետէ

շալակով կամ ձիով քաղաք տանել ու վաճառել։

Կը յիշեմ որ հօրեղբօրկինս մեծ կաթնատի մէջ լեցուց խա-ղողի քաղցունը, շորի մէջ փաթուքած մոխիր ու կոխեց մէջը, մեղմ կրակի վրայ դրաւ։ սկսաւ ամբողջ գիշեր խաուեցնել, որ թանձրացաւ, եղաւ ուռւի։ մի մասի մէջ ալ դդում չաղեց, այնպէս եփեց, ըուեչել չկնեց որ ձմեռը ուտենք։

Գիւղացին նաև կը տնկէ դամոնի, սալորի, սերկևիլի, հօնի, ղրնի, դեղձի ևլն. ևլն. պտղատու թուփեր, որը հազիւ 5—6 կանգուն բարձրանան, որոց մեծ մասը կը պատուաստեն։

Տունկերու մեծ մասը անտառէն արմատանան կանէ, տան շուրջը կը տնկէ, քանի տարի վերջը կը պատուաստէ։

Անտառներու մէջ ամեն տեսակ տունկ կայ. այդ ագռաւ-ներու շնորհն է, ընտանի ծառերու պտուղները ագռաւները խումբ խումբ եղած կը կրեն դէպի անտառը, ուր կը պահեն ձմեռուան պաշար. սակայն մի մասը խաունուելով զաղելներու, այն տեղ կը ծլին, տունկ կը դառնան։

Պատուաստ.—Գիւղացին ծառերը հետևեալ ձևով կը պատ-ուաստէ։

Վայրենի տանձը 1—2 կանգուն բարձր սղոցով կը կտրէ. խաչաձև փոքր լինչ կը ճեղքէ, ճեղքի չորս ծայրերը ընտանի ծառէ կտրած մի թիզ երկար բողբոջներու ներքին ծայրը կը մտցնէ, այնպէս որ բողբոջներու դրսի կեղևը հաստատուն ներ-քին—վայրենիի կեղևին վրայ, կամ մի ճեղք կը բանայ, երկու բողբոջ երկու ծայրերու մէջ կը հաստատէ. ապա վրան մամուռ կը փաթաթէ, մէջը և վերին երեսը փոքր լինչ հող կը լեցնէ, փոքր մամուռ ևս կրկին վրան կը փաթաթէ, վարէ թելերով կը կա-պէ։ Մամուռը և հողը խոնաւ կը պահեն պատուաստի վերաւոր մասը, որով շուտ մատղ (երկու բացուած ճեղքեր աճելով իրար հպուիլ) կը կապէ։ Այնուհետև գիւղացին կը նայէ պատ-ուաստանեղու աճելուն, եթէ չորս բողբոջներն ևս աճեցան, վայ-րենին ևս հաստ է, կարող է աճեցնել, կը թողու, ապա թէ ոչ, մէկը կամ երկուքը կը կտրէ։

Շատ անգամ ընտանի բողբոջներու ներքին ծայրը կը լարեն կաղամբի կոթի ներքին կարծր մասի մէջ, վրան հող կտան, կաղամբի կոթը թէ սրչա դէմ է և թէ երկար մէջէն անխուռ, որով բողբոջի ներքին մասը կաղամբի կոթի մէջ արմատներ կը ձգէ. կտճի ատանց վայրենիի վրայ պատուաստելու։

Պատուաստի ամենապէսին եղանակն է այս։

Պատուաստաններու մէջ ամենադժուարն մարշմոկիի պատ-ուաստանն է, որուն շատ հմուտ վարպետ պէտք է։

Ջղընկեն ևս, որուն մուտմուկ կսեղմեն, ինքը սերկևիլի թվիէն աւելի վտքը, պատուղն ևս սերկևիլի ձև ունի, սակայն խորտ ու բորդ չէ, մեծութիւնն ևս ընկուզի չափ կամ աւելի մեծ և կամ փոքր: Այն որ պատուաստած է, խոշոր կը լինի· վայրենին վտքը: Մէջը 5—6 երկարաձև կարծր կորիզներ ունի, երբ հասնի մուգ կարմիր գոյն կառնայ, որպէս վտած տանձի, միսը մեղրի նման ծորուն վճճակ մը կառնայ, երեսը քարակ շագրիկով պատած: Թէ կուտեն և թէ կը վաճառեն:

Ինչպէս պատուղն այնպէս ևս տերևները ու թփերն սերկևիլենիի նման են, սակայն շատ վտքը:

Դամոնի քանի տեսակները կան, մանր և խոշոր պտուղ կառնան· երկուքն ևս ունին ոսկրատակ ու սև տեսակները, պտուղները կլոր չեն ինչպէս ուալոլը, այլ երկարաձև, մի կողմը ճեղքուածի պէս ներս մտած:

Սալորենին նաև ունի բազմաթիւ տեսակները սև, կարմիր, դեղին, կանանչ մխրատգոյն ևն· գոյներով պտուղ կտայ որ կլոր է, թթու և քաղցր: Սորա պտուղն ևս թէ կը վաճառեն և թէ տան համար կը գործածեն:

Է.

Վայրենի ծառեր եւ աճատ.

Ինչպէս տտացի, հայ դիւղացիք ծովեղերքէն հեռի բարձր, անտառավայրերու մօտերը կը բնակին մեծաւ մասամբ· իր ամենայն ինչը իր տահմանին մէջն է· իր անտառը, կաղնուտը, տնկարանը, արտն ևն· իր անտառներն ևս յատկացուած տահմանէն դուրս չեն գար:

Գիւղացու տան մօտ տնկուած կան թեղի, հաղի, մանի, պզխի, խոպկազնկու կուբնի ևն· անտառային ծառեր· ոչ մէկ պտուղ չեն տար· քանին տնկուած են վրան լաստղի որթ տալու համար· քանին ևս յատելու տերևները անասնոց կերցնելու համար: Թեղին քանի յօտեն, տերևները կը լաւանայ, անտառնք ուտելով կթի շատ կտան պզխին ևս ցանցառ տերևներ ունի, լաստղի որթը վրան չաւ կածի, վրան պի թէ որթի քնձիւղները

և թէ խոպոզը շուքն տակ չընկնելուն՝ լաւ կածի, նոյնպէս է մանկան, որ հասկի մը տեսակն է։

Տանը մօտ գտնուած անտառակները ու հեռուն գտնուած անտառները մէջ կան քաղմատեսակ ծառեր. այս ծառերէն կօգտուի գիւղացին, թէ պատուղներէն. թէ տերևներէն և թէ բողբոջներէն ու փայտէն։

Մաշմրդին, որ անտառները մէջ քաղմաթիւ է. ծառերէն ընտիր գերան ու տախտակ կը շինեն. մաշմուրգը առատութեամբ կը հաւաքեն, կուտեն կը վաճառեն և կամ շորան շինելով կը չորացնեն. ձմրան կը խաշեն, կուտեն, տերևն ալ օգտակար է։

Ծուաղնին, որ թէև մանր պտուղ կուտայ. սակայն շատ համեղ է, քան ընտանին ևն։

Անպտուղ ծառերէն քանիին թէ տերևները և թէ փայտը օգտակար է. թեղիին թէ տերևները պոյզեն անասնոց կերը պատրաստելու համար կը չորացնեն. փայտէ ալ տաշտ, դայան, կահեր կը շինեն։ Նոյնպէս է նաև խոզկաղնին ևն։ Կաթնատեր-պին որ թերևս հերցին է. նոյնպէս կը կաթոտ լայն տերևներով օգտակար է անասնոց և մարդոց իր տախտակներով։ Կրվընին (չամ) որ առատ ձուր կուշտած խէժը կտայ, փայտը դիւրավառ խէժոտ լինելու, մարխ կամ կալչան կը պատրաստեն կրակ վառելու համար. տեղ տեղ իբրև ճրագ մի թիզ մարխի ծայրէն կը վառեն, որ 1—2 ժամ առատ լոյս կը վառի. սակայն ծուխ շատ կտայ։ Սորա խէժը որ փուքեսով կը հոսի արմատի շուրջը, ձուխ կատուի. շատ մաքուրները, որ պատանիք ու աղջկունք իբրև ծամոն կը դործածեն—կիվ կատուի։ Այս ծառի բունը գերան ու տախտակ կը շինեն. իբրև վառելիք կը դործածեն։

Աճրին ու լորին անտառները ամենահասկայ ծառերն են. առնցմէ ընտիր ածուխ կը պատրաստեն. քաղաք կը տանեն վաճառելու։

Վայրենի կաղնին, որ անտառները մէջ լաւ կածի. թէ պատուղն և թէ բողբոջները օգտակար է. այս թռչուին բողբոջներէ ծօն կը հանեն. այլ և այլ տեսակ սակառներ կը հիւսեն. որոյ վրայ առանձին պիտի խօսիմ։

Լաշին, որ թռչուի է, ձմեռն ալ կանաչ է, մեծ տերևները թէև անասունք չեն ուտեր. սակայն իւրաքանչիւր ճիւղի ծայրը գըտնուած՝ բոլորշի շարուած տերևները մնասին կը կտրեն, կը տաքայնեն. օրորոցի մէջ երեխայոց նոտատեղի տակ կը դնեն. ճըկուն բուներէն աթոռներ ու թիկնաթոռներու ոտք կը շինեն. մեղուները այս թիւրի մեծ ու կապոյտ ծաղիկներէն կօգտուին.

առատ մեղը կը պատրաստեն:

Հօնին, որ դգլճուխ կասեն գիւղացիք, անտառներու մէջ շատ առատ է. ունի շատ կարծր փայտ. մեծ թուփերու կարգէն է, առատ պտուղ կտայ. կայ ընտանին, որ ձիթապտուղի մեծութեամբ պտուղ կտայ. աւելի երկար ու կարմիր, աւելի կարծր կորիզ ունի: Այս ծառը դարնան ամենէ շուտ կը ծաղկի, սակայն պտուղը ամենէ ուշ կը հասնի. որու համար տեղացիք «սատանաի խափող» կասեն: Կասեն թէ սատանան շուտ ծաղկիլը տեսաւ, գնաց տակը նստաւ, որ պտուղը շուտ ուտէ. սակայն տեսաւ, որ ամեն պտղեղենէ ուշ հասաւ, բարկութենէ պայթեցաւ:

Անտառներու մէջ թափած այս թթուաշ հոնիկի պտուղը մեծ քանակութեամբ կը հաւաքեն, պատրեղ կը շինեն, կը վաճառեն. ընտանին ևս քաղաք տանելով կը վաճառեն:

Կայ նաև անտառի մէջ գտնուի տեսակ մի թուփ, որ տերևները չթափիր. եւսկի պտուղէն աւելի խոշոր նոյն ձևով պտուղ կտայ. այնպէս առատ որ ճիւղերը գետին կը խոնարհեցնէ: Այս պտուղը կակուղ լինելուն գոնա եմելի (ծերի ուտելիք) կասեն. քաղցը ու տտիպ է. այնչափ յարգի չէ. միայն վերջերս սովորեցան այդ պտղէն օղի հանել մեծ քանակութեամբ:

Պղղին ևս որպէս տան շուրջը՝ այնպէս ևս անտառներու մէջ կաճի, հսկայ ծառ կը դառնայ. փայտը կակուղ է. վառելու համար այնչափ յարգի չէ. պտուղ երբէք չտար. ծառի ընկէն տաշտեր պնակներ ևն. կահեր կը շինեն: Սա ևս այն ծառներու կարգէն է որ չճայթիր: փայտը կամուրջներու հիմերու տակ կը դնեն. ջրի մէջ աւելի կամրանայ չփթիր, որա համար «պառկէ պղպէ պառկէ, լինչու որ ջրի մէջ ես», առածը յօրինած են:

Բայկառին ևս թուփերու կարգէն է. գաւինի նման մշտադալար տերև ունի. սակայն տերևներու եղերքները փշոտ է. ձմեռը երբ անտառնք կերը չունենան, այս ծառերու տերևները կը կերցնեն:

Կաթնաերեպղին մէջակ ծառ է. ճիւղերը տարածուած՝ մանր երկու ափի չափ լայն կլոր տերև ունի. որ յղկուած անօթի նման կանանչ փայլ կտայ. եզերքները քանի տեղ քիչ ճեղքուած և կաթոտ, որ անտառնք շատ կը սիրեն:

Լորին աւելի մեծ ծառ է. աժրիլի մի տեսակն է. սակայն մեծութեամբ աժրիլին չհասնիր. որա տախտակը յարգի է. որանէ ևս այլ և այլ կահեր կը շինեն գիւղացիք երբեմն գործածութեան համար:

Ա.ժըկ հակայ ծառերը, որ մեծ անտառներու խորը. առանձին ընդարձակ վայրեր գրաւած են. շատ քիչ անգամ պէտք կը գան գիւղացիոց. թէև վայրը վառելու կգայ. սակայն անհպելի վայրեր աճած լինելոյն գիւղացիք հազիւ ածուխ շինելու համար այս ծառերուն մէջ ձեռնամուխ. տախտակ ու տան կահեր շինելու յարմարութիւն չունի. եթէ շինուեն ևս չորացածին պէս կը ճեղքուին: Ա.յս հակայ ծառը մանր շագանակի կիստս մեծութեամբ պտուղ կտայ, որ խոզերն ու արջեր կուտեն, որուն կրնցողուլ կսանուի:

Տոխլեն, որ անտառային միջոր ծառերու կարգէն է ունի կարծր վայտ. 8—10 կանգուն բարձրութիւն. ամառ ձմեռ շատ կանաչ է. կը գտնուի աւելի ծովեզրեայ անտառներու մէջ և դանդաղ կաճեն. վայտի արժէքը մեծ է, եւրոպացի վաճառականները կը գնեն:

Վայրենի զէյթին, որ առհասարակ ժայռոտ տեղեր կածի, թուփերու կարգէն է. պտուղ չտար. ձմեռը տերևները կանանչ. ձմեռն երբ անասնոց կերը պակսի, այն թփի ճիւղերը կը յօտեն անասնոց կը ձերջնեն:

Անիծի.—Ա.յս ծառն ևս մեծ ծառերու կարգէն է. նման մանի և հացի ծառերուն, որը գերանի և մարդակի համար կը պիծածուի, նաև վառելու: Սորան ծընծղի ևս կսուի:

Ֆօծղի.—ծառ միջակ մեծութեամբ:

Գերմանրի.—Մեծ թուփ, փոքր ծառերու կարգէն. միջը դատարկ, մանր, մատի հաստութիւն ունեցող ճիւղերը կը կարեն. մատմատ բաժանելով մատուր կը շինեն.

Վիսկին ևս ծառ է. ըստ թուրքաց կալպաղաճ, աղանի:

Ղազըրթենի.—ծառ. թուրքերը ագրապ ադաճի կսուեն.

Ծորենի.—Անտառային թուփ. մասրի թփի չափ. 3—4 կանգուն կը բարձրանայ. կեղևը ոսկեգոյն. վայրի մէջ դեղին. պտուղը լատդղի փոքր ողկոյզի չափ և նոսր: Հատերն երկարաձև և քաղցր, քիչ թթուաշ. ախորժելի համ ունի. նռան հատերու պէս ջրոտ, բայց սերմերը շատ մանր:

Ծըրթուենի.—ծառ նման թեղիի (դոլմատ ադաճ). կոկ տերևները եղևնիի նման. պտուղը նոյնպէս կանանչ, անդր դեղին և վերջը կարմիր դոյն կստանայ: Ա.յս ծառի մոխրի հետ կարծր, ձուլ կը շաղախեն, երբ պեղ վերքի վրայ կը դնեն, որ անմիջապէս ցաւը կը մեղմացնէ:

Կընօլ.—թուփ է, ունի լայն տերև, թղթէ աւելի բարակ և ընկուզի մեծութեամբ սերմնարան, որ մէջը մեծ մասամբ դատարկ է, միայն մի մեծ կորիզ ստորին մասի մէջ պեսեղուած

է, երկու կեռասի կոթիզի մեծութեամբ։ Այս կոթիզները և դա-տարկ են և ոպիտակ, գնոս երեխայք կը հանեն, համբիչ կը չի-նեն, սերմնարանն ևս տիերու մէջ կը դնեն, միւս ձեռներով վրան կը զարնեն, մէջը օդով լցուած վնելուն կը պայթի։

Հորցենի.—Ծառ։

—Սեղի.—Դեղձի թփի չափ կաճի ու կը չորանայ. դեղձը ոպիտակ, կակուղ և խաւ-խաւ. վայրէն իբրև գիը գործածելու համար վրան տաք հաց կը փաթթուեն, որ և կանուչ գոյն կը-տանայ, կը փայլի. ան սիսեռի հատի չափ կարմիր գաղջը պտուղ կտայ. տերևն ևս փշատի տերևի նման. դեղևն ևս իբրև աման-լուայ, կամ սրբիչ կը գործածեն, ինչպէս խաղողի վազի դեղևն։

Տօռնի.—Թուփ է 2 կանգնոն բարձր, ասեղաձև տերևներ ունի. տաճ. իլղուն։

Ցրտերեսկի.—փոքր ծառ, լայն ու պատառոտած տերև-ներ ունի։

Այս մեծ ու հսկայ անտառները կ'ունան Տրապիզոնի նա-հանգին բարձր մասը, որ կը տարածուին յարևմուտ մինչև Կերա-սոն. յարևելս՝ Սև գետ, համշէն և մինչև Ճորոխ։ Այս ընդար-ձակ անտառներն, որ հսկայ ծառերով պատած են ամեն ուրեք, դարերով մարդու երես տեսած չեն. հազիւ տեղ տեղ արահետ մը կը գտնես անց ու դարձ անելու. մեծամեծ ծառեր, որ ուղղուած են յերկինս, պատել կը նկատին երկնից կամարը. հըս-կայ ճիւղերը ոտնձգական տարածուած լրտը խառնուած լինե-լով արեգական ոչ թէ ճառագայթները չեն թափանցներ, այլ կարծես թէ թանձր ամպամած մթնոլորտի մէջ կը գտնուին։ Բնութեան մէջ մահն չատ քիչ անգամ կպզդէ այս հսկայ ծառե-րուն միայն հայծառն է, որ երբեմն ահագին կոտրածներ կանէ. 10—20—100 ծառ մի ուխթարթի մէջ գետին կը տապալէ մեծ ճարճատիւնով և լրտը վրայ կը կոտրտակէ։ Դու գտնէ մի անգամ ականատես լինելը, որպէս ես եղած եմ, պիտի տեսնէիր մեր նստած տան հանդիսքը բնութեան այս մեծ պատերազմը ինչպէս կը վերջանայ. հայծառի խլացուցիչ գոռոցը, հսկայ ծառերու տապալման ճարճատիւնը լրտը խառնուած, ամբողջ ձորը կը դղրդեցնեն, այնպէս որ մեծ սոսկման ենթարկուելով ամբողջ մարմնով պիտի քնամնէիր։ պիտի տեսնէիր թէ մէկը միւսի ետևէն ինչպէս ծառերը արագ արագ գետին կը չարուին. կա-ղերու վերայէն խոր վիմաձոր մէջ գլորուելով լրտը վրայ կը կոտրտակուին, ծառէ ծրուր կը կազմեն։ Եթէ այդ տեղէն լինէր քո ճանապարհն այլևս չպիտի կարողանայիր անցնել. ուրիշ ճա-նապարհ ևս հարկ ուրեք ճարուի, պիտի ստիպուէիր օրերով

յետ դառնալ. մի այլ ճանապարհ որոնել քեզ համար: Իսկ եթէ միանգամայն քո առաջը ևս պատահած լինէր այս բանը. դու յաւիտենական բանտարկութեան դատապարտուած պիտի լինէիր կամ հապար ու մի տանջանք կրելով և ցմահ մաքառելով թերևս ազատուէիր, եթէ գազանաց ճիրաններուն չմատնուէիր:

Այս անտառներու մէջ դարեր տեսնող հինաւուրց ծառերու վրապարներն ևս պատապարան են անցորդներուն, որք անձրևային եղանակի մէջ այնտեղ կապաստանին: Այսպիսի անտառներու մէջ, ես Եօմուրայէն և Սիւրմենէ գնալու միջոցին Մատուռի անտառներու մէջ խիստ անձրևի բռնուած լինելով երեք անձով երկու ձիով մի ածրի ծառի վրապարի մէջ ապաստան գտած եմք:

Մեծ անտառները, որպէս ասացինք, քաղաքի չորսկողմեայ 1—2—3 աւուր ճանապարհ հեռի կը գտնուին. շատ անդամ մարդոց անպէտք, վասն զի վայտեղէն նիւթեր հայթայթելու համար ճանապարհ չունեն. գիւղացիք աւելի մօտակայ անտառներէն կօգտուին. այն որ մէրէ (Թագաւորական) է, կամ ամեն մի տուն իր սեփական մորիէն, որ տանը մօտ է: Գիւղացին ուզած ծառը կացինով կը կտրէ արմատի մօտէն, կը տապալէ և կը թողէ որ չորանայ, ապա դերան, տախտակ, տաշտ ևն. կահերը կը շինէ, քաղաք տանելով կը վաճառէ և կամ մեծ քանակութեամբ ածուխ կը պատրաստէ. ամբողջ քաղաքի համար երբեմն վառելիք կը դործածուի. թէ տներու մէջ և թէ արհեստաւորները. վառելիք վայտը միայն փուռերու համար կը դործածեն: Քաղաքացին իր սենեակը ածուխի կրակով կը տաքացնէ, նոյնպէս լուացքը, կերակուրի պատրաստութիւնը, հեշտաեռը ևն. ևն. ածուխի կրակով պիտի անէ. այնպէս ևս դալբինը, պղնձադործը, ոսկերիչը, ևն. ևն. ածուխ կը դործածեն, որով մեծ քանակութեամբ գիւղացիք ածուխ կը տանեն քաղաք, կը վաճառեն: Մեծ մասամբ չալակով կը տանեն:

Այս տեսակ անտառականներու կամ մօրինեներու գիւղացին ցախուս կոչէ, որ երեն յատուկ է. լերացնող վաւերագիրը ունի կառավարութենէն առած, որու համար տարեկան տուրք կը վճարէ. ոչ ոք իրաւունք չունի սորա սահմանին ծառ մի կտրելու: Գիւղացին միշտ երեն յատուկ անտառին, որ ինքնաբոյս է, խնամ կը տանէ, աւելորդ ծառերը կը կարէ, կը յօտէ. երբեմն ևս ամբողջ անտառը ածխագործներուն կը վաճառէ. ածխագործը ամբողջ անտառի ծառերը արմատէն կը կտրէ. ածուխ կը շինէ: Հետևեալ տարին կարուած անտառի բողբոջները կաճին.

դիւղացին անտառն չթողուը մէջը մինչև ծողբոջները 4—5 կանգուն բարձրանան. միայն աւելորդ ընձիւղները կը կտրէ. անտառոց առաջ կը դնէ, որ ուտեն, կամ անտառակի մէջ մի յարմար վայր կը թաղէ. անտառները վրան կը հաւաքէ, որ ուտեն. աւելորդ յանձն ևս տուն կը տանէ վառելու համար:

Ա՜հա ձեզ անտառացին ծառերը ու թուփերը, որով Տրապիզոնի հայ գիւղօրէից մօտակայ և հեռաւոր անտառականները ու անտառները պարզարած են և ի վերջաւորութեամբ հայկական կինքը պահած են: Շատ հարուստ է առանց ի վերջաւորութեամբ ծառ. կամ թուփ նշմարել. եթէ լինի ևս օտար բառ լինելը խոհոյն կը հասկացուի. վասն զի յոյներ և թուրքերը նոյն բառն ևս կը դործածեն. մինչդեռ նոքա ի վերջաւորութեամբ ծառի անուն չունին երբէք:

Մօտակայ անտառներն, ուր կարողացած են հայ գիւղացիք թափանցել, ծառերն ու թփերն իրենց պիտոյից համար դործածել, փշերը ջարդ ու վնասդ անելով արահետներ բացած են. ամրան ժամանակ մի դրախտ է. զանազան վայրենի և մշակովի ծամոյն ընական համ ունեցող զանազան մրգեր աչ ու ձախ ամեն կողմդ կը տեսնուին. իսկ դու ինչ յանկութեամբ չատացած ես անտառը, քեզ հաճելի պտուղ արտադրող ծառերու կամ թփերու խմբի կողմը վազէ:

Ինչ ես սոյն հարևանցի նկարագրութիւնս թողլով կսկսիմ հայ ժողովրդեան իսկական երկրագործութիւնը—չարքաշ կեանքը նկարագրել որչափ որ իմ ուժերը կը ներէին:

Ս. Հայկունի.

ԲԱՑԻԱՑ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԼՐԱԳԻՐ
(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՅ **1906** ԹԻՒԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՈԳՐԱՄՈՎ, ԵԻ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի յաջորդող օրերից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ութ ամսվանը՝ 8 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չոր ամսվանը՝ 4., երեք ամսվանը՝ 3., երկու ամսվանը՝ 2., և մի ամսվանը՝ 1 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Ամերիկայ բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար, Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» դրկել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնակայա վողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրկելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», *իսկ արտասահմանից* «TIFLIS, Rèdaction du journal MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՂԲԻՒՐ

XXIV *տարի* 1906 *թ.*

Պատկերազարդ ամսագիրը 1906 թ. հրատարակվելու է նոյն ուղղութեամբ, ծրագրով և աշխատակիցների մասնակցութեամբ ինչպէս անցած հսկեերեք տարիներ:

ՏԱՐԱԶ

XVII *տարի թ.* 1906

ՏԱՐԱԶԻ *տարեկան գինը* 6 *ր.*, *արտասահման* 10 *ր.*։ ԳՐԷՄԻԱՆ *ատանում են մխիթյան նրանք, որոնք բաժանորդ են Աղբիւր Տարագին և վճարել են* 10 *ր.* (*արտասահմանում* 18 *ր. կամ* 50 *ֆր.*)։ Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում։

Հասցէն Тифлисъ редакція журнала ТАРАЗЪ. *կամ* Tiflis (Caucase) Rédaction de la Revue TARAZ.

Բացուած է „ՆՈՐ-ԴԱՐ“-*ի բաժանորդագրութիւնն առաջիկայ* 1906 *թուի համար Բաժանորդագինն է պոստի ծախքերով* 10 *րուբլի։*

Հասցէն՝ պոստով. Тифлисъ, Редакція «Нор-Даръ». *Արտասահմանից՝* Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Թիֆլիսում բաժանորդ են գրւում խմբագրութեան գրասենեակում՝ Կրիբայեդովսկայա փողոց տ. № 14, ներքին յարկը։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՇԱԼՈՅՍ“

գրական հասարակական, քաղաքական, տնտեսագիտական պատկերազարդ օրաթերթի,

1906 *թուի համար։*

(*Տարեկան բաժանորդագինը* 7 *ռ.*)։

Հասցէն (Թիֆլիզ, Գանովսկայա փող. № 11). *օտար քաղաքներից պէտք է դիմել.* Тифлисъ, Редакція газеты «Аршалуйсъ» *կամ* Tiflis, Rédaction du Journal «Arschalouis».

Открыта подписка на 1906 годъ на «ЦЕРКОВНЫЙ ВѢСТНИКЪ» и «ХРИСТІАНСКОЕ ЧТЕНІЕ» съ приложеніемъ. Подписная цѣна за Церковный Вѣстникъ и Христ. Чтеніе 8 рублей, съ приложеніемъ 9 рублей.

Адресъ: Петербургъ. Редакція Церковнаго Вѣстника и Христ. Чтенія.

1—3.

Վաճառումից դոյացած ամբողջ գումարը յատկացուում է Բագուից Թիֆլիս գաղթած չքաւոր հայ գիմնազիստ աշակերտների ու աշակերտուհիների օգտին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ ԵՒ ՎԱՃԱՌԵԼՈՒՄ Է

ՊՐՈՖ. Ա. ԿՐՒՄՄԱԿԻ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆ ՈՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՆ

Հեղինակից յատուկ Թոյլատրուած Թարգմանութեամբ

ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

(*Ժզ+170 երես, Գինը* 60 *կոպ.*)

Դիմել Թիֆլիսի Գրավաճառներին և Թարգմանչին՝

Св. Эчміадзинъ Архимандриту Бабкену

Ս. Էջմիածնի տպարանում լոյս են տեսել եւ վաճառում են

		Ր.	Կ.
1.	Ժամագիրք մեջադիր (կազմած)	2	—
2.	Ժամագիրք գրպանի (կազմած)	1	50
3.	Մեղուաբուծութիւն Գ. Ղազարեան . . .	—	50
4.	Դաւիթ Հարքացի. Գ. Տ. Մկրտչեան . . .	—	50
5.	Աղէքսանդր մեծ թարգ. վրթանէս քհ. Մովսիսեան	—	50
6.	Հայկականք Գ. Տ. Մկրտչեան	—	50
7.	Աստուածունչ թէ՞ մարմնային. թարգ. Մամբրէ վարդ.	—	3
8.	Բանաստեղծութիւնները և կիրակոսի հարսանիքը. գրաշ. Ներսէս Տ. Աւետիքեան . . .	—	50
9.	Հոգեբանութեան հիմնական գաղափարների մասին. խմբագրութեամբ Ս. Տիգրանեանի . . .	—	40
10.	Մարդուս շա՞տ հող է հարկաւոր թարգ. վրթանէս քհ. Մարգարեան	—	5
11.	Հազար ու մի խաղ. Կոմիտաս վ. և Մ. Աբեղեան Ա. յինենակ	—	15
12.	Նոյնը Բ. յինենակ	—	20
13.	Ի՞նչ է ճշմարտութիւնը. թարգ. Մամբրէ վարդ. .	—	10
14.	Բարի սերմերը թարգմ. Մամբրէ վարդ. . .	—	10
15.	Էջմիածնի ծոցի օրացոյց 1906 թուականի . .	—	20
16.	Ծուցակ ձեռագրաց Խաչիկ վ. Դադեան . .	2	—
17.	Գեղցեր. պատմութիւն Բիւզանդական կայսրների թարգ. Մեսրոպ վարդապետ	1	—
18.	Խոսրովիկ թարգմանիչ և եկեղեցաբանութիւնք, Գարեգին վարդ. Ծովսէփեան	1	20
19.	Հայոց նոր վկաները, Մանանդեան և Ամատեան, գիտական	3	—
20.	Նոյնը ժողովրդական Ա. հատոր . . .	—	50
21.	» » Բ. հատոր . . .	—	50
22.	Համառօտ տեսութիւն Հայրապետական Աթոռի մասին. Ծուսիկ եպիս. Տ. Մարգարեան . . .	—	30
23.	Ջէմս ըրայս. Կրօնը և եկեղեցին Ամերիկայի Միացեալ Նահանգներում. Թ. Ե. Ծ. վ. Մ. . . .	—	25
24.	Տօլստոյի երկերի ժողովածուի առաջի գիրքը՝ Կրէյցերի Սօնատը, Կրէյցերի Սօնատի վերջաբանը, Կանանց և Սէր Ե. Ծ. վ. Մ.	—	60

ԱՐԱՐԱՏ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

1906

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆՆ Է՝ Ռուսաստանում 4 ր. Արտասահմանում 5 ր.

Խնդրում՝ ենք Արժ. Գործակալներին յայտնել այն բաժանորդների ճիշտ հասցէները՝ հոգեւորական թէ աշխարհական, որոնք կարող են իրենք անմիջապէս կամ մի ուրիշի անունով ծրարները ստանալ փոստից։ Բոլոր այդպիսիներին «Արարատ»-ը կուղարկուի առանձին ծրարներով եւ առհասարակ նորա ցրումը կանոնաւորելու համար ամեն հոգ կտարուի։

Հասցէն՝ Св. Эчміадзинъ, Типографическому Комитету

Արտասահմանի համար՝ Rédaction de la Revue „Ararat".
Etchmiadzine (Caucase)